ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԶԵԿՈՒՅՑԸ “ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ” ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ, ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ 2009-2010թթ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

II ՀԱՏՈՐ

ԵՐԵՎԱՆ
2011

Սույն զեկույցը պատրաստվել է Հելսինկյան Ասոցիացիայի կողմից “Մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում” ծրագրի շրջանակներում՝ Հայաստանում ԱՄՆ Դեսպանատան և Ժողովրդավարության Ազգային Աջակցության ֆոնդի ֆինանսական աջակցությամբ:

© Հելսինկյան Ասոցիացիա 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության Քրեակատարողական Համակարգը 2010 Թվականին……3
2. Հայաստանի Հանրապետության Առողջապահության Նախարարության Հոգեբուժական Բժշկական Կենտրոնները և Հիվանդանոցները 2010 Թվականին……..105
3. Արդար Դատավարության և Արդյունավետ Պաշտպանական Միջոցների Իրավունքը……....133

* www.hahr.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ

Բովանդակությունը

Ներածություն

1. “Նուբարաշեն” քրեակատարողական հիմնարկ
2. “Դատապարտյալների հիվանդանոց” քրեակատարողական հիմնարկ
3. “Վարդաշեն” քրեակատարողական հիմնարկ
4. “Էրեբունի” քրեակատարողական հիմնարկ
5. “Կոշ” քրեակատարողական հիմնարկ
6. “Աբովյան” քրեակատարողական հիմնարկ
7. “Սևան” քրեակատարողական հիմնարկ
8. “Գյումրի” քրեակատարողական հիմնարկ
9. “Արթիկ” քրեակատարողական հիմնարկ
10. “Վանաձոր” քրեակատարողական հիմնարկ
11. “Երևան-Կենտրոն” քրեակատարողական հիմնարկ
12. “Գորիս” քրեակատարողական հիմնարկ

Առաջարկություններ

Ներածություն

Սույն զեկույցը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում ուսումնասիրություններ իրականացնող “Հելսինկյան Ասոցիացիա” իրավապաշտպան հասարակական կազմակերպության՝ 2010 թվականին իրականացրած մոնիտորինգի արդյունքում: Զեկույցն արտացոլում է Արդարադատության նախարարի 01/620-10; 20/04/2010թ. գրության համաձայն 2010 թվականի հունիսի 1–ից մինչև տարևերջն ընկած ժամանակահատվածում իրականացված մոնիտորինգի տվյալները և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում, մասնավորապես՝ “Նուբարաշեն”, “Դատապարտյալների հիվանդանոց”, “Վարդաշեն”, “Էրեբունի”, “Կոշ”, “Աբովյան”, “Սևան”, “Արթիկ”, “Վանաձոր”, “Երևան-Կենտրոն”, “Գորիս” քրեակատարողական հիմնարկներում, առկա խնդիրները:

Մոնիտորինգ իրականացնող խմբի կազմը. Միքայել Դանիելյան, Արսեն Բաբայան, Նինա Կարապետյանց, Արման Վեզիրյան, Գուրգեն Պետրոսյան:

Զեկույցում ներկայացված տվյալները տրամադրվել են ՔԿՀ-ների պետերի և համապատասխան բաժինները ղեկավարող տեղակալների կողմից: Այս զեկույցով ներկայացվում է քրեակատարողական հիմնարկներում ներկայումս տիրող իրավիճակը, ինչպես նաև դրանց անհամապատասխանությունը Եվրոպական բանտային կանոններին և Եվրախորհրդի կողմից ընդունված որոշ հանձնարարականներին: Յուրաքանչյուր հիմնարկ ներկայացված է առանձին՝ ըստ բաժինների: Մոնիտորինգի ընթացքում դիտարկվել են խցերի, կացարանների, կարանտինային խցերի, պատժախցերի, բուժմասի, խոհանոցի, բաղնիքների, զբոսանքի համար նախատեսված տարածքները և հանդիպումների, երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակները:

Հանդիպումներ են տեղի ունեցել քրեակատարողական հիմնարկի ադմինիստրացիայի և աշխատակազմի անդամների, դատապարտյալների և կալանավորված անձանց հետ: Հիմնարկի ադմինիստրացիայի և աշխատակազմի անդամների հետ անց են կացվել հարցազրույցներ:

Մոնիտորինգի արդյունքում դիտորդական խումբն արձանագրեց, որ ընդհանուր առմամբ, սկսած 2001թ.-ի հունվարի 25-ից, երբ քրեակատարողական վարչությունը՝

ներառյալ քննչական մեկուսարանները, Ներքին գործերի և Ազգային անվտանգության նախարարությունների ենթակայությունից փոխանցվեց Արդարադատության նախարարության ենթակայությանը, տեղի են ունեցել աննշան բարեփոխումներ՝ կապված դատապարտյալների կեցության պայմանների և նրանց նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի հետ: Սակայն պետք է նշել, որ որոշակի մարդկային վերաբերմունքը, ցուցաբերված կալանավորվածների և դատապարտյալների նկատմամբ, ոչ միշտ է պայմանավորված ՔԿՀ աշխատակիցների՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին լավատեղյակությամբ: Կալանավորվածների և դատապարտյալների խոսքերով ՔԿՀ աշխատակիցների լավ վերաբերմունքը հիմնականում պայմանավորված է տարբեր միջազգային կազմակերպությունների և տեղի մարդու իրավունքների պաշտպան հասարակական կազմակերպությունների այցելություններով, որոնք, ինչպես իրենք են նշում, ցանկալի կլիներ դարձնել հաճախակի և շարունակական: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի հանրությանը ներկայացնել այն բոլոր խնդիրները և դժվարությունները, որոնց ամեն օր բախվում են կալանավորներն ու դատապարտյալները:

Ինչ վերաբերվում է կեցության պայմաններին, ապա, բացառությամբ Արթիկ ՔԿՀ-ի, որը կապիտալ վերանորոգված ու կահավորված է(ունի որոշ թերություններ, որոնք հետագայում կնշվեն), ՔԿՀ-ների մեծ մասը գտնվում է չվերանորոգված, կիսաքանդ վիճակում, հնամաշ կահույքով կամ առանց դրա: Չնայած այն բանի, որ “Վանաձոր” ՔԿՀ-ն հանձնվել է շահագործման 2007թ.-ին, այդ հիմնարկը դարձյալ կարիք ունի ընթացիկ վերանորոգման և որոշ հատվածներում՝ նաև ձևափոխման: Աչքի է զարնում այն փաստը, որ հիմնարկությունը շահագործման է հանձնվել հապճեպորեն, և շինարարությունը ստանձնած կազմակերպությունն աշխատել է ոչ բարեխղճորեն:

Քանի որ բոլոր ՔԿՀ-ների և՛ ֆինանսավորումը, և՛ սննդամթերքով ու դեղորայքով ապահովումն իրականացվում է կենտրոնացված կարգով, դրանց պակասն անդրադառնում է ողջ համակարգի վրա: Մասնավորապես, երբ քրեակատարողական վարչությունը ձեռք չի բերում և չի պահեստավորում միս կամ կարտոֆիլ, բոլոր ՔԿՀ-ները զրկվում են սննդամթերքի այդ տեսակից: Նույն խնդիրն առաջանում է նաև դեղորայքի հետ, երբ “Դատապարտյալների հիվանդանոց” ՔԿՀ-ի դեղորայքի

պահեստում, որը և իրականացնում է ՔԿՀ-ների միջև դեղորայքի և բուժսարքավորումների բաշխումը, պակասում կամ վերջանում է որևէ դեղամիջոց. այդ դեպքում բոլոր հիմնարկները մնում են առանց այդ դեղամիջոցի: ՔԿՀ-ների բուժմասի պետերի և տնտեսմասի աշխատակիցների(նրանցից ոմանք չցանկացան, որպեսզի իրենց անունները նշվեն) հետ մեր մասնավոր զրույցների արդյունքում պարզ դարձավ, որ ցանկալի կլիներ, որ սննդամթերքն ու դեղորայքը ձեռք բերվեին հետևյալ կարգով. ըստ նախապես հաստատված բյուջեյի՝ իրականացվեր ֆինանսների տեղաբաշխում, որի արդյունքում յուրաքանչյուր հիմնարկ կստանար իրեն հասանելի դրամական միջոցները՝ ըստ կալանավորների թվաքանակի, և հնարավորություն կստեղծվեր ինքնուրույն ձեռք բերել սննդամթերք և դեղորայք: Լսեցինք նաև այլ կարծիքներ պետերից և աշխատակիցներից, սակայն դրանք հիմնականում պայմանավորված էին ավելորդ թղթագրությունից և հաշվետվություններից խուսափելու ցանկությամբ:

Բավականին լուրջ խնդիր է շարունակում հանդիսանալ ջրամատակարարումը “Նուբարաշեն”, “Էրեբունի” և “Վարդաշեն” ՔԿՀ-ներում: Այդ հիմնարկների ղեկավարության հետ զրույցներից այդպես էլ պարզ չդարձան ջրամատակարարման խափանման և գրաֆիկով ջրամատակարարման պատճառները: Առկա են բազմաթիվ խնդիրներ՝ կապված ճաշարանների վերազինման, կահավորման և հնամաշ սարքավորումների փոխարինման հետ: Ստացված սննդամթերքի աղքատ տեսականու պատճառով խոհարարներն ստիպված են լինում պատրաստել նույնատեսակ ճաշատեսակներ ամիսներ, երբեմն տարիներ շարունակ, ինչը դժգոհություն է առաջացնում կալանավորների և դատապարտյալների մոտ. հաճախ նրանք հրաժարվում են մատուցվող ուտելիքից՝ պատճառաբանելով, որ եթե նույնիսկ կերակուրները լինեն իդեալական պատրաստված, միևնույն է անհնար է ամիսներ շարունակ ուտել նույն սնունդը: Ընդհանուր առմամբ ճաշը պատրաստվում է ըստ կալանավորների և դատապարտյալների թվի, և գրեթե բոլոր հիմնարկներում դրա զգալի մասը թափվում է:

Հիվանդ կալանավորների և դատապարտյալների բուժօգնությունը պատշաճ ձևով կազմակերպելու համար երբեմն հարկ է առաջանում նրանց տեղափոխել “Դատապարտյալների հիվանդանոց” կամ այլ քաղաքացիական

բուժհաստատություններ: Այս առումով հիվանդների տեղափոխումը կազմակերպող բժիշկները հանդիպում են բազմաթիվ խոչընդոտների՝ կապված մի շարք ատյաններ տեղեկություններ ուղարկելու և ավելորդ թղթագրության հետ, ինչը բավականին ժամանակատար է և հակասում է շտապ բուժօգնության նորմերին:

Բավականին լուրջ խնդիր է իրենից ներկայացնում նաև հիմնարկների սանիտարահիգիենիկ վիճակը. ՔԿՀ-ներում թե՛ սանհանգույցները, թե՛ լոգասենյակները և թե՛ խցերն ու կացարանները հիմնովին վերանորոգման կարիք ունեն: Պատշաճ կերպով չեն կատարվում դեզինսեկցիոն աշխատանքները: Անկողնային պարագաները չեն ենթարկվում ախտահանման, քանի որ չկան ախտահանող նյութեր: Հիմնարկներից մեկի տնտեսմասի աշխատակցից տեղեկացանք, որ ախտահանող նյութերը թանկ են, այդ պատճառով չեն ձեռք բերվում, իսկ սարքավորումները, այսինքն՝ ախտահանող խցիկները, սարքին են, և դրանք չօգտագործելու միակ պատճառը վերոնշյալ հանգամանքն է: Մյուս խնդիրների մասին ավելի մանրամասն կտեղեկացվի ստորև:

Ընդհանուր առմամբ գրեթե բոլոր ՔԿՀ-ներում դատապարտյալների հիմնական բողոքները(բացի իրենց կենցաղային խնդիրներին վերաբերող բողոքների) վերաբերում էին վաղաժամկետ ազատման խնդրին, որի ոչ շուտափույթ լուծման և կարգավորման դեպքում կարող են առաջանալ բազմաթիվ խնդիրներ: Դատապարտյալները բողոքում էին(ստորև կներկայացնենք մի քանի գրավոր դիմում), որ չեն կարողանում օգտվել իրենց՝ օրենքով հասանելիք վաղաժամկետ ազատ արձակման իրավունքից. այդ գործընթացում հիմնական խոչընդոտ է հանդիսանում անկախ հանձնաժողովը, որը ՔԿՀ-ների ղեկավարների փոխարեն որոշում է բավարարել, թե մերժել վաղաժամկետ ազատ արձակման դիմումը: Դրա հետևանքը եղավ այն, որ 2010թ.-ի հոկտեմբերի 29-ի առավոտյան ժամը 11.30-ի սահմաններում “Սևան” ՔԿՀ-ում բողոքի ակցիա էր սկսվել: 26 դատապարտյալներ բարձրացել էին հիմնարկի տանիք և պահանջում էին իրենց վաղաժամկետ ազատ արձակել, քանի որ գործող օրենսդրությանը համաձայն պատժի հիմնական մասը կրելու դեպքում նրանք իրավունք ունեն դիմել դատապարտյալների վաղաժամկետ ազատ արձակման հանձնաժողովին և դրական պատասխան ստանալու դեպքում ազատ արձակվել: Եվ չնայած այն բանի, որ դեպքից հետո դատապարտյալները

հանդիպում ունեցան ադմինիստրացիայի հետ և նրանց, իրենց վաղաժամկետ արձակման մասին որոշում կայացնելու համար, տվեցին վեց օր ժամանակ, ըստ մեզ հասած տվյալների՝ նրանց տեղափոխեցին “Նուբարաշեն” և “Հրազդան” ՔԿՀ-ներ:

Դիտորդական առաքելությունն իրականացնելու ընթացքում քրեակատարողական վարչությունում տեղի ունեցավ կադրային փոփոխություն՝ փոխվեց վարչության պետ Ա. Գիզիրյանը, և նրա պաշտոնը ստանձնեց նախկին ոստիկանապետ Հայկ Հարությունյանը: Արդյունքում, անհայտ նկատառումներով կտրուկ փոխվեց վերաբերմունքը դիտորդական խմբի աշխատանքի և հետագա գործունեության նկատմամբ: Այսպիսով, երբ, ըստ նախապես հաստատված ժամանակացույցի, մենք ժամանեցինք “Վանաձոր” ՔԿՀ, հիմնարկի ղեկավարը մեզ ներկայացրեց վարչությունից ուղարկված գրություն, որտեղ առանց որևէ պատճառաբանության արգելվել էր մի քանի դիտորդի մուտքը ՔԿՀ: Մեր՝ գրության պատճենը տրամադրելու խնդրանքը հիմնարկի ղեկավարը մերժեց՝ պատճառաբանելով, որ դա ներքին հրահանգ է և կողմնակի անձանց չի կարող տրամադրվել: Որպեսզի չտուժի մեր կողմից անցկացվող աշխատանքը, դիտորդական խումբը ստիպված եղավ մոնիտորինգ անցկացնել երկու ներկայացուցչով:

Ավելին, երբ քրեակատարողական վարչությունից ստացվեց տեղեկություն, որ “Գյումրի” ՔԿՀ-ն լուծարվել է և Հրազդան քաղաքում բացվել է նորակառույց ՔԿՀ, որի մասին Հելսինկյան Ասոցիացիան տեղեկություն չուներ, մեր կողմից գրություն ուղարկվեց արդարադատության նախարար Գ. Դանիելյանին՝ նախապես ցուցակում նշված “Գյումրի” ՔԿՀ-ի փոխարեն նշված ժամանակահատվածում նորաբաց “Հրազդան” ՔԿՀ այցելելու մասին: Որոշ ժամանակ անց քրեակատարողական վարչությունից հեռախոսազանգի միջոցով մեզ հայտնեցին, որ այդ հիմնարկում մեկ այլ կազմակերպության՝ “ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի” կողմից կատարվում են մոնիտորինգային աշխատանքներ, և այդ իսկ պատճառով քրեակատարողական վարչությունը հարմար չի գտնում, որ մեր կազմակերպությունն այցելի վերոնշյալ հիմնարկությունը: Մեր՝ մերժումը գրավոր ուղարկելու խնդրանքին ստացանք դրական պատասխան, սակայն մինչ օրս դեռ գրությունը տեղ չի հասել:

Մեր երկրորդ զանգից հետո, մեզ հրավիրեցին քրեակատարողական վարչություն՝ պատճառաբանելով, որ իրենց կողմից գրությունն ուղարկվել է, բայց անհայտ պատճառներով տեղ չի հասել: Այն բանից հետո, երբ ասացինք, որ մենք ինքներս պատրաստ ենք գալ և առձեռն ստանալ գրությունը, քրեակատարողական վարչության աշխատակից պրն. Մելքոնյանը տվեց իր համաձայնությունը: Սակայն, գնալով վարչություն և նրա հետ 15 րոպե զրուցելուց ու փաստաթուղթը տարբեր բաժիններում որոնելուց հետո, մեր աշխատակիցը տեղեկացվեց, որ իրենց մոտ կադրային փոփոխություններ են տեղի ունեցել, և այդ է պատճառը,որ չեն կարողանում գտնել փաստաթուղթը: Սակայն, պրն. Մելքոնյանը խոստացավ, որ գտնելու դեպքում նորից կզանգահարի և կտրամադրի այն: Այդ հարցը մինչ այսօր այդպես էլ մնաց չլուծված:

Հելսինկյան Ասոցիացիայի 10.01.2010թ. թիվ 01-139 գրության համաձայն ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչությունից ստացել ենք հետևյալ տեղեկատվությունը՝

- 2011թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվում են թվով 1437 կալանավորված անձ և թվով 3705 դատապարտյալներ:
- 2010թ.-ի հունվարից առ 2011թ.-ի փետրվարի 9-ը արձանագրվել է մահվան 38 դեպք, որից 32-ը՝ հիվանդության պատճառով, 1-ը՝ դժբախտ պատահար, 5-ը ինքնասպանություն:
- 2010թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվում են տուբերկուլյոզով հիվանդ 47, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով՝ 22 կալանավորված անձ և դատապարտյալ, որոնք բուժում են ստանում “Դատապարտյալների հիվանդանոց” և “Նուբարաշեն” քրեակատարողական հիմնարկներում:
- 2010թ. հունվար ամսից առ 2011թ.-ի փետրվարի 9-ը արձանագրվել է 1 փախուստի դեպք:

Այս տեղեկատվությունը վկայում է այն մասին, որ ՔԿՀ պետերի կողմից թաքցվում է ճիշտ ինֆորմացիան՝ կապված մահվան դեպքերի և դրանց պատճառների հետ:

Ստորև ներկայացվում են “Հելսինկյան Ասոցիացիա” իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից մոնիտորինգի ենթարկած ՔԿՀ-ները, այնտեղ տեղ գտած թերություններն ու առավելությունները (եթե այդպիսիք կային):

1.”Նուբարաշեն” քրեակատարողական հիմնարկ

- **Ընդհանուր տեղեկատվություն**

“Նուբարաշեն” քրեակատարողական հիմնարկը ամենամեծ ՔԿՀ-ն է Հայաստանի Հանրապետությունում՝ նախատեսված քննչական կալանավորների համար: Այն կառուցվել է 1981թ.–ին և շահագործման է հանձնվել որպես քննչական մեկուսարան:

Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը 01.06.2010թ.-ից մինչև 11.06.2010թ.-ն ընկած ժամանակահատվածում 11:00-18:00-ն ընկած ժամերին այցելել է “Նուբարաշեն” ՔԿՀ:

Ներկայումս այն ունի բազմաթիվ խնդիրներ, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով սահմանված պահանջների խախտմանը: Հիմնարկում հիմնականում պահվում են կալանավորված անձինք և փակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալները, այդ թվում՝ գրեթե բոլոր ցմահ դատապարտյալները:

ՀՀ Արդարադատության նախարարի 27 մայիսի 2008թ. ք. Երևան N 41-Ն Հրամանի համաձայն սահմանվել են ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿՀ տեսակները, լրակազմերը, ինչպես նաև կալանավորվածների ու դատապարտյալների համար մեկ անձի հաշվով բնակելի տարածքները:

“Նուբարաշեն” ՔԿՀ-ի համար հաստատված է հետևյալ լրակազմը.

“Նուբարաշեն” քրեակատարողական հիմնարկ - 840 մարդ, որից՝

ա) փակ ուղղիչ հիմնարկ - 158 մարդ,

բ) կիսափակ ուղղիչ հիմնարկ - 30 մարդ,

(միայն փակ տիպի ուղղիչ հիմնարկից տեղափոխվածների՝ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկվածների համար)

գ) կիսաբաց ուղղիչ հիմնարկ - 62 մարդ,

(միայն կիսափակ տիպի ուղղիչ հիմնարկից տեղափոխվածների՝ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկվածների համար)

դ) բաց ուղղիչ հիմնարկ - 40 մարդ,

ե) կալանավորվածներին պահելու վայր -550 մարդ[1]:

Ինչպես արդեն նշվեց, ըստ լրակազմի, “Նուբարաշեն” քրեակատարողական հիմնարկում կարող է պահվել 840 մարդ: Այցելության պահին սույն հիմնարկում գտնվում էր 1239 մարդ, սակայն այս թիվը փոփոխական է, քանի որ հիմնարկում կալանավորների անընդհատ շարժ է առկա: Բոլոր խցերը միանման են և ունեն 30քմ մակերես, ինչն իր հերթին ստեղծում է բնակեցման նոր խնդիրներ: Այսպիսով, “Նուբարաշեն” քրեակատարողական հիմնարկում գոյություն ունի գերբնակեցվածության լուրջ խնդիր, որն իր հերթին հանգեցնում է այլ խնդիրների, մասնավորապես՝ խցերում նույնիսկ մահճակալների ավելացման պարագայում որոշ դատապարտյալների չեն հասնում իրենց համար նախատեսված քնելու տեղեր: Օրինակ, իրականացված մոնիտորինգի ընթացքում պարզ դարձավ, որ կային խցեր, որոնք նախատեսված էին վեցից ութ հոգու համար, սակայն ադմինիստրացիայի կողմից մահճակալների ավելացման արդյունքում դրանց թիվը հասել էր տասներկուսի, իսկ իրականում խցում գտնվում էր տասնութից քսան հոգի: Կալանավորների կողմից սահմանված էր հերթափոխ: Հարկ է նշել, որ մոնիտորները խցերում չնկատեցին բավարար թվով ներքնակներ և անկողնային պարագաներ:

Այսպիսով, “Նուբարաշեն” ՔԿՀ-ում խստորեն խախտվում է ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածը, որն ուղղակիորեն սահմանում է, որ յուրաքանչյուր դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը չի կարող պակաս լինել 4 քառակուսի մետրից:

Առկա է նաև ջրամատակարարման լուրջ խնդիր: ՔԿՀ-ի պետ Տ. Նավասարդյանի հետ հարցազրույցից պարզ դարձավ, որ հիմնարկը ջրամատակարարման դիմաց պարտք չունի: Ջրամատակարարումն իրականացվում է ժամով, ցանցը մաշված է, սակայն այցելության պահին կատարվում էին վերանորոգման աշխատանքներ: Նույնատիպ խնդիրներ կան ջրահեռացման հետ. առաջին մասնաշենքի նկուղային հարկը ամբողջությամբ գտնվում է տիղմի մեջ: Խցերում արձանագրվեցին մեծ քանակությամբ՝ քսանից մինչև հիսուն, ջրով լի պլաստմասսայե շշեր, որոնք

[1] Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարար 27 մայիսի 2008թ. ք. Երևան N 41-ն հրաման Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների տեսակները, լրակազմը, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների համար մեկ անձի հաշվարկով բնակելի տարածքները սահմանելու մասին, 7-րդ կետ:

կալանավորներն օգտագործում էին խմելու և այլ պահանջները հոգալու համար: Շշերի կուտակումը խանգարում էր խցերում ազատ տեղաշարժվելուն: Առկա են խնդիրներ էլեկտրաֆիկացման հետ կապված. լարերը բավական մաշված են, ինչը հաճախ կարճ միացման պատճառ է դառնում: Սակայն, ՔԿՀ-ն ունի գեներատոր, որի միջոցով հոսանքազրկման դեպքում կարող է ապահովվել հիմնարկի լուսավորությունը:

"Նուբարաշեն" ՔԿՀ-ում 2010 թվականի դրությամբ արձանագրվել է՝

1. մահվան երկու դեպք,
2. ինքնասպանության երկու դեպք,
3. փախուստի ոչ մի դեպք:

Այցելության պահին այստեղ գտնվում էր՝

1. պատժախցում – 7 դատապարտյալ,
2. կարանտինում – 21 դատապարտյալ,
3. հացադուլի մեջ - 5 դատապարտյալ,
4. բուժմասում - 51 դատապարտյալ,
5. ցմահ դատապարտյալ - 92 մարդ:

Սույն հիմնարկում կարող են պահվել նաև այլ երկրների քաղաքացիներ: Բացի այդ, "Վարդաշեն" քրեակատարողական հիմնարկի ծանրաբեռնվածության հետևանքով հաճախ այստեղ են բերվում և առանձին մասնաշենքում պահվում իրավապահ մարմիններում աշխատած նախկին ծառայողները:

- **Կապն արտաքին աշխարհի հետ**

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների համար գործում է երկու տեսակցության սենյակ: Սենյակների մակերեսները տարբեր են՝ 48քմ և 18 քմ: Առաջին սենյակը նախատեսված է միաժամանակ 7 տեսակցությունների համար, և այստեղ դատապարտյալներն ու իրենց հարազատները անմիջական շփման հնարավորություն չունեն՝ բաժանված են ապակե միջնորմով և միմյանց հետ խոսում են հեռախոսով: Այս հանգամանքը վրդովմունք և բողոքներ է առաջացնում՝ ինչպես կալանավորների, այնպես էլ նրանց այցելուների մոտ: Սենյակի հատակը

բետոնապատ է, տեղ-տեղ քանդված, միջնորմ հանդիսացող ապակիները կեղտոտ են, իսկ այցելուներն ու կալանավորները նստարանների բացակայության պատճառով միմյանց հետ շփվում են կանգնած վիճակում: Շինությունը բետոնապատ է և ունի փոքր պատուհաններ, և քանի որ չկան ջեռուցող սարքեր, ձմռան ամիսներին այստեղ սաստիկ ցուրտ է լինում, և եթե տեսակցության ժամեր են տրամադրվում մոտ հարազատներին, որոնց թվում կան նաև կանայք ու երեխաներ, ապա այդ ընթացքում նրանք գտնվում են անմարդկային պայմաններում: Եթե տեսակցությունը տրվում է մեկ ժամով, ապա մինչ տեսչական անձնակազմը տարբեր մասնաշենքերի և տարբեր հարկերից կալանավորներին ուղեկցում է տեսակցության սենյակ, անցնում է բավականին ժամանակ, որը հանվում է կալանավորի տեսակցության ժամից: Բացի այդ, մինչ կալանավորներին իջեցնելը տեսակցողները ստիպված են լինում նրանց սպասել այդ նույն ցուրտ և մութ սենյակում:

Մյուս տեսակցության սենյակը համեմատաբար ավելի փոքր է, և այստեղ արդեն հնարավոր է ապահովել անմիջական շփում: Այն նախատեսված է մեկ տեսակցության համար:

Հիմնարկում կարճատև տեսակցությունները տեղի են ունենում հսկիչների ներկայությամբ:

Երկարատև տեսակցություններ

Երկարատև տեսակցությունների համար նախատեսված է մեկ սենյակ, այն բաղկացած է երեք հատվածից՝ ննջարանից, խոհանոցից և միջանցքից, կա նաև առանձին սանհանգույց: Խոհանոցում կան լվացարան, սեղան, աթոռներ: Երկարատև տեսակցության սենյակից կարող են օգտվել միայն ցմահ դատապարտյալները, ում էլ այստեղ նախապատվություն է տրվում:

Հեռախոսակապ

Սույն հիմնարկի բոլոր մասնաշենքերում տեղադրված են քարտային տաքսաֆոններ, որոնցից դատապարտյալները օգտվում են շաբաթական մեկ անգամ և հստակ գրված ժամանակացույցով:

Հանձնուքներ

Հիմնարկի հանձնուքի վայրը իրենից ներկայացնում է 18քմ մակերեսով սենյակ: Դատապարտյալների հարազատները հանձնունքը փոխանցում են սենյակից ներս: Հանձնուքի զննումը կատարվում է ժամանակակից “Ռապիսկան” սարքավորման միջոցով:

- **Խցերը**

Բոլոր խցերը իրենց չափերով և կահավորանքով միանման են՝ բացառությամբ ցմահ դատապարտյալների խցերի, որտեղ ըստ օրենքի պետք է լինեն տարբերություններ: Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ ծանրաբեռնվածության պատճառով խցերում ավելացվել են մահճակալներ, սակայն դա էլ բավարար չէ, որպեսզի խցերում պահվող յուրաքանչյուր դատապարտյալ ունենա իր քնելու տեղը: Արհեստական օդափոխության համակարգի բացակայության պատճառով լուրջ խնդիրներ են առաջանում բնական օդափոխությունն ապահովելու առումով, մասնավորապես՝ ամռան ամիսներին: Դա էլ իր հերթին հանգեցնում է հակահիգիենիկ պայմանների ստեղծմանը: Մեր այցելության ժամանակ խցերի դռների վրա տեղակայված փոքր դռնակները՝ նախատեսված կերակուրը փոխանցելու համար(վոլչոկ), գտնվում էին փակ վիճակում: Եվ միայն պետի հետ զրուցելուց ու խնդիրը ներկայացնելուց հետո հաջորդ այցելության ժամանակ դրանք արդեն բացված էին, ինչը նպաստում էր բնական օդափոխության բարելավմանը:

Խցերում առանձնացված են սանհանգույցներ, որոնք նույնպես գտնվում են անմխիթար վիճակում: Ցանկացած խցի դուռը բացելիս միանգամից աչքի էին ընկնում պատերի և առաստաղի վրա մագլցող բազմաթիվ միջատները: Անկողնային սպիտակեղենի վրա առկա էին կետային արյան կաթիլներ, ինչը խոսում էր թախտաբիթիների և այլ արնախում միջատների առկայության մասին: Վերոնշյալից հետևում է, որ մեկուսարանում վաղուց չեն կատարվել դեզինսեկցիոն աշխատանքներ: Խցերում չկան պահարաններ և զգեստապահարաններ. կալանավորված անձինք ստիպված են իրենց հագուստները պահել պոլիէթիլենե տոպրակների մեջ՝ մահճակալների տակ: Նույնը վերաբերում է նաև հանձնուքներին, որոնք նույնպես պահվում են մահճակալների տակ: Մեր կողմից այցելած

համեմատաբար բարվոք վիճակում գտնվող խցերը վերանորոգված էին կալանավորների կամ նրանց հարազատների միջոցներով:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

Ազատազրկվածների լոգանքի համար նախատեսված է հինգ բաղնիք: Բոլոր բաղնիքներն ունեն հանդերձարան, որտեղ կան նստարաններ և կախիչներ: Տաք ջրամատակարարումն ապահովելու համար տեղադրված են տարբեր չափերի բաքեր, որոնցում ջուրը տաքացվում է էլեկտրականությամբ: Օդափոխության համակարգ լոգարաններում բացակայում է: Կալանավորների հետ ունեցած զրույցներից պարզ դարձավ, որ շաբաթական մեկ անգամ լոգանք ընդունելու իրավունքը միայն թղթի վրա է և կրում է ձևական բնույթ: Գերծանրաբեռնվածության պարագայում բաղնիքից կալանավորը կարողանում է օգտվել ոչ շուտ քան տասը օրը մեկ և ավելի ժամկետում: Այդ իսկ պատճառով շատ կալանավորներ իրենց կարիքները հոգում են խցերում տեղակայված զուգարանային հատվածում, ինչը հանգեցնում է խոնավության կտրուկ բարձրացմանը: Մի քանի խցերում առանձին զրույցների ընթացքում կալանավորները բողոքում էին, որ բաղնիքից օգտվելու գինը հազար դրամ է, իսկ խցում լողանալու դեպքում ջրի էլեկտրական եռոց օգտագործելը ևս արժե հազար դրամ: Չկան օգտագործված անկողինը և ներքնակները ախտահանող խցերի համար նախատեսված նյութեր: Ըստ տնտեսական բաժնի աշխատակցի՝ ախտահանող խցերը գործում են, սակայն վերջիններիս համար նախատեսված նյութերը բավականին թանկ են և այդ իսկ պատճառով չեն ձեռք բերվում: Այդ բացն իր հերթին տարբեր տեսակի պարազիտային և մաշկային հիվանդությունների պատճառ է հանդիսանում:

- **Բուժպաասարկում**

“Նուբարաշեն” ՔԿՀ-ի բուժմասը երկհարկանի կառույց է, որը նախատեսված է 50 մահճակալի համար և որն, ըստ բուժմասի պետի, կարող է ընդունել մոտ 60 հիվանդ: Մեր այցելության պահին բուժմասում բուժում էին ստանում 53 կալանավորներ, որոնցից երեքը տուբերկուլյոզով և երկուսը ՁԻԱՀ-ով հիվանդներ էին: ՁԻԱՀ-ով հիվանդներից մեկը գտնվում էր ընդհանուր խցում, որտեղ պահվում են

ոստիկանության նախկին աշխատակիցներ: ՔԿՀ-ի ադմինիստրացիան բազմիցս դիմել է այդ հիվանդին “Վարդաշեն” ՔԿՀ տեղափոխելու պահանջով, որը, սակայն, մերժվել է “Վարդաշեն” ՔԿՀ-ի գերծանրաբեռնվածության պատճառով: Մյուս հիվանդը նաև տառապում է տուբերկուլյոզով, և ներկայումս նրա վիճակը բավականին ծանր է, քանի որ գտնվում է հիվանդության 4-րդ փուլում: Բավականին լուրջ խնդիր է հանդիսանում նրանց բուժումը կազմակերպելը, քանի որ ըստ օրենքի այն բուժաշխատողները, ովքեր աշխատում են բաժանմունքներում, որտեղ կան ՁԻԱՀ-ով հիվանդ կալանավորներ, պետք է ստանան 100% հավելավճար, իսկ այս դեպքում, համաձայն բուժմասի պետի խոսքերի, հավելավճարն ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսավորման բացակայության պատճառով նա չունի որևէ իրավասություն ստիպելու իր աշխատողներին կազմակերպել հիվանդների բուժումը և նույնիսկ այն շարունակել շաբաթ և կիրակի օրերին: Այդ մասին տեղեկացված է MCF կազմակերպությունը, որն առաջարկել է կազմակերպել ՁԻԱՀ-ով հիվանդների բուժումն առանձին սենյակում իրենց աշխատակցի միջոցով, ինչն էլ իր հերթին առաջ է բերում լրացուցիչ խնդիրներ, քանի որ անհրաժեշտություն է առաջանում տրամադրել անվտանգությունն ապահովող առանձին աշխատակից:

“Նուբարաշեն” ՔԿՀ-ի բուժմասում ներկայումս կա 22 հաստիք, աշխատում են 21 աշխատակիցներ, որոնցից 12-ը բժիշկ են: Թափուր մեկ տեղը շուտով կհամալրվի նորավարտ բժիշկ-սոնոգրաֆիստով, ում փաստաթղթերը գտնվում են ՔԿՀ վարչությունում՝ հաստատման համար: ՔԿՀ-ի բուժմասն ունի ռենտգեն, խորխի հետազոտության լաբորատորիա, թվային ֆլուորագրաֆիական, ատամնաբուժական կաբինետներ և 12 հիվանդախցեր: Ամեն մասնաշենք իր հերթին ևս ունի բժշկական սենյակ՝ նախատեսված ամբուլատոր ընդունելությունների համար: Հիվանդախցերում առկա են առանձնացված ցնցուղներ, ինչը հնարավորություն է տալիս հիվանդ կալանավորներին ջրի առկայության պարագայում լոգանք ընդունել իրենց հարմար պահին՝ առանց նախորոք որոշված ժամանակացույցի:

Ըստ հիմնարկի պետի և բուժմասի պետի՝ դեղորայքի վերաբերյալ դժգոհություններ չկան. դեղամիջոցների իրենց ողջ պաշարն ստանում են “Դատապարտյալների հիվանդանոց” քրեակատարողական հիմնարկի պահեստից, իսկ այնտեղ իրենց նշած դեղամիջոցների բացակայության դեպքում օգտվում են դրանց փոխարինող

դեղամիջոցներից: Նեղ մասնագիտական դեղորայքը, որը ներառված չէ ցուցակում, բայց որի կարիքն զգացվում է, ձեռք է բերվում հիվանդի հարազատների կողմից: Այնուամենայնիվ, ըստ բուժմասի պետի, ՔԿՀ վարչության պետն արգելել է որևէ դեղամիջոց ընդունել կալանավորների հարազատներից այն դեպքում, երբ հաճախ նեղ մասնագիտական և "Դատապարտյալների հիվանդանոց"-ի կողմից ցուցակում չներառված դեղորայքի կարիք է առաջանում և երբեմն խիստ հրատապ կարիք:

Հատուկ ուշադրության է արժանի ատամնաբուժական կաբինետը, որն ինչպես իր սարքավորումներով, այնպես էլ իր սանիտարական պայմաններով չի զիջում քաղաքացիական այլ ատամնաբուժական կաբինետների: Ինչ վերաբերում է ընդհանուր հիվանդանոցի վերանորոգվածությանը և բժիշկների սենյակների վերանորոգվածությանն ու կահավորվածությանը, ապա դրանք շատ աղքատիկ են, և կապիտալ վերանորոգման կարիք է զգացվում: Ծանր հիվանդներ ունենալու դեպքում ՔԿՀ-ն օգտվում է կամ դատապարտյալների հիվանդանոցից, կամ շտապ դեպքերում դիմում է "Էրեբունի" կլինիկական հիվանդանոց, սակայն տեղափոխման խնդիրները խլում են բավականին ժամանակ թե՛ տարբեր ատյաններին տեղեկացնելու, թե՛ թղթագրության առումով: 2010թ.-ին արձանագրվել է երկու մահվան դեպք, որոնցից մեկը հանկարծամահության, մյուսն ինքնասպանության դեպք է:

- **Զբաղվածությունը**

Սույն հիմնարկում դատապարտյալների զբաղմունքի միակ տեսակներն են մեկժամյա զբոսանքը աշխատանքային օրերին ցանկապատված տանիքում, գրադարանի գրքերից օգտվելը և սեփական նախաձեռնությամբ բերված հեռուստացույց դիտելը: Արգելված է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, քանի որ այստեղ պահվում են նախաքննական կալանավորներ: Ինչ վերաբերում է քննչական կալանավորներին, ովքեր խցերում ռադիոյից, հեռուստացույցից, DVD-ից օգտվելուց բացի այլ զբաղմունք չունեն, ապա նրանք ամբողջ օրն անցկացնում են խցերում, և միակ ազատ տեղաշարժվելու հնարավորությունն ընձեռնվում է զբոսանքի դուրս գալու ժամանակ: Հարկ է նշել, որ վերը թվարկված տեխնիկական միջոցները, ինչպես նաև այլ կենցաղային սարքերը

(սառնարան, օդորակիչ) դարձյալ ձեռք են բերվում կալանավորների և նրանց հարազատների միջոցներով:

Զբոսանք

Սույն հիմնարկում գործում է 29 զբոսահրապարակ, որոնցից 20-ը գտնվում են գլխավոր մասնաշենքի տանիքում, վեցը՝ շենքի բակում, երկուսը՝ վեցերորդ մասնաշենքում և մեկը՝ բուժմասում: Բոլոր զբոսահրապարակները միատեսակ են, ունեն մոտ 30 քմ մակերես: Սպորտով զբաղվելու հնարավորություններ դատապարտյալները չունեն: Հարկ է նշել, որ անբարենպաստ եղանակային պայմանների դեպքում զբոսասենյակների ծածկի բացակայության պատճառով կալանավորներն ստիպված հրաժարվում են իրենց հասանելիք զբոսանքից, իսկ շաբաթ և հատկապես կիրակի օրերին հաճախ զբոսանք չի տրվում հանգստյան օր լինելու և աշխատողների քանակի անբավարարության պատճառով:

Մոնիտորինգի շրջանակներում 2010թ.-ի դեկտեմբեր ամսին “Նուբարաշեն” ՔԿՀ-ի բազմաթիվ կալանավորների ու նրանց հարազատների բողոքներից մեզ հայտնի դարձավ, որ քրեակատարողական վարչության պետի փոխվելուց հետո, երբ այդ պաշտոնը ստանձնեց նախկին ոստիկանապետ Հայկ Հարությունյանը, ՔԿՀ-ի խցերում սկսեցին իրականացվել հաճախակի խուզարկություններ. այս աշխատանքներում ներգրավված է նաև այն տեսչական կազմը, որը պատասխանատու է զբոսանքների համար, ինչի պատճառով կալանավորված անձինք մեկ ամսից ավել է, չեն օգտվում իրենց հասանելիք ամենօրյա զբոսանքից:

Գրադարան

Սույն հիմնարկում գործում է գրադարան, որի մակերեսը 56 քմ է: Գրքերի քանակը կազմում է 6350 կտոր գիրք: Նոր գրքեր գրադարանը երկար ժամանակ է, ինչ չի ստացել, իսկ եղած գրքերի մեծ մասը ոչ միայն ֆիզիկապես, այլև բարոյապես մաշված են, ինչի պատճառով դատապարտյալներն ու կալանավորները գրադարանից գրեթե չեն օգտվում:

- **Սնունդը**

Սնունդը “Նուբարաշեն” քրեակատարողական հիմնարկում մշտապես հանդիսացել է կարևորագույն խնդիրներից մեկը, մշտապես լինելով դատապարտյալների բողոքների առարկա: Նուբարաշենում խոհանոցը գտնվում է անմխիթար վիճակում, ինչին նպաստող գլխավոր գործոնն է հանդիսանում խոհանոցում տիրող տհաճ հոտը, ինչպես նաև հատակին թափված և ոտքերին կպչող կեղտը: Սնունդը խոհանոցում եփում են էլեկտրական վառարաններով, այստեղ է գտնվում նաև սառնարանը, պահեստը և կարտոֆիլի մաքրման սարքավորումը: Ըստ ոչ մասնագիտացված խոհարարի, ով դատապարտյալ է, ջրամատակարարման խնդիրների պատճառով առաջանում են նորանոր խնդիրներ՝ կապված սպասքի և սննդի լվացման հետ: Խոհանոցը ընդհանուր առմամբ չի համապատասխանում որևէ հիգիենիկ պահանջների: Կալանավորների հետ ունեցած զրույցներից տեղեկացանք, որ ճաշացանկը երբևիցե չի ենթարկվում փոփոխության, և ըստ նրանց, եթե նույնիսկ ճաշի որակը լիներ հիանալի, ապա հնարավոր չէ մեկ տարի կամ ավելի ուտել նույնանման կերակուր: Հարկ է նշել, որ ճաշարանում մենք այն բանի ականատեսը դարձանք, որ պատրաստված ճաշի մոտ ¼-ը թափվում էր: Ըստ ճաշարանի աշխատողների դա ևս անլուծելի խնդիր է, քանի որ ճաշը պատրաստվում է ըստ կալանավորների թվաքանակի, իսկ նրանցից ոչ բոլորն են տվյալ օրը ճաշից օգտվելու ցանկություն ունենում:

- **Պատժախուց և կարանտին**

Պատժախցերը “Նուբարաշեն” քրեակատարողական հիմնարկում թվով երեքն են, որոնք իրենց հերթին ունեն հետևյալ խնդիրները՝ կիսանկուղային տեղակայվածությունը, թերի բնական օդափոխությունը, բնական թույլ լուսավորվածությունը, բարձր խոնավությունը, որոնք հանգեցնում են պատժախցերում տիրող անմխիթար և հակասանիտարական վիճակի: Դիտորդները պատժախցերում արձանագրեցին, որ դատապարտյալները պառկած էին բետոնապատ հատակին, իսկ հատակին և պատերի վրայով մագլցում էին բազմաթիվ միջատներ: Պատժախցի ընդհանուր մակերեսը կազմում է 30 քմ, բոլոր երեք պատժախցերը միանման են, այնտեղ գտնվողները հիմնականում բջջային

հեռախոսից օգտվելու համար են տեղափոխվել պատժախուց: Հարկ ենք համարում ավելացնել, որ շատ պարագաներում Վարդաշեն քրեակատարողական հիմնարկից այստեղ են բերվում դատապարտյալներ, երբ ծանրաբեռնված է լինում վերոնշյալ հիմնարկը:

Կարանտինային խցերը գտնվում են առաջին մասնաշենքում: Դրանք վերանորոգված չեն, գտնվում են խայտառակ անմխիթար և հակասանիտարական վիճակում, չունեն բավարար լուսավորություն: Խցերում չկա ինֆորմացիայի որևէ աղբյուր: Նոր բերված կալանավորները չունեն անկողին, օգտվում են կեղտոտ, խոնավ, բազմակի անգամ տարբեր անձանց կողմից օգտագործված անկողնային պարագաներից: Սակայն, կան նաև կալանավորներ, ովքեր ունեն անկողին և նրանց պայմանները համեմատաբար ավելի բարենպաստ են:

2.”Դատապարտյալների հիվանդանոց” քրեակատարողական հիմնարկ

- **Ընդհանուր տեղեկատվություն**

“Դատապարտյալների հիվանդանոց” քրեակատարողական հիմնարկը գտնվում է Երևանում: Սա միակ բուժական հաստատությունն է քրեակատարողական համակարգում: Այստեղ են բերվում բոլոր այն հիվանդ դատապարտյալները, ովքեր ունեն առողջական լուրջ խնդիրներ. հիվանդները կարող են տեղավորվել նաև քաղաքացիական հիվանդանոցներում համապատասխան հսկողության ներքո:

Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը 14.06.2010թ.-ից մինչև 18.06.2010թ.-ն ընկած ժամանակահատվածում 11:00-18:00-ն ընկած ժամերին այցելել է “Դատապարտյալների հիվանդանոց” ՔԿՀ:

ՔԿՀ-ն բաղկացած է 6 ստացիոնար, 4 պարակլինիկական և 1 դեղագործական բաժանմունքներից: Ըստ հիմնարկի պետի՝ 240 հաստիքից 80-ը բուժական են, 44-ը՝ ազատ հաստիք, 13-ը՝ տեսչական հաստիք, ինչը անբավարար է բնականոն աշխատանք կազմակերպելու համար: Որպես թվային անհամապատասխանության օրինակ պետը նշեց, որ հիմնարկն ունի 13 դիտակետ, և անվտանգությունն

ապահովելու համար հարկավոր է առնվազն 39 տեսուչ, մինչդեռ ներկայումս աշխատում են միայն 13-ը:

“Դատապարտյալների հիվանդանոց” քրեակատարողական հիմնարկն ունի երեք գոտի, որտեղ էլ կան համապատասխան բաժանմունքներ՝ առաջին գոտում՝ վիրաբուժական, ատամնաբուժական, ախտորոշման և ֆիզիոթերապևտիկ, երկրորդ գոտում՝ ինֆեկցիոն, հոգեբուժական, թերապևտիկ, երրորդ գոտում՝ թոքախտաբանական, նարկոլոգիական, ռենտգենաբանական և կլինիկակենսաբանական: Վիրաբուժական բաժանմունքի դիմացի մեկ հարկանի շինությունում գործում է ատամնաբուժական կաբինետ և վարսավիրանոց: Թոքախտաբանական և նարկոլոգիական բաժանմունքների մասնաշենքերը նորակառույց են, իսկ վիրաբուժական բաժանմունքի մասնաշենքը կառուցվել է 1828թ.-ին և կապիտալ վերանորոգման չի ենթարկվել անհիշելի ժամանակներից, իսկ ընթացիկ վերանորոգումներն իրականացվում են ելնելով անհրաժեշտությունից:

ՔԿՀ-ն նախատեսված է 460 դատապարտյալի համար, սակայն գործնականում այստեղ հնարավոր է ընդունել միայն 298 հիվանդ: Խնդիրը բացատրվեց հետևյալ կերպ. 2003թ.-ին կառուցվել է նոր բաժանմունքի մասնաշենքը, որը նախատեսված է 220 տուբերկուլյոզով հիվանդի համար: Ներկայումս տուբերկուլյոզով հիվանդների թիվը կտրուկ նվազել է, իսկ նշված բաժանմունքում բացի տուբերկուլյոզով հիվանդներից այլ հիվանդեր տեղավորել հնարավոր չէ: Այցելության պահին հիվանդանոցում գտնվում էր 279 հիվանդ: Ըստ հիմնարկի պետի՝ ևս 90 հիվանդ դատապարտյալներ օգտվել են պետպատվերով նախատեսված բուժօգնությունից: Դրանք հիմնականում այն հիվանդներն են, ովքեր չեն կարողացել ստանալ նեղ մասնագիտական բուժում դատապարտյալների հիվանդանոցում:

Օտարերկրացի հիվանդների պարագայում բուժումն ու սննդակարգը չեն տարբերվում այլ հիվանդ դատապարտյալների համար նախատեսվածից: Անկախ նրանից, թե մինչ հիվանդանոց բերվելը ինչ ռեժիմով են պահվել դատապարտյալները, հիվանդանոցում գործում է մեկ՝ ազատ ռեժիմ, որը հիվանդների համար նախատեսում է բուժման ժամերից զատ ազատ տեղաշարժ և զբոսանք հիվանդանոցի տարածքում մինչև քնելը: Անվտանգության նպատակով սեռական փոքրամասնությունները պահվում են առանձին հիվանդասենյակներում:

Հիմնարկի տարածքում է գտնվում դեղորայքի պահեստը, որտեղից դեղորայքը բաշխվում է երկրի բոլոր քրեակատարողական հիմնարկների միջև:

Հիմնարկը չունի ջեռուցման համակարգ, և ջեռուցումն իրականացվում է էլեկտրական սալիկներով: Այստեղ ապահովված է մշտական ջրամատակարարում, սարքին է նաև ջրահեռացման համակարգը: Անհրաժեշտ է նշել, որ "Դատապարտյալների հիվանդանոց" քրեակատարողական հիմնարկի հիգիենիկ և սանիտարական վիճակը բավարար է:

- **Կապն արտաքին աշխարհի հետ**

Կարճատև տեսակցություններ

Հիմնարկում կա կարճատև տեսակցությունների երկու սենյակ, որոնց մակերեսները փոքր են՝ հասնում են մինչև 20 քմ-ի: Սենյակները կահավորված են, և այդ հատվածում կա սանհանգույց: Ջեռուցումը կատարվում է էլեկտրական սալիկներով:

Երկարատև տեսակցություններ

Սույն հիմնարկում կա չորս երկարատև տեսակցության սենյակ: Բոլորը կահավորված են ժամանակակից կահույքով և հեռուստացույցներով, կա սանհանգույց և խոհանոց: Սենյակները ջեռուցվում են էլեկտրական սարքերով:

Հեռախոսակապ

Յուրաքանչյուր գոտում տեղադրված է մեկական տաքսաֆոն, որը նախատեսված է առանց սահմանափակումների օգտագործման համար՝ ըստ սահմանված գրաֆիկի: Ընդամենը գործում է չորս տաքսաֆոն:

Հանձնուքներ

ՔԿՀ-ի հանձնուքի ընդունման կետը բավական փոքր է, և միանգամից մի քանի ընտանիքների կուտակման դեպքում մի մասը ստիպված է սպասել դրսում: Հանձնուքի զննությունը կատարվում է ժամանակակից սարքավորումների միջոցով: Տարածքում չկա սանհանգույց:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

Հիմնարկում ազատազրկվածները կարող են լոգանք ընդունել ըստ նախապես հաստատված գրաֆիկի: Լոգարանը չի ջեռուցվում: “Դատապարտյալների հիվանդանոց” ՔԿՀ-ում գործում է լվացքատուն, որը համալրված է չորացնող սարքով, լվացքի մեքենաներով, որոնք, սակայն, հնամաշ են:

- **Հիվանդասենյակներ**

Ընդհանուր առմամբ “Դատապարտյալների հիվանդանոց” ՔԿՀ-ում հիվանդախցերը գտնվում են բարվոք վիճակում: Դատապարտյալների հետ ունեցած զրույցից պարզվեց, որ ընթացիկ վերանորոգման աշխատանքները հիմնականում իրականացվում են իրենց հարազատների կողմից բերված շինանյութով: Ինչ վերաբերում է ներքին կահավորանքին, ապա հեռուստացույցներն ու այլ էլեկտրական կենցաղային սարքերը (սառնարան, հովհարիչ, թեյնիկ, սրճեփ) բերվում են դատապարտյալների հարազատների կողմից: Հոգեբուժական բաժանմունքում այցելեցինք նաև խցեր, որոնք կապիտալ վերանորոգման կարիք ունեին: Բնական լուսավորվածությունը բավարար էր: Քանի որ հիվանդախցերի դռները չեն փակվում, և դատապարտյալները պատուհաններն ինքնուրույն բացելու հնարավորություն ունեն, օդափոխության խնդիր չի ծագում:

- **Զբաղվածություն**

Քանի որ տվյալ հիմնարկը նախատեսված է հիվանդ դատապարտյալների համար, ապա որևէ աշխատանքային ծանրաբեռնվածություն չկա: Տարբեր բնույթի տնտեսական աշխատանքներում են զբաղված միայն մի քանի դատապարտյալներ:

- **Սնունդ**

Մեր այցելության պահին ճաշարանում պատրաստվում էր երկու ճաշատեսակ, որոնք իրենց օրգանոլեպտիկ հատկություններով համապատասխանում էին հիվանդի համար նախատեսված սննդի չափանիշներին: Խոհանոցը կարիք ուներ ընթացիկ վերանորոգման: Օդափոխության սարքերը կարիք ունեին նորացման: Ինչպես և մեր այցելած մնացած բոլոր ՔԿՀ-ներում, այնպես էլ “Դատապարտյալների հիվանդանոց”

ՔԿՀ-ում ճաշը բաժանելուց հետո մնում է ավելցուկ ամբողջի մոտ 20-30%-ի չափով, որն ըստ ճաշարանի աշխատողների թափվում է:

3.”Վարդաշեն” քրեակատարողական հիմնարկ

- **Ընդհանուր տեղեկատվությունը**

“Վարդաշեն” քրեակատարողական հիմնարկը նախատեսված է իրավապահ մարմինների ազատազրկված նախկին աշխատակիցների և օտարերկրացիների պահման համար: Հիմնարկության շենքը կառուցվել է 1996թ.-ին, վերակառուցվել՝ 2003-2004թթ.-ին: Վերջին կապիտալ վերանորոգումը տեղի է ունեցել 2005 թվականին, ինչի արդյունքում հնարավոր է դարձել դատապարտյալներին խցային պայմաններում պահելը:

Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը 21.06.2010թ.-ից մինչև 25.06.2010թ.-ն ընկած ժամանակահատվածում 11:00-18:00-ն ընկած ժամերին այցելել է “Վարդաշեն” ՔԿՀ:

Սույն քրեակատարողական հիմնարկի համար հաստատված է հետևյալ լրակազմը.

ա) փակ ուղղիչ հիմնարկ – 5 մարդ,

բ) կալանք պատժատեսակ - 5 մարդ,

գ) կիսափակ ուղղիչ հիմնարկ - 25 մարդ,

դ) կիսաբաց ուղղիչ հիմնարկ - 70 մարդ,

ե) բաց ուղղիչ հիմնարկ - 15 մարդ,

զ) կալանավորվածներին պահելու վայր - 34 մարդ:

Ըստ լրակազմի՝ “Վարդաշեն” ՔԿՀ-ն նախատեսված է 135-140 կալանավորվածների և դատապարտյալների համար: 2010 թվականի հունիս ամսվա դրությամբ այստեղ գտնվում էր 55 կալանավորված, 146 դատապարտյալ: Հիմնարկը բաղկացած է մեկուսարանից, դատապարտյալներին պահելու վայրից և բուժմասից:

ՔԿՀ-ի վերանորոգումից հետո տեղադրվել են մետաղապլաստե պատուհաններ, զուգարանները մեկուսացված են և սալիկապատ: Կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրում խցերը 2-4 տեղանոց են, իսկ կիսաբաց

ուղղիչ հիմնարկում՝ մինչև 8 տեղանոց: Խցերի հատակը փայտից է: Հիմնարկն ունի ջրամատակարարման լուրջ խնդիրներ. ջրամատակարարումը կատարվում է օրական երկու անգամ երկուական ժամով: Հարկ է նշել, որ ջրամատակարարումը լուրջ խնդիր է ողջ Նուբարաշեն թաղամասի համար, որտեղ գտնվում է քրեակատարողական հիմնարկը:

- **Կապն արտաքին աշխարհի հետ**

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների համար գործում է երեք տեսակցության սենյակ՝ 8 քմ-ից մինչև 21 քմ: Սենյակներից մեկը գտնվում է կիսաբաց ուղղիչ հիմնարկի տարածքում, իսկ մյուս երկուսը՝ այն մասնաշենքի տարածքում, որտեղ պահվում են կալանավորներն ու դատապարտյալները: Կալանավորներին և դատապարտյալներին պահելու վայրում գտնվող կարճատև տեսակցությունների սենյակները նախատեսված են մեկական տեսակցության համար: Սրանք օգտագործվում են որպես քննչական սենյակներ:

Կիսաբաց ուղղիչ հիմնարկի կարճատև տեսակցությունների սենյակը նախատեսված է միաժամանակ 4 տեսակցության համար. այստեղ կա 4 սեղան և 8 նստարան, կից գործում է սանհանգույց:

Երկարատև տեսակցություններ

Սույն հիմնարկն ունի 2 երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակ, որոնցից յուրաքանչյուրի մակերեսը հավասար է 20 քմ-ի: Սենյակները կահավորված են աթոռներով, սեղանով, մահճակալներով: Սենյակներն ունեն բավարար բնական և արհեստական լուսավորություն: Դրանց կից գտնվում է ընդհանուր զուգարանը, բաղնիքը, խոհանոցը՝ անհրաժեշտ սառնարանով, թեյնիկով և սպասքով:

Հեռախոսակապ

“Վարդաշեն” ՔԿՀ-ում գործում է հեռախոսակապ, որից շուրջօրյա (բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի) օգտվում են կիսաբաց ուղղիչ հիմնարկի

ազատազրկվածները: Իսկ կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրում գտնվող ազատազրկվածները օգտվում են հեռախոսակապից ժամանակացույցին համապատասխան՝ շաբաթը 2 անգամ:

Հանձնուքներ

ՔԿՀ-ում հանձնուքի ընդունման կետը փոքր սենյակ է: Դատապարտյալների հարազատները հանձնուքը փոխանցելու համար այդ սենյակ են մտնում անմիջապես դրսից: Հերթերի գոյացման դեպքերում հարազատները ստիպված են լինում դրսում սպասել, որտեղ չկա որևէ հարմարություն: Հանձնուքի զննությունը կատարվում է ժամանակակից “Ռապիսկան” սարքով:

- **Խցեր**

“Վարդաշեն” ՔԿՀ-ում գոյություն ունեն երկու տիպի խցեր՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկի խցեր և կալանավորվածներին ու դատապարտյալներին պահելու համար նախատեսված վայրի խցեր:

Կիսաբաց ուղղիչ հիմնարկի խցեր

Կիսաբաց ուղղիչ հիմնարկի խցերը տարբեր մակերեսներ ունեն՝ սկսած 12 քմ-ից մինչև 30 քմ, որտեղ պահվում են համապատասխանաբար 3-8 դատապարտյալ. ընդհանուր առմամբ յուրաքանչյուրի համար ապահովվում է 4 քմ տարածք: Խցերի դռները փայտյա են, չունեն կողպեք, և դատապարտյալները ցերեկային ժամերին կարող են ազատ շրջել հիմնարկի՝ իրենց համար նախատեսված տարածքում: Խցերում կան զգեստապահարաններ, զուգարանն առանձնացված է, բնական լուսավորությունը՝ բավարար: Հիմնարկն ունի խնդիրներ՝ կապված կենտրոնացված ջեռուցման հետ, և խցերը տաքացվում են էլեկտրական սալիկների միջոցով, որոնք բերվում են կալանավորների հարազատների կողմից: Ինչպես Նուբարաշեն թաղամասում գտնվող մյուս բոլոր ՔԿՀ-ներում, այնպես էլ “Վարդաշեն” ՔԿՀ-ում լուրջ խնդիր է իրենից ներկայացնում ջրամատակարարումը, որը կատարվում է ժամանակացույցով, ինչը բավարար չէ կալանավորների և դատապարտյալների

կարիքները հոգալու համար: Մեր այցելության պահին գրեթե բոլոր խցերի հատակներին շարված էին մեծ թվով ջրով լի շշեր:

Կալանավորներին և դատապարտյալներին պահելու վայրի խցեր

Այս տիպի խցերը նախատեսված են 2-4 կալանավորների համար, սակայն գերծանրաբեռնվածության հետևանքով դրանցից մի քանիսում պահվում էր 6 ազատազրկված: Խցերի բնական լուսավորությունը բավարար է, իսկ ինչ վերաբերում է արհեստական լուսավորությանը, ապա տեղադրված է տարբեր տեսակի 2 լամպ. մեկը լուսավորություն է ապահովում մինչև քնելու ժամը, իսկ երկրորդը գիշերային ժամերին թույլ լուսավորություն ապահովելու համար է:

Հիմնարկում պահվում են 28 օտարերկրյա քաղաքացի(Ռումինիայից, ՌԴ-ից, Իրանից, Աֆղանստանից, Ֆրանսիայից): Օտարերկրացիների համար նախատեսված խցերից մեկում հանդիպեցինք Իրան քաղաքացի 6 կալանավորի: Խցում 6 հոգի է, 6 մահճակալ, իսկ խցի մոտավոր մակերեսը՝ 12 քմ: Պատերին գրված են պարսկերեն գրություններ, տեղադրված է մեկ հեռուստացույց, DVD, սառնարան, փոքրիկ օդափոխիչ: Խցում 4 օր ջուր չէր եղել, նամազի համար տարածքը փոքր է, իսկ սննդի յուղոտ լինելու պատճառով պարսիկները չեն օգտվում ճաշարանից: Իրանցիներից 3-ի նկատմամբ, վերջիններիս խոսքերով, ոստիկանական բաժանմունքում բռնություն է կիրառվել: Թարգմանիչն եղել է բաժանմունքի աշխատող Ա. Կարապետյանը, տրամադրվել է հանրային պաշտպան, որի ծառայությունից օգտվելու համար նրանցից յուրաքանչյուրը վճարել է համապատասխանաբար 1200, 1500 և 2000 ԱՄՆ դոլար: Հարկ է նշել, որ իրանցիներից Աջբատ Ահմադի Փուրը և Ռահիմ Ալի Բիբակը մեղադրվում էին խոշոր չափի թմրանյութ ներկրելու մեջ: Նրանք ձերբակալվել էին օդանավակայանում: Իրանի դեսպանատունը չի հետաքրքրվում վերջիններիս գործերով:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

Լոգանքը

Հիմնարկն ունի 3 բաղնիք, որոնք տարբեր չափերի են: Կալանավորներին և դատապարտյալներին պահելու վայրն ունի բաղնիք, որտեղ տեղադրված է 3 ցնցուղ: Լոգանք ընդունում են շաբաթը մեկ անգամ:

Տաք ջրամատակարարումն ապահովելու համար տեղադրված են տարբեր տարողության բաքեր, որոնցում ջուրը տաքացվում է էլեկտրականությամբ: Երբեմն տաք ջուրը չի բավականացնում բոլոր ազատազրկվածներին լողանալու համար: Որպեսզի ջուրը հասնի բաղնիքներ, այն մատակարարվում է լրացուցիչ պոմպերի միջոցով:

Դատապարտյալների անկողնային պարագաները մաքրվում և չորացվում են դրա համար նախատեսված համապատասխան վայրում, սակայն հաճախ կալանավորները կամ դատապարտյալները հանձնուքի հետ ստանում են թարմ անկողնային պարագաներ: Լվացքատունը գտնվում է բարվոք վիճակում:

- **Բուժսպասարկում**

“Վարդաշեն” ՔԿՀ-ի բուժմասի շենքի մի հատվածը գտնվում է հողի մեջ, և անձրևոտ եղանակի ժամանակ խոնավության մակարդակը խիստ բարձրանում է: Դրա պատճառով պատերին առաջացել են ճաքեր և ներկն սկսել է թափվել: Բուժմասը բաղկացած է 3 հիվանդասենյակից՝ ընդամենը՝ 5 մահճակալով և բաղնիքից՝ մեկ ցնցուղով:

Այստեղ գործում է ատամնաբուժական սենյակ՝ համապատասխան սարքավորումներով: Ըստ բուժմասի պետի՝ հիմնարկությունը դեղորայք է ստանում “Դատապարտյալների հիվանդանոց”-ի պահեստից: Դեղորայքի պակաս չի զգացվում: Ֆլուորագրաֆիան կատարվում է “Նուբարաշեն” ՔԿՀ-ում: Հիմնարկն ունի ԷՍԳ, իսկ լաբորատոր հետազոտությունների համար դարձյալ օգտվում է կամ “Նուբարաշեն” ՔԿՀ-ից, կամ դիմում է “Էրեբունի” կլինիկական հիվանդանոց: Բացակայում են փոքրաածավալ վիրաբուժության համար նախատեսված

պարագաները, ստերիլ վիրակապարանը. սոնոգրաֆիայի սարքավորումների, ինչպես նաև լաբորատորիայի առկայությունը ցանկալի կլիներ:

Բուժմասի աշխատողների հաստիքներն են՝ 2 բժիշկ, բուժակ, կես դրույքով աշխատող վարձու բժիշկներ՝ նևրոպաթոլոգ, վեներոլոգ, ատամնաբույժ, ակնաբույժ:

- **Զբաղվածությունը**

"Վարդաշեն" ՔԿՀ-ում աշխատանքային զբաղվածություն ապահովված չէր: Ծրագրվում էր 2010 թվականի հուլիսի 15-ին վարչության օժանդակությամբ կոշիկների տակացուների վերանորոգման փոքր ձեռնարկություն բացել, որտեղ կլիներ՝

- հաստիքով աշխատող՝ 15 հոգի,
- Թափուր տեղ՝ 2 հոգու համար նախատեսված
- Աշխատավարձ՝ 30 000 դրամ:

Հիմնարկն ունի մեծ սպորտային դահլիճ, որի կենտրոնական մասում իրարից մոտավորապես 3 մետր հեռավորության վրա տեղադրված էին թենիսի սեղաններ: Դահլիճի աջակողմյան մասում պատի տակ դրված էին 3-4 ծանրաքարեր, կար մեկ հորիզոնական բար և դաշնամուր: Սպորտդահլիճն ունի իր բաղնիքը՝ երկու ցնցուղով, և մեկ միջին չափի ջրի բաք, որը նախատեսված է 8-10 հոգու լոգանքի համար:

Զբոսանքը

Սույն ՔԿՀ-ում գործում է 3 զբոսահրապարակ, որոնք գտնվում են հիմնարկի բակում: Զբոսահրապարակները ունեն տարբեր մակերեսներ՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկի զբոսահրապարակը 200 քմ է, իսկ կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու համար վայրի զբոսահրապարակը՝ 300 քմ: Սպորտով զբաղվելու հնարավորություն կա միայն կիսաբաց ուղղիչ հիմնարկում:

Գրադարան

Գրքերի քանակը 3025 կտոր է: Դրանք հին են, չեն նորացվում, և դատապարտյալները գրեթե չեն օգտվում գրադարանից:

- **Սնունդը**

Խոհանոցում կա փոքր սառնարան, միջին չափի վառարան, որի վրա դրված է 6-7 կաթսա՝ կիսով չափ տեղավորված: Ճաշացանկը հիմնականում բաղկացած է մակարոնեղենից, կարտոֆիլով և մսով պատրաստվող ապուրից և ոսպից: Այցելության ժամանակ սննդամթերքը նոր էին ստացել՝ խտացրած կաթ, ձկան պահածոներ:

Ըստ խոհարարի՝ պատրաստված ուտելիքի մոտ կեսը թափվում է: Ցանկալի կլիներ խոհանոցը վերազինել մեծ վառարանով և սառնարանով, քանի որ ներկայումս գործող սարքավորումների չափերը չեն բավականացնում խոհանոցը տաքացնելու և ամբողջ սնունդը տեղավորելու համար:

4.”Էրեբունի” քրեակատարողական հիմնարկ

- **Ընդհանուր տեղեկատվություն**

“Էրեբունի” քրեակատարողական հիմնարկը բաց և կիսաբաց տիպի է, որտեղ պահվում են միայն դատապարտյալները:

Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը 28.06.2010թ.-ից մինչև 02.07.2010թ.-ն ընկած ժամանակահատվածում 11:00-18:00-ն ընկած ժամերին այցելել է “Էրեբունի” ՔԿՀ:

Այստեղ դատապարտյալները տեղաբաշխված են երեք մասնաշենքերում, որոնք կառուցվել են դեռ խորհրդային տարիներին: Հիմնարկը կառուցված է սողանքային և բարձր խոնավություն ունեցող գոտում, ինչի պատճառով շինությունների մեծ մասը գտնվում է վթարային վիճակում:

ՔԿՀ-ն նախատեսված է 391 դատապարտյալի համար՝ բաց ուղղիչ հիմնարկ՝ 20 մարդ, կիսաբաց ուղղիչ հիմնարկ՝ 371 մարդ, սակայն 2010 թվականի հուլիս ամսվա դրությամբ հիմնարկում իրենց պատիժն էին կրում 522 դատապարտյալ: Բաց տեսակի քսան տեղից այցելության պահին զբաղված էին միայն տասը: Մինչև “քուն”

հայտարարելը, այսինքն՝ մինչև ժամը 23:00-ը, դատապարտյալները ազատ կարող են տեղաշարժվել հիմնարկի տարածքով:

Հիմնարկի համար նախատեսված է 190 հաստիք, որոնցից 186-ը քրեակատարողական ծառայողներ են, 4-ն՝ ազատ վարձու աշխատողներ: 2010 թ.-ի հուլիս ամսվա դրությամբ համալրված էր 183 հաստիք, որոնցից 176-ը քրեակատարողական ծառայողներ էին, 4-ը՝ ազատ վարձու աշխատողներ, 2-ը՝ բուժմասում բուժակ, 1-ը՝ տնտեսմասում էլեկտրիկ: Ըստ ՔԿՀ-ի պետի՝ հաստիքները չեն բավականացնում հատկապես անվտանգության ապահովման ոլորտում:

Հիմնարկի տարածքում գործում է հաշվառման հրապարակ. յուրաքանչյուր օրը երկու անգամ կատարվում է հաշվառում:

Անվտանգությունը 2 տեսակի է՝ ներքին և արտաքին. արտաքինը ներառում է 7 դիտակետ, որտեղ գտնվում են անվտանգության զինված աշխատողներ, իսկ ներքին անվտանգությունն իրենից ներկայացնում է համապատասխան վայրի պատասխանատու հերթապահներին:

- **Կապն արտաքին աշխարհի հետ**

Կարճատև տեսակցություններ

“Էրեբունի” քրեակատարողական հիմնարկն ունի մեկ կարճատև տեսակցությունների սենյակ, որը նախատեսված է միաժամանակ 6 տեսակցության համար: Տեսակցությունների ընթացքում անմիջական շփման հնարավորություն է ստեղծված, չկան ապակեպատ միջնորմներ: Սենյակը կահավորված է 6 սեղանով և 12 նստարաններով: Մեկ սեղանի շուրջ միաժամանակ կարող է տեղավորվել մինչև 8 մարդ: Տեսակցության սենյակը չունի առանձնացված սանհանգույց;

Դատապարտյալներն կարող են օգտվել տեսակցության իրավունքից ամսական 1 անգամ, մինչև 4 ժամ տևողությամբ:

Երկարատև տեսակցություններ

Երկարատև տեսակցությունների համար նախատեսված է 12 սենյակ՝ բոլորը վերանորոգված: Սենյակներն ունեն տարբեր մակերեսներ՝ 7 քմ-ից մինչև 15 քմ: Սենյակների կահավորանքը նույնպես տարբեր է, բոլոր սենյակներում կան աթոռներ,

սեղան, մեկ մեծ կամ երկու առանձին մահճակալ, որոշ սենյակներում՝ բազմոց, պահարան, սառնարան: Ջեռուցումն իրականացվում է էլեկտրականությամբ: Սենյակներին կից գործում է երկու ընդհանուր սանհանգույց՝ կանանց և տղամարդկանց: Գործում է նաև առանձին լոգարան՝ նախատեսված մեկ անձի համար: Սենյակներին կից գործում է ընդհանուր խոհանոց՝ բոլոր անհրաժեշտ պարագաներով:

Այցելուները "Էրեբունի" քրեակատարողական հիմնարկում մաքուր օդի դուրս գալու հնարավորություն չունեն: Այս հանգամանքը նշանակում է, որ տեսակցության եկածները պարտավոր են 3 օր շարունակ գտնվել սենյակում, քանի որ ընդհանուր երկարատև տեսակցությունների սենյակի մուտքի դուռը դրսից փակվում է կողպեքով: Ընտանիքի անդամների հետ երկարատև տեսակցության (երեք օր տևողությամբ) հնարավորություն ստանալու խնդրանքով հիմնարկի պետին կարող են դիմել այն դատապարտյալները, ովքեր օրինակելի վարքագիծ են ցուցաբերել: Դիմումները հավաքվում են մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը, ինչից հետո կազմվում է ժամանակացույց:

Հեռախոսակապ

Հիմնարկի տարածքում տեղադրված են տաքսաֆոններ, որոնցից դատապարտյալները կարող են օգտվել ամեն օր՝ առանց սահմանափակումների: Դատապարտյալների կողմից տրամադրվող հեռախոսակապին վերաբերող դժգոհություններ չեն արձանագրվել:

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունումը և զննությունը կատարվում է մոտավորապես 30 քմ մակերես ունեցող սենյակում, որը գտնվում է վարչական շենքի առաջին հարկում: Այստեղ տեղադրված է զննության ժամանակակից "Ռապիսկան" սարք: Հիմնարկում գործում է կրպակ, որից կարող են օգտվել դատապարտյալները: Անհրաժեշտ է նշել, որ խանութի գները համապատասխանում են Երևանում գործող խանութների միջին գներին:

2010թ.-ի դեկտեմբեր ամսից սկսած “Էրեբունի” ՔԿՀ-ի վարչական շենք տանող ճանապարհի վրա հիմնարկի ադմինիստրացիայի կողմից տեղադրվել է ուղեփակոց, որը թույլ չի տալիս դատապարտյալների հարազատներին ավտոմեքենաներով մոտենալ վարչական մասնաշենքին հանձնուքներ փոխանցելու համար: Այցելուների հարցին, թե ինչ նպատակով է կատարվել այդ փոփոխությունը և արհեստական խոչընդոտ ստեղծվել կալանավորների հարազատների համար, ովքեր ստիպված են ծանրաբեռնված պայուսակներով շուրջ 100 մ քայլել մինչ հանձնուքի ընդունման կետ հասնելը, աշխատակիցները խուսափողական պատասխան են տվել:

- **Հանրակացարաններ**

“Էրեբունի” ՔԿՀ-ում մասնաշենքերը երեք հարկանի են և բաժանված են հանրակացարանների: Հանրակացարանները թվով երեքն են, որոնք գերբնակեցված են: Այս պատճառով յուրաքանչյուր բանտարկյալի համար օրենքով նախատեսված 4 քմ տարածքը չի ապահովվում: Հանրակացարաններից մեկն առանձնացված է և նախատեսված է կրոնական փոքրամասնություն հանդիսացող Եհովայի վկաների համար: Հերթապահները նշում են, որ ներքին կարգապահական կանոնների խախտման առումով վերջիններիս հետ խնդիրներ չեն առաջանում: Առանձին հանրակացարանում են պահվում նաև համասեռամոլները: Հիմնարկի տարածքը մաքրելու պարտականությունը դրված է նրանց վրա: Հիմնարկում իրենց պատիժը կրում են նաև օտարերկրյա քաղաքացիներ, որոնցից 4-ը ՌԴ-ից են, 2-ը՝ Վրաստանից, 2-ը՝ Թուրքմենստանից: Օտարերկրացիների պահման կարգը ոչնչով չի տարբերվում Հայաստանի քաղաքացի հանդիսացող դատապարտյալների պահման կարգից:

Հիմնարկը կառուցվել է 80-ականներին և գործել է որպես բուժիչ աշխատանքային պրոֆիլակտիկ հիմնարկ: Հանրակացարանների մասնաշենքերը գտնվում են վթարային վիճակում, կարիք ունեն կապիտալ վերանորոգման: Հանրակացարաններն ունեն ընդհանուր սանհանգույց և լվացարան՝ անշուք վիճակում: Ջեռուցումը կենտրոնացված չէ, իրականացվում է էլեկտրական սարքերի միջոցով: Հանրակացարանների պատուհանների մեծամասնությունը ապակու փոխարեն պատված էր պոլիէթիլենային թաղանթով: Պետի տեղակալը տեղեկացրեց, որ ապակիները հանվել են դատապարտյալների կողմից, քանի որ ամռան ամիսներին

բավականին շոգ է: Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խմբի 2003թ.-ի մոնիտորինգից հետո ընկած ժամանակահատվածում “Էրեբունի” ՔԿՀ-ում որևէ զգալի փոփոխություն տեղի չի ունեցել: Այն հանրակացարանները, որոնք համեմատաբար բարվոք վիճակում էին գտնվում, վերանորոգվել էին դատապարտյալների կամ իրենց հարազատների միջոցներով:

- **Սանիտարահիգիենիկ վիճակ**

Լոգանք

Հիմնարկն ունի լուրջ խնդիր՝ կապված ջրամատակարարման հետ: Պետի տեղակալի հետ զրուցելու ժամանակ տեղեկացանք, որ ժամով ջրամատակարարման հիմնական պատճառը ջրագծի ճանապարհին կառուցված քարի մշակման արտադրամասերն ու ռեստորանային համալիրն է, վերջինս ունի նաև սառնա: Այս հաստատությունները օգտագործում են մեծ քանակությամբ ջուր, ինչի պատճառով այն շատ դեպքերում չի հասնում ՔԿՀ: Ջրի պակասի խնդիրը մասամբ լուծելու համար ջուր եղած ժամանակ այն լցնում են լողավազանի մեջ, որպեսզի դատապարտյալները կարողանան լվացվել ու իրենց կարիքները հոգալ:

“Էրեբունի” ՔԿՀ-ում գործում է մեկ բաղնիք իր հանդերձարանով: Բաղնիքում կա 9 ցնցուղ, սակայն ջրի հոսքն ուժեղացնելու նպատակով դատապարտյալները հանել էին դրանք, արդյունքում նրանք լոգանքն ընդունում էին անմիջապես խողովակից հոսող ջրի տակ: Տաք ջրամատակարարում ապահովելու համար տանիքում տեղադրված է 5 տոննա տարողությամբ բաք: Լոգանք ընդունում են նախօրոք կազմված ժամանակացույցով, ամեն օր ժամը 09:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում:

Լոգարանին կից գործում են համապատասխան սարքավորումներով համալրված լվացքատուն, չորանոց, վարսավիրանոց: Լվացքատունն ունի երեք՝ 6-7 տարվա հնության լվացքի մեքենա: Այստեղի աշխատանքներն իրականացվում են դատապարտյալների կողմից: Լվացքատնից օգտվողները շատ չեն. որոշ դատապարտյալներ անձամբ են լվանում իրենց հագուստները: Լվացքատան ծառայություններն անվճար են:

- **Բուժսպասարկում**

Բուժսպասարկումն իրականացնում են 3 բժիշկ՝ գլխավոր բժիշկը, ատամնաբույժը, թերապևտը: Հնարավորություն է ընձեռված օգտվելու վարձու բժիշկների ծառայություններից: Նախատեսված է 9 վարձու բժշկի հաստիք, որոնցից չորսը զբաղված են: Նրանք են մաշկաբանը և սրտաբանը:

Բուժմասում առանձնացված է 10 պալատ՝ 19 մահճակալներով: Այցելության ժամանակ բուժմասում գտնվում էր 16 դատապարտյալ:

Բուժմասը չունի ախտորոշման հնարավորություն, ԷՍԳ-ի սարքավորում, սոնոգրաֆիա: Տարին երկու անգամ իրականացվում է ընդհանուր ֆլուորագրաֆիա՝ շրջիկ մեքենաների օժանդակությամբ:

Դեղորայքի վերաբերյալ գանգատներ չեն արձանագրվել: Գործում է ատամնաբուժության համար նախատեսված և համապատասխանաբար կահավորված կաբինետ: Ծանր հիվանդ դատապարտյալների առկայության դեպքում, որոնց բուժօգնությունը հնարավոր չի լինում կազմակերպել ՔԿՀ-ում, վարչությունից ստանալով համապատասխան թույլտվություն, տվյալ հիվանդները տեղափոխվում են կա°մ կենտրոնական հիվանդանոց, կա°մ էլ “Էրեբունի” կլինիկական հիվանդանոց: Ըստ բուժմասի պետի՝ հիվանդներին տեղափոխելու հարցի հետ կապված որևէ խնդիր կամ խոչընդոտ չի առաջանում:

- **Զբաղվածությունը**

“Էրեբունի” ՔԿՀ-ի տնտեսական ոլորտում աշխատում է 22 դատապարտյալ, որոնք ունեն իրենց համար նախատեսված սենյակներ՝ մյուս դատապարտյալներից առանձին: Փոքր է նաև այն դատապարտյալների թիվը, ովքեր օգտվում են “Աջակցություն դատապարտյալին” հիմնադրամի կողմից տրամադրվող փայտից կամ այլ նյութերից ձեռքի աշխատանքներ պատրաստելու հնարավորություններից:

Այցելության պահին կինոֆիլմ դիտելու սրահը վերանորոգվում էր: Կան հարմարեցված տարածքներ, որտեղ դատապարտյալներն իրենց նախասիրություններին համապատասխան գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու հնարավորություն ունեն: Այս դատապարտյալներին ադմինիստրացիան

տրամադրում է համապատասխան գործիքներ, որոնք օրվա վերջում հավաքվում են: Հիմնարկության տարածքում կա ֆուտբոլի դաշտ, սպորտհրապարակ:

Հիմնարկում գործում է գրադարան 3755 կտոր գրքերով: Գրքերի հիմնական մասը պահպանվել է խորհրդային տարիներից, ինչի պատճառով մեծ է այն ժամանակաշրջանին բնորոշ կոմունիստական գաղափարախոսություն քարոզող գրականության բաժինը, որը ներկայումս ժամանակակից ընթերցողին չի հետաքրքրում: Պետի խոսքերի համաձայն, մեր այցելությունից որոշ ժամանակ առաջ "Ժողովրդական կուսակցության" նախագահ Տ. Կարապետյանը մեծ թվով գրքեր է նվիրաբերել հիմնարկին: Նրա խոսքերով՝ հիմնարկը պատրաստվում էր համալրվել նաև համակարգիչներով:

"Էրեբունի" ՔԿՀ-ում գործում է մատուռ, որը կառուցվել է դատապարտյալների և նրանց հարազատների միջոցներով:

- **Սնունդ**

Ըստ "Էրեբունի" ՔԿՀ-ի պետի՝ միայն սննդամթերքի վրա յուրաքանչյուր կալանավորի հաշվով փաստացի ծախսվում է օրական 550-700 դրամ՝ կախված ճաշացանկից:

Ճաշարանը համալրված է հինգ մեծ ինքնաեռ կաթսաներով, որոնց մեջ պատրաստվում է դատապարտյալների սնունդը: Տեղադրված է մեկ փոքր չափսի վառարան և չորս փոքր խոհանոցային սեղան: Խոհանոցը սպասարկվում է 4 խոհարարների կողմից: Խոհանոցի խոհարարների համար նախատեսված է բաղնիք, որն ունի մեկ ցնցուղ: Ամեն օր ճաշարանից օգտվում է 300-350 դատապարտյալ:

Սննդամթերքի ավելցուկը, որը կարող է հասնել 30%-ի, թափվում է: Կա մեծ սառնարան, որը բավարար է անհրաժեշտ սննդամթերքի պահման համար: Ամեն օր պատրաստված ճաշատեսակներից նմուշ է վերցվում և պահվում սառնարանում: Ինչ վերաբերում է ճաշացանկին, ապա այստեղ փոփոխություններ չեն կատարվում, իսկ պատրաստված ուտելիքը աչքի չի ընկնում համային և որակական բարձր հատկանիշներով:

- **Պատժախուց և կարանտին**

Պատժախուցն ու կարանտինը գտնվում են նույն շենքում և հիմնարկության ամենանոր կառույցներն են: Կարանտինային հատվածը բաղկացած է երեք խցից, որտեղ մեր այցելության պահին պահվում էր նոր բերված երեք դատապարտյալ:
Պատժախցերի համար նախատեսված է տասը խուց՝ 15-20 քմ մակերեսով: Յուրաքանչյուր պատժախցում տեղադրված է հինգ մահճակալ՝ երկուական տեղով: Պատժախցերում գտնվում էր ութ դատապարտյալ, որոնցից երկուսը տնտեսական մասի աշխատակիցներ էին: Պատժի հիմնական պատճառը բջջային հեռախոսների օգտագործումն է, ինչն արգելված է: Կարանտինը և պատժախցերը գտնվում են երեք հսկիչների հսկողության տակ:

5.”Կոշ” քրեակատարողական հիմնարկ

- **Ընդհանուր տեղեկատվություն**

“Կոշ” ՔԿՀ-ի շենքը կառուցվել է 1959 թվականին և գործել է որպես ավտոմեխանիզացիայի պարկ: Հիմնարկը թեև կիսափակ տեսակի է, սակայն շենքային պայմաններով չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին. այն ամբողջովին կիսաբաց տեսակի հիմնարկի կառուցվածք ունի, այսինքն՝ դատապարտյալները պահվում են ոչ թե խցերում, այլ կացարաններում:
Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը 05.07.2010թ.-ից մինչև 09.07.2010թ.-ն ընկած ժամանակահատվածում 11:00-18:00-ն ընկած ժամերին այցելել է “Կոշ” ՔԿՀ:
Հիմնարկը նախատեսված է 640 դատապարտյալի համար, մինչդեռ այցելության պահին այստեղ իրենց պատիժն էին կրում 795 մարդ: Հայաստանի քաղաքացիներից բացի ՔԿՀ-ում իրենց պատիժն էին կրում նաև Ռուսաստանի քաղաքացիներ. վերջիններիս պահման պայմանները ոչնչով չէին տարբերվում ՀՀ քաղաքացիների պահման պայմաններից: Ռուս դատապարտյալներից մեկը զբաղվում էր փայտամշակմամբ: Ցմահ դատապարտյալներ “Կոշ” քրեակատարողական հիմնարկում չեն պահվում: Հանդիպեցինք կրոնական փոքրամասնության ներկայացուցիչներին, ովքեր գտնվում էին առանձին կացարանում, և տեղեկացանք,

որ, համաձայն հիմնարկության պետի որոշման, ամիսը երկու անգամ նրանց այցելում է իրենց հոգևոր առաջնորդը: Հիմնարկի ծանրաբեռնվածության պատճառով հնարավոր չի լինում ապահովել յուրաքանչյուր դատապարտյալի համար օրենքով նախատեսված 4 քմ տարածքը:

Հիմնարկն ունի ջեռուցման հետ կապված խնդիրներ. ջեռուցումը կենտրոնացված չէ և իրականացվում է էլեկտրական սալիկների միջոցով: Խնդիրներ կան նաև ջրամատակարարման ոլորտում, սակայն տեղեկացանք, որ դրանք լուծելու ուղղությամբ կատարվում են աշխատանքներ. կառուցվում է նոր խողովակաշար, որը կապահովի լիարժեք ջրամատակարարում: Մինչ կառուցման աշխատանքների ավարտը խողովակաշար է անցկացվել Ավան գյուղից, ինչը որոշ չափով թեթևացրել է առկա խնդիրները: Բավականին լուրջ է ջրահեռացման հետ կապված խնդիրը. ջրահեռացման խողովակների ոչ ճիշտ շահագործման արդյունքում մոտակա գյուղերի պտղատու այգիներին մեծ վնաս է հասցվում: Էլեկտրաֆիկացիայի հետ կապված խնդիրներ չկան. կա գեներատոր, որը հոսանքազրկման դեպքում ապահովում է հիմնարկի բնականոն աշխատանքը:

Ֆինանսավորումն իրականացվում է ՔԿՀ վարչության կողմից՝ համապատասխան բյուջեով: Մուտքեր կան նաև բարեգործական օգնությունների տեսքով, որոնցից մի մասը կազմակերպում է “Ժողովրդական կուսակցության” առաջնորդ Տիգրան Կարապետյանը:

Հիմնարկն ունի 3 սպա բժշկի և 4 բուժակի հաստիք, որոնցից 3-ը թափուր են: Կրտսեր սպայական կազմի 120 հաստիքի փոխարեն համալրված է 115-ը, սպայական կազմի 56 հաստիքի փոխարեն՝ 55-ը, ազատ վարձու 6 հաստիքի փոխարեն՝ 4-ը: Այցելության պահին զբաղված էր 174 հաստիքը: Կադրերի հավաքագրումն իրականացվում է ԶԼՄ-ներում համապատասխան հայտարարությունների միջոցով, բայց, որպես այդպիսին, համալրում տեղի չի ունենում: ՔԿՀ-ի պետի կարծիքով իր աշխատակիցների պատրաստվածության աստիճանը միջին է: Վերապատրաստումն իրականացվում է Արդարադատության նախարարությունում:

Միջին աշխատավարձը դրամով կազմում է՝

- բժշկի համար՝ 100 000 - 120 000,
- բուժակի համար՝ 30 000 - 40 000,

- հսկիչի համար՝ 100 000 - 120 000:

Հիմնարկում գործում է համապատասխան հանձնաժողով, որն անհրաժեշտության դեպքում դիմում է Կառավարություն՝ պետական պատվերի շրջանակներում ՔԿՀ-ի աշխատողներին կացարանով ապահովելու համար:

Ագրեսիայի դեպքեր հիմնականում չեն արձանագրվում, բարդ իրավիճակները լուծվում են խաղաղ ճանապարհով: 2010 թվականի հուլիս ամսվա տվյալներով արձանագրվել է ագրեսիայի միայն մեկ դեպք, երբ նոր բերված դատապարտյալները հարձակվել են հսկիչների վրա, ինչի հիման վրա հարուցվել է քրեական գործ: Խառնաշփոթներ, ծեծկռտուք դատապարտյալների միջև տեղի չեն ունենում, յուրաքանչյուր հարց հարթվում է ներքին կարգով:

2009 թվականին արձանագրվել է մահվան 2 դեպք: 2010 թվականի հուլիս ամսվա տվյալներով նույնպես արձանագրվել է մահվան 2 դեպք: 2008 թվականին արձանագրվել է 1 ինքնասպանության դեպք: 2010 թվականին արձանագրվել է փախուստի 1 դեպք:

2010թ.-ի նոյեմբերի 11-ի լույս 12-ի գիշերը “Կոշ” ՔԿՀ-ում աղմկահարույց միջադեպ է տեղի ունեցել՝ դիմակավորված անձինք հարձակվել են դատապարտյալ Նիկոլ Փաշինյանի վրա: 4-5 րոպե անց եկել են հսկիչները և Փաշինյանին տարել հերթապահ մաս, որտեղ նա մնացել է մինչև վաղ առավոտ: Այնուհետև նրան 15 օրով տեղափոխել են պատժախուց՝ այն պատճառաբանությամբ, որ իբր Փաշինյանը առանց անվտանգության աշխատակիցների ուղեկցության տեղաշարժվել է արգելված տարածքով: Այդ ժամանակամիջոցում Նիկոլ Փաշինյանը մասնակցում էր դատավարությունների, որոնք անց էին կացվում հենց ՔԿՀ-ում: Ներկայումս նա գտնվում է “Արթիկ” ՔԿՀ-ում:

Բազմաթիվ ԶԼՄ ներկայացուցիչներ, գրողներ, ակադեմիկոսներ, գիտնականներ ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին կատարվածի առիթով: Մի շարք երկրներում լրագրողների պաշտպանությամբ զբաղվող տարբեր հանձնաժողովներ և կազմակերպություններ հայտարարություն տարածեցին՝ ի պաշտպանություն Նիկոլ Փաշինյանի: Դրանցին են The Writers in Prison Committee (WiPC) of PEN International (ՓԷՆ Ինտերնացիոնալի “Գրողները Բանտում” Կոմիտեն (ԳԲԿ)), Committee to Protect Journalists (CPJ) based, independent,

nonprofit organization in New York (Լրագրողների Պաշտպանության Կոմիտեն (ԼՊԿ)՝ Նյու Յորքում հիմնադրված անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն), Europe and Central Asia Committee to Protect Journalists (Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Լրագրողների Պաշտպանության Կոմիտեն) և այլն:

“Կոշ” ՔԿՀ-ում դատապարտյալների բողոքները հիմնականում վերաբերում են վաղաժամկետ ազատման, ինչպես նաև տեսակցությունների իրավունքից ավելի հաճախ օգտվելու հնարավորություն ընձեռելու հարցերին:

Տարբեր հասարակական կազմակերպություններ, հասարակական դիտորդական խմբեր, նախարարությունից, հեռուստաընկերություններից ներկայացուցիչներ այցելություններ են կատարում քրեակատարողական հիմնարկ: Ըստ պետի տեղակալի՝ այդ հանգամանքը կարևոր հոգեբանական գործոն է հանդիսանում դատապարտյալների համար, քանի որ վերջիններս հնարավորություն են ստանում խոսելու, զրուցելու միջոցով թեթևանալ իրենց մեջ կուտակված զգացմունքներից:

Ըստ հիմնարկության պետի՝ ցանկալի կլիներ, որ քրեակատարողական վարչությունը աջակցություն ցուցաբերեր և լուծեր հետևյալ խնդիրները՝

1. կարանտինի վերականգնում,
2. ջրամատակարարման խնդրի վերջնական լուծում,
3. բուժմասի համալրում,
4. բաղնիքի, ճաշարանի վերանորոգում,
5. դատապարտյալների զբաղվածության ապահովմանը նպատակաուղղված միջոցների ձեռնարկում,
6. տեսադիտման համակարգի կազմակերպում,
7. տեխնիկական համակարգի՝ ձեռնաշղթաներ, ռետինե մահակներ, վահաններ, վերազինում,
8. հանրակացարանի վերակառուցում կիսափակ տեսակի,
9. հաստիքների համալրում,
10. նոր գույքի ձեռքբերում:

Հիմնարկի տարածքում գործում է 2 տաքսաֆոն, որոնք չեն գտնվում հսկողության տակ, և դատապարտյալներն իրավունք ունեն խոսելու այնքան, որքան ցանկանան:

Քրեակատարողական հիմնարկում դատապարտյալների օժանդակությամբ կառուցվել է եկեղեցի, որն ունի հոգևոր գրադարան՝ 200-250 հոգևոր գրքերով, իսկ գրադարանից օգտվողների միջին թիվը կազմում է 120-150 մարդ: Երկու շաբաթը մեկ անգամ հիմնարկ է այցելում քահանա, ով իրականացնում է եկեղեցական արարողություններ: Հիմնարկն իր տարածքում ունի անասնապահական հատված, որտեղ պահվում են նապաստակներ և ընտանի կենդանիներ:

- **Կապն արտաքին աշխարհի հետ**

Կարճատև տեսակցություններ

“Կոշ” ՔԿՀ-ում կարճատև տեսակցությունների համար նախատեսված է մեկ մեծ սրահ, որի մակերեսը մոտ 40 քմ է: Այն կահավորված է նոր բազկաթոռներով և սեղաններով: Սրահի բնական լուսավորությունը բավարար է: Սենյակին կից գտնվում է սանհանգույցը, որից կարող են օգտվել նաև դատապարտյալների հարազատները: Սենյակը ջեռուցվում է էլեկտրական սալիկներով:

Երկարատև տեսակցություններ

Հիմնարկն ունի երկարատև տեսակցության համար նախատեսված 12 սենյակ: Մեր այցելության պահին սենյակներից 9-ը զբաղված էին: Տեսակցության սենյակները գտնվում են մասնաշենքի առանձին հատվածում՝ ամբողջովին մեկուսացած: Այդ հատվածն ունի ընդհանուր խոհանոց՝ 3 սառնարանով, և ընդհանուր զուգարան ու բաղնիք, որոնք գտնվում էին ոչ հիգիենիկ վիճակում:

Հեռախոսակապ

“Կոշ” քրեակատարողական հիմնարկում գործում է հեռախոսակապ, որն առանձին մասնաշենքում է: Այստեղ տեղադրված է երկու ավտոմատ հեռախոս, որոնցից դատապարտյալները կարող են օգտվել ամեն օր:

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունման կետը 18 քմ մակերես ունեցող սենյակ է: Սենյակում կա երկու սեղան և երկու նստարան: Հանձնուքի զննումը կատարվում է ժամանակակից

“Ռապիսկան” սարքով: Հանձնուքի ստացման մասին դատապարտյալները տեղեկացվում են ռադիոհանգույցի միջոցով:

- **Հանրակացարաններ**

“Կոշ” ՔԿՀ-ում դատապարտյալները պահվում են երեք մասնաշենքերում. նրանք տեղավորված են հանրակացարաններում՝ երկու մեծ և մեկ փոքր: Հանրակացարանները եռահարկ են և յուրաքանչյուր հարկն ունի իր խաղասենյակը՝ հեռուստացույցով, DVD նվագարկիչով: Դատապարտյալները պահվում են տարբեր չափերի սենյակներում, յուրաքանչյուրում՝ 10-60 մարդ: Սենյակներում մահճակալները երկհարկանի են:

Առանձին մասնաշենք է տրամադրված Եհովայի վկաների համար, ովքեր առանձնացված են ընդհանուր դատապարտյալներից և այցելության պահին 15 հոգի էին:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

“Կոշ” ՔԿՀ-ում գործում է մեկ բաղնիք: Ազատազրկվածները լոգանք են ընդունում ըստ ժամանակացույցի՝ շաբաթը մեկ անգամ: Բաղնիքի ընդհանուր մակերեսը 85 քմ է, որից 25 քմ-ը հանդերձարանի տարածքն է, իսկ 60 քմ-ը՝ լողասենյակինը: Հանդերձարանում կան նստարաններ և կախիչներ: Լողասենյակն ունի 16 լոգախցիկ, որոնք միմյանցից բաժանված են միջնապատերով: Բաղնիքն ունի մոտ 420 լիտրանոց վեց հատ բաք, որոնք ամռան ամիսներին տաքացվում են արևի ճառագայթներով:

- **Բուժսպասարկում**

Բուժմասում կա 6 պալատ՝ 18 մահճակալներով: Այցելության պահին այստեղ բուժում էր ստանում 11 դատապարտյալ:

Բուժմասում աշխատում է նյարդաբան, թերապևտ և վիրաբույժ: Ատամնաբույժի խիստ կարիք է զգացվում. ատամնաբուժական ծառայություն իրականացնում է բուժակը, ով որոշ չափով տիրապետում է մասնագիտությանը, սակայն համապատասխան սերտիֆիկատ չունենալու պատճառով հիմնարկի տարածքում

նման գործունեություն իրականացնելու իրավունք չունի: Հիմնարկն ունի երկու վարձու բժշկի թափուր տեղ:

Բուժմասում չկա լաբորատորիա, և անհրաժեշտ լաբորատոր հետազոտությունները կատարվում են մոտակա գյուղի պոլիկլինիկայում:

Պալատներում իրականացվում էին ջրամատակարարման խողովակաշարերի՝ համապատասխան բաքերով, անցկացման աշխատանքներ: Բուժմասն ունի մեկ բաղնիք, որը վերանորոգվում էր:

Ըստ բուժմասի պետի՝ ստերիլիզացման սարքերի խիստ կարիք է զգացվում: Բուժմասին կից կար փոքրիկ այգի, որտեղ հանգստանում էին հիվանդ դատապարտյալները:

- **Զբաղվածությունը**

“Կոշ” ՔԿՀ-ում գործում է վարսավիրանոց՝ 4 վարսավիրական աթոռներով և համապատասխան սարքավորումներով: Այստեղ աշխատում են դատապարտյալները: Կոշկակարը և լվացքատան աշխատողը նույնպես դատապարտյալ են: Լվացքատանը կա 2 միջին չափի և մեկ մեծ լվացքի մեքենա:

Դատապարտյալների ակտիվ հանգիստն ապահովելու նպատակով գործում է սպորտային դահլիճ՝ կահավորված հին մարզական սարքերով: Տեղադրված են թենիսի սեղաններ, կա բիլիարդի սրահ:

Հիմնարկի տարածքում գործում է փայտամշակման կենտրոն, որտեղ պատրաստվում են թզբեհներ և փայտե այլ առարկաներ: Բացի այդ գործում է առանձնացված արտադրամաս՝ մեծ թվով հնամաշ և չաշխատող հաստոցներով: Արտադրամասում աշխատում է 11 դատապարտյալ: “Աջակցություն դատապարտյալին” հիմնադրամը դատապարտյալների պատրաստած փայտե իրերը վաճառքի է հանում “Վերնիսաժում” և ստացվող հասույթը տալիս դատապարտյալներին:

Գրադարան

ՔԿՀ-ի գրադարանն ունի 4800 գիրք: Այստեղ հայերեն լեզվով գրականության պակաս է զգացվում: Ամեն շաբաթ գրադարանը ստանում է օրաթերթեր տարբեր խմբագրություններից:

- **Սնունդ**

“Կոշ” ՔԿՀ-ում գործում է մեծ խոհանոց, որը գտնվում էր հակասանիտարական վիճակում: Քանի որ պատուհանները և խոհանոցի դուռը ճաշ պատրաստելու պահին գտնվում էին բաց վիճակում, դիտորդական խումբը արձանագրեց խոհանոցի հատակին և պատերի վրա վազվզող բազմազան միջատների առկայություն: Խոհանոցում գտնվում էին ճաշարանի աշխատանքներում չընդգրկված դատապարտյալներ՝ առանց համապատասխան սպիտակ խալաթների: Խոհարարը, մեծ շերեփի բացակայության պատճառով, ափսեի հետ ձեռքը կիսով չափ ընկղմում էր նոր պատրաստված կերակուրի մեջ: Խոհանոցում կար 8 մեծ կաթսա, որոնք գտնվում էին հնամաշ և անմխիթար վիճակում: Ճաշարանում առանձնացված է հացը կտրելու համար նախատեսված տարածքը, ինչպես նաև աման լվանալու վայրը, որը նույնպես գտնվում էր ոչ հիգիենիկ վիճակում: Ինչ վերաբերում է արհեստական օդափոխությանը, ապա օդաքարշ սարքերը աշխատում էին ոչ լիարժեք կերպով:
Խոհանոցում աշխատում էր 9 դատապարտյալ:

- **Պատժախուց և կարանտին**

Այցելության ժամանակ պատժախցում գտնվում էր 13 դատապարտյալ: Պատժախուցը գտնվում էր վերանորոգման մեջ. ջրի նոր խողովակաշար անցկացնելու նպատակով հատակն ամբողջովին քանդած էր:
Պատժախցերը միատիպ էին, բնական լուսավորությունը բավարար չէր, ինչի պատճառով արհեստական լուսավորությունն անընդհատ միացված էր:
“Կոշ” ՔԿՀ-ում կարանտինի համար նախատեսված շինություն չկար՝ այն ամբողջությամբ գտնվում էր վերանորոգման մեջ: Դատապարտյալները հիմնարկ բերվելու ժամանակ չեն անցնում կարանտինային զննություն. զննությունը կատարվում է տեղում:

6.”Աբովյան” քրեակատարողական հիմնարկ

- **Ընդհանուր տեղեկատվություն**

“Աբովյան” ՔԿՀ-ն կառուցվել է 1958 թվականին և նախատեսված է եղել միայն անչափահաս դատապարտյալների համար: 1991 թվականից ի վեր “Աբովյան” ՔԿՀ-ում պահվում են նաև կին կալանավորներն ու դատապարտյալները: Ներկայումս այս հիմնարկը հանդիսանում է ունիվերսալ տեսակի հիմնարկ, այսինքն՝ այստեղ առկա են բոլոր տիպերը՝ բաց, կիսաբաց, կիսափակ, փակ: Ի դեպ, փակ տեսակի կարգը սույն հիմնարկում դեռևս չի կիրառվել:

Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը 12.07.2010թ.-ից մինչև 23.07.2010թ.-ն ընկած ժամանակահատվածում 11:00-18:00-ն ընկած ժամերին այցելել է “Աբովյան” ՔԿՀ:

ՔԿՀ-ում վերջին անգամ կապիտալ վերանորոգում է իրականացվել 3 տարի առաջ, որի արդյունքում 2008 թվականին կառուցվել է մեկուսարանի մասնաշենքը: Հիմնարկը ջրամատակարարման հետ կապված խնդիր ընդհանրապես չունի: Ինչ վերաբերում է ջրահեռացմանը, ապա այստեղ կան որոշակի խնդիրներ՝ խողովակները բավական հնացած են և շատ հաճախ վթարների պատճառ են դառնում: Ջեռուցման և էլեկտրաէներգիայի հետ կապված խնդիրներ առանձնապես չկան. հիմնարկն ունի համապատասխան գեներատոր, որը հոսանքազրկման դեպքում կարող է անմիջապես միացվել: Ջեռուցումը կենտրոնացված է:

ՔԿՀ-ում չկային կրոնական և սեռական փոքրամասնություններ: Այստեղ իրենց ազատազրկման պատիժն են կրում 2 օտարերկրացի կին դատապարտյալ:

“Աբովյան” ՔԿՀ-ի ադմինիստրատիվ աշխատակազմը բաղկացած է 145 ծառայողից: Այցելության պահին վարչության կողմից կատարվել էին կրճատումներ: Դիտորդական խմբի այցելության պահին հիմնարկն ուներ 73 հսկիչ, 2 բժիշկ և 4 բուժքույր, ինչպես նաև 5 վարձու աշխատող՝ հավաքարար, ատամնաբույժ, փականագործ, էլեկտրափականագործ և ջրմուղագործ:

Տոն օրերին ՔԿՀ-ում պարբերաբար անցկացվում են բարեգործական միջոցառումներ կանանց և երեխաների համար:

2009 և 2010 թվականներին “Աբովյան” ՔԿՀ-ում արձանագրվել է մահվան մեկական դեպք: Ինքնասպանության դեպքեր չեն եղել: 2009 թվականին արձանագրվել է փախուստի մեկ դեպք:

ՔԿՀ-ն նախատեսված է 250 կալանավորվածների ու դատապարտյալների համար: Այցելության պահին այստեղ իրենց պատիժն էին կրում 242 մարդ, որոնցից 107-ը գտնվում էին նախնական կալանքի տակ՝ առանձնացված մեկուսարանում, որը կառուցվել է 2008 թվականին և գտնվում է անչափահաս դատապարտյալների գոտում: 107 կալանավորվածներից 52-ը անչափահաս էին, 55-ը՝ կին: Մեկուսարանում էր գտնվում նաև 1 չափահաս կալանավոր, որի այդտեղ գտնվելու պատճառն այդպես էլ չպարզաբանվեց: Անհրաժեշտ է նաև նշել, որ մեկուսարանն ունի 26 խուց և նախատեսված է 104 կալանավորի համար: Մեկուսարանն ունի 4 առանձնացված զբոսանքի վայր:

- **Կապն արտաքին աշխարհի հետ**

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների համար “Աբովյան” ՔԿՀ-ում նախատեսված է երեք նորակառույց սենյակ, որոնց ընդհանուր մակերեսները 12 քմ-ից 24 քմ են: Տեսակցությունների սենյակներում ստեղծված է անմիջական շփման հնարավորություն: Դրանք կահավորված են նոր սեղաններով և նստարաններով: Այս հատվածում կա սանհանգույց, որից կարող են օգտվել դատապարտյալների հարազատները:

Երկարատև տեսակցություններ

Հիմնարկն ունի 4 երկարատև տեսակցության սենյակ: Երկարատև տեսակցության սենյակներից յուրաքանչյուրն ունի 1 մահճակալ, մեկ փոքր բազմոց, սեղան և 4 աթոռ: Սենյակներն ունեն կահավորված առանձին խոհանոց և սանհանգույց՝ առանձին ցնցուղներով, լվացարանով, զուգարանով:

Ընդհանուր սանիտարական վիճակը բավարար էր:

Հեռախոսակապ

Մեկուսարանում հեռախոսազրույցի օրենքով թույլատրված տևողությունը 15 րոպե է: Հեռախոսախոսակցությունների տևողությունները գրանցվում են հատուկ մատյանում: Անհրաժեշտ է ավելացնել, որ հաճախ որոշ կալանավորներ քննիչների հրահանգով հեռախոսակապից օգտվելու իրավունքից զրկվում են:

Դատապարտյալների հեռախոսային խոսակցությունների հաճախականությունն ու տևողությունը սահմանափակված չեն: Սակայն կանանց մասնաշենքում տեղադրված մեկ հեռախոսը բավարար չէ հարյուրից ավելի կին դատապարտյալների համար: Արդյունքում գոյանում են հերթեր, ինչը դատապարտյալների մոտ բողոքներ է առաջացնում:

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունման կետը “Աբովյան” քրեակատարողական հիմնարկում փոքր սենյակ է, որն ունի 4 քմ տարածք: Հանձնուքի զննման ժամանակ տեխնիկական միջոցներ չեն օգտագործվում:

- **Հանրակացարաններ**

“Աբովյան” ՔԿՀ-ն բաժանված է երեք մասնաշենքի՝ մեկուսարանի, կանանց համար նախատեսված մասնաշենքի և անչափահաս դատապարտյալների համար նախատեսված մասնաշենքի:

Մեկուսարանի խցերն ունեն տարբեր մակերեսներ՝ 10 քմ-ից մինչև 16 քմ: Դրանցում պահվում է 2-4 կալանավոր, և ընդհանուր առմամբ յուրաքանչյուր կալանավորի համար ապահովվում է 4 քմ տարածք: Մեկուսարանի տարածքում գործում է բուժ կետ, որտեղ օրը 24 ժամ աշխատում է հերթապահ բուժքույր: Մեկուսարանն ունի բաղնիք՝ 3 ցնցուղով. ցնցուղի ցրիչ գլխիկները այցելության պահին բացակայում էին: Կանայք բողոքում էին, որ իրենց հետ նույն կացարանում պատիժ են կրում տարբեր հոգեկան խանգարումներ ունեցող դատապարտյալներ, ովքեր երբեմն իրենց բավականին ագրեսիվ են պահում կամ ցուցաբերում են ոչ ադեկվատ վարքագիծ. այս հանգամանքը հոգեկան ծանր հետևանքներ է ունենում մյուս բոլոր դատապարտյալների մոտ: Հարկ է նշել, որ կրկնահանցագործներն ու ծանր

հանցագործություն կատարած կանայք պատիժ են կրում նույն հանրակացարանում, որտեղ պահվում են երիտասարդ, առաջին անգամ դատապարտված, ինչպես նաև թեթև հանցագործություն կատարած կանայք:

Անչափահաս դատապարտյալների համար նախատեսված մասնաշենքում իրենց պատիժն են կրում 35 անչափահաս դատապարտյալ: Այս հանրակացարանը գտնվում է անմխիթար վիճակում և ամբողջությամբ փոփոխման ու վերակառուցման կարիք ունի: Անչափահասները սնվում, լոգանք են ընդունում, քնում են բացարձակ հակահիգիենիկ պայմաններում: Հանրակացարանը գտնվում է 3 հսկիչի հսկողության տակ, ում համար ևս բավական բարդ է նման պայմաններում ծառայություն իրականացնելը:

Այս հանրակացարանում գտնվող յուրաքանչյուր դատապարտյալի համար պահպանված է օրենքով սահմանված 4քմ տարածքը: Մասնաշենքում գործում է դպրոց, որը ղեկավարվում է կրթության և գիտության նախարարության կողմից. այն ունի տնօրեն և ուսուցչական կազմ: Այցելության պահին 2 խմբով անցկացվում էին դասընթացներ, սովորեցնում էին օպերատորի աշխատանք և էթիկա: Դպրոցն ունի համակարգչային սենյակ և սպորտդահլիճ:

Կանանց համար նախատեսված կացարանում գտնվում էր 109 կին դատապարտյալ: Կացարանը բաղկացած է 2 հարկից: Առաջին հարկում է գտնվում միջոցառումների համար նախատեսված դահլիճը, որտեղ կանայք հեռուստացույց են դիտում, զբաղվում են կարով և այլն: Նույն հարկում է գտնվում պահեստը, որտեղ դատապարտյալները կարող են պահել իրենց անձնական իրերը. յուրաքանչյուր դատապարտյալ 2 արկղիկի իրավունք ունի՝ մեկը վերևի հատվածում, մյուսը՝ ներքևի: Պահեստի կողքին գտնվում է բաղնիքը և բուժմասը, որը սպասարկում է հերթապահ բուժքույրը: Առաջին հարկում է գտնվում նաև խոհանոցը, որտեղ դատապարտյալ կանայք երեկոյան ժամերին իրենց ընթրիքը տաքացնելու հնարավորություն ունեն: Այս հարկի միջանցքում տեղադրված է սեղանի թենիսի մեկ սեղան:

Երկրորդ հարկում գտնվում է դատապարտյալների հանգստի սենյակը, որտեղ կա 107 մահճակալ, որոնցից 6-ը երկհարկանի են: Անհրաժեշտ է ավելացնել, որ յուրաքանչյուրի համար օրենսդրությամբ նախատեսված 4 քմ տարածքը չի

ապահովվում: Այս հարկում կային սենյակներ՝ նախատեսված ծեր կանանց և երեխաների հետ մայրերի համար: Մոնիտորինգային խմբի հետ ունեցած զրույցների ընթացքում կանայք բողոքում էին, որ դատապարտյալ կանանց թիվն օրեցօր ավելանում է, իսկ անկախ հանձնաժողովի կողմից վաղաժամկետ ազատ արձակման իրավունքը չի կիրառվում: Արդյունքում հանրակացարաններում պարբերաբար ավելացնում են նոր մահճակալներ, իսկ սանհանգույցից օգտվելու համար առաջանում են կուտակումներ, ինչի ականատեսը լինելու նպատակով կանայք խմբի անդամներին առաջարկեցին առավոտյան այցելել ՔԿՀ:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

ՔԿՀ-ն ունի 7 բաղնիք, որոնցից 5-ը գտնվում են մեկուսարանում, և մեկական բաղնիք՝ ուղղիչ հիմնարկներում: Լոգանքը կազմակերպվում է շաբաթը մեկ անգամ. կա համապատասխան 2 տոննա տարողությամբ բաք, որն ամռան ամիսներին տաքացվում է արևի ջերմությամբ: Բաղնիքներն ունեն 4-ական ցնցուղ և անջատված են միջնապատերով: ՔԿՀ-ի ընդհանուր տարածքը մաքրվում և բարեկարգվում էր դատապարտյալ կանանց կողմից:

- **Բուժսպասարկում**

“Աբովյան” ՔԿՀ-ում բուժմասի համար նախատեսված է առանձին շենք, որը ներկայումս հիմնանորոգման կարիք ունի: Բուժմասում աշխատում են 2 բժիշկ՝ մեկը՝ որպես բուժմասի պետ (գինեկոլոգ), իսկ մյուսը՝ գլխավոր բժիշկ (գինեկոլոգ), ինչպես նաև աշխատում է ատամնաբույժ՝ կես դրույքով, և 4 բուժքույր: Բժիշկը դժգոհում էր, որ չունեն անհրաժեշտ սարքավորումներ, բժշկական գործիքներ և միջոցներ: Ըստ բուժմասի պետի՝ հասարակ վիրաբուժական գործիքների, ԷՍԳ-ի ապարատի և այլ շտապ փոքրածավալ վիրահատություններ իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների կարիք կա: Այցելության պահին 2 կին դատապարտյալ գտնվում էին քաղաքացիական հիվանդանոցում:

Կանանց համար նախատեսված ուղղիչ հիմնարկում գործում է 2 հիվանդասենյակ: Բոլոր ծանր դեպքերում կանանց տեղափոխում են Աբովյան քաղաքի կլինիկական հիվանդանոց:

- **Զբաղվածությունը**

Արտադրամաս

Հանրակացարանի հետին մասում գտնվում է երկհարկանի շինություն, որտեղ գործում են կարի և գորգագործության արտադրամասերը, որոնք գտնվում են “Աջակցություն դատապարտյալին” հիմնադրամի ղեկավարության տակ: Կարի արտադրամասում աշխատում էր 11 դատապարտյալ, իսկ գորգի արտադրամասում՝ 10 դատապարտյալ: Երկու արտադրամասերն ունեն մեկ ընդհանուր տնօրեն, ով բողոքում էր տեխնիկական միջոցների պակասից, սարքավորումների նոր մոդելների բացակայությունից:

Գրադարան

Կանանց հանրակացարանի մասնաշենքում է գտնվում նաև գրադարանը, որն ունի 2200 կտոր գիրք: Ըստ գրադարանավարուհու՝ ամսական միջինը 80-90 մարդ օգտվում է գրադարանի գրքերից: Վարվում է մատյան, որի միջոցով հսկվում է գրքերի մուտքն ու ելքը:

Դահլիճ

Կանանց համար նախատեսված հանրակացարանում առանձին մեծ սենյակ է հատկացված հեռուստացույց դիտելու համար: Այստեղ տեղադրված է մեկ հեռուստացույց, որը միաժամանակ տարբեր նախասիրություններ ունեցող մարդկանց պահանջները չի կարող բավարարել: Այս հանգամանքը դատապարտյալների միջև լարվածության պատճառ կարող է հանդիսանալ:

- **Սնունդ**

“Աբովյան” ՔԿՀ-ի կին դատապարտյալների համար նախատեսված ուղղիչ հիմնարկի խոհանոցը և ճաշարանը գտնվում են բավականին կոկիկ և պատշաճ վիճակում: Խոհանոցային պարագաները, սպասքը և սնունդը պահվում են մաքուր վիճակում: Տեղադրված է մեկ սառնարան: Ըստ խոհարարի՝ օրվա սննդի 10-15%-ն ավելանում է:

Անչափահաս դատապարտյալների ուղղիչ հիմնարկի ճաշարանը, որը նախատեսված է միայն սնունդ ընդունելու համար (այստեղ ուտելիք չի պատրաստվում), գտնվում է խայտառակ անմխիթար վիճակում և կապիտալ վերանորոգման կարիք ունի. չկա օդափոխության համակարգ, և պատուհաններն առանց ապակիների են:

- **Պատժախուց և կարանտին**

Մեկուսարանի շենքում է գտնվում նաև պատժախուցը և կարանտինի համար նախատեսված խուցը, որտեղ այցելության պահին գտնվում էր մեկ կին կալանավոր: Կարանտինային խուցն ու պատժախուցը, ըստ էության, ոչնչով չեն տարբերվում մեկուսարանի մնացած խոցերից:

7.”Սևան” քրեակատարողական հիմնարկ

- **Ընդհանուր տեղեկատվությունը**

“Սևան” ՔԿՀ-ն կառուցվել է 1962 թվականին և ի սկզբանե նախատեսված է եղել որպես քրեակատարողական հիմնարկ: Այն հանդիսանում է կիսափակ տիպի:

Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը 26.07.2010թ.-ից մինչև 30.07.2010թ.-ն ընկած ժամանակահատվածում 11:00-18:00-ն ընկած ժամերին այցելել է “Սևան” ՔԿՀ:

ՔԿՀ-ն նախատեսված է 548 դատապարտյալի համար, սակայն այցելության պահին այստեղ գտնվում էր 726 դատապարտյալ, որոնցից 3-ը օտարերկրյա քաղաքացիներ էին: Այդպիսի պայմաններում, բնականաբար, չէր ապահովվում յուրաքանչյուր դատապարտյալի համար օրենքով նախատեսված 4 քմ տարածքը: Ըստ ՔԿՀ-ի ղեկավարության՝ 2014 թվականին նախատեսվում է “Սևանի” ՔԿՀ-ն փակել:

Հիմնարկն ունի բավականին մեծ տարածք, որի արտաքին տրամագծով տեղակայված է 8 դիտաշտարակ: Այստեղ կան կիսաքանդ և ավերված արտադրամասեր, ինչպես նաև անմշակ հողատարածքներ: Մեր այցելության պահին հնարավորին չափ տարածքը փոքրացնելու և զննման դիտադաշտը մոտեցնելու նպատակով իրականացվում էին արտադրամասերի քանդման և ապամոնտաժման

աշխատանքներ: Հիմնարկն ունի մատուռ, որտեղ կատարվում են կրոնական ծիսակատարություններ:

Հիմնարկի ջեռուցումը կատարվում է էլեկտրական սալիկներով: Կան ջրահեռացման հետ կապված բազմաթիվ խնդիրներ ու դժվարություններ, որոնց հաղթահարման նպատակով այցելության պահին կատարվում էին շինարարական աշխատանքներ: Կան նաև խնդիրներ կապված ջրամատակարարման հետ. ջուրը տրվում է գրաֆիկով՝ 09:00-15:00-ը: Էլեկտրաֆիկացման հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել. միայն դրսի լամպերը և լուսավորության համակարգը բավականին հնամաշ են և չեն նպաստում տեսադաշտը զննելուն, ինչը իր հերթին առաջացնում է նոր խնդիրներ: Տեղադրված է գեներատոր, որն էլեկտրականության բացակայության դեպքում միացվում է: Հիմնարկում գործում է լվացքատուն, որտեղ կա մեկ հատ մեծ հնամաշ և մեկ հատ փոքր լվացքի մեքենա: Գործում է ախտահանման խցիկ, սակայն ախտահանող նյութերի բացակայության պատճառով սարքը չի շահագործվում:

“Սևան” ՔԿՀ-ն ունի 192 հաստիք, որոնցից 5-ը մեր այցելության պահին թափուր էին: 192 հաստիքից 52-ը նախատեսված են սպայական կազմի համար, 132-ը՝ կրտսեր կազմի և 3-ը վարձու աշխատողների: Նկատվում էր աշխատողների պակաս. հսկիչների թիվը փոքր էր, և վերջիններս հաճախ չէին հասցնում աշխատանքը բաշխել:

“Սևան” ՔԿՀ-ում 2009 թվականին մահվան դեպքեր չեն արձանագրվել: 2010 թվականին արձանագրվել է մահվան մեկ դեպք՝ սրտի կաթվածի արդյունքում:

2009 և 2010 թվականներին ինքնասպանության և փախուստի դեպքեր չեն արձանագրվել:

Ըստ մեկուսարանի պետի՝ անհրաժեշտություն կա՝

- ավելացնել հաստիքները,
- անվտանգության ծառայողներին զինել ձեռնաշղթաներով, ռետինե մահակներով, վահաններով, տեղադրել տեսախցիկներ՝ հիմնարկի անվտանգությունն ապահովելու և փախուստներից խուսափելու նպատակով,
- ստեղծել համակարգված անվտանգության համակարգ,
- վերակառուցել կարանտինային խցերը,
- նորացնել լուսային համակարգը,

- դատապարտյալների համար ստեղծել աշխատանքի հնարավորություններ,
- հիմնարկի արտաքին պարիսպը կապիտալ վերանորոգել:

- **Կապն արտաքին աշխարհի հետ**

Կարճատև տեսակցություններ

“Սևան” ՔԿՀ-ում կա մեկ կարճատև տեսակցությունների սենյակ, որն ունի մոտ 25 քմ մակերես: Այստեղ տեղադրված է երկու սեղան, հինգ աթոռ և նստարաններ: Միաժամանակ հնարավոր է անցկացնել 2-3 տեսակցություն: Տեսակցությունների համար ապահովված է անմիջական շփման հնարավորություն: Բնական լուսավորությունը բավարար չէր: Տեսակցությունների սենյակը չունի սանհանգույց:

Երկարատև տեսակցություններ

Հարազատների հետ երկարատև տեսակցության սենյակները թվով 9-ն են, որոնք գտնվում են բարեկարգ վիճակում: Տեսակցությունների սրահն ունի առանձնացված ընդհանուր խոհանոց և բաղնիք, ինչպես նաև առանձին սանհանգույց տղամարդկանց և կանանց համար: Սենյակները կահավորված են աթոռներով, սեղաններով, հեռուստացույցներով, մահճակալներով: Բնական լուսավորությունը բավարար է: Ընդհանուր խոհանոցն ունի սառնարան, էլեկտրական սալօջախ: Մաքուր օդի դուրս գալու հնարավորություն տեսակցության սենյակներում գտնվողները չունեն, ինչը նշանակում է, որ նրանք ստիպված են տեսակցության սրահում երեք օր շարունակ անազատության մեջ մնալ:

Հեռախոսակապ

“Սևան” ՔԿՀ-ում գործում է հեռախոսակապ, և տեղադրված են հեռախոսներ, որոնցից դատապարտյալները կարող են օգտվել ամեն օր՝ առանց սահմանափակման: Հեռախոսների աշխատանքից դժգոհություններ չկային:

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունման կետը գտնվում է վարչական շենքի առաջին հարկում: Հանձնուքի ընդունումն ու զննությունը կատարվում է մոտ 10 քմ մակերես ունեցող սենյակում:

- **Հանրակացարաններ**

“Սևան” քրեակատարողական հիմնարկում դատապարտյալները բաշխված են չորս հանրակացարանային մասնաշենքերում, որոնցից յուրաքանչյուրն երկհարկանի է: Դատապարտյալները պահվում են մեծ սենյակներում, որտեղ նրանց միջին թիվը կարող է հասնել տասի: Հանրակացարանները չունեն ջեռուցման ընդհանուր համակարգ. սենյակները տաքացվում են էլեկտրական սալիկներով: Հանրակացարաններում չկան նաև առանձնացված սանհանգույց և բաղնիք, որոնք ողջ հիմնարկի համար ընդհանուր են: Մեր կողմից այցելած բոլոր հանրակացարանները հնամաշ էին և կապիտալ վերանորոգման կարիք ունեին: Հանրակացարանների տարածքում գործում է վարսավիրանոց և գրադարան, կա կոշկակար և դերձակ:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

“Սևան” ՔԿՀ-ն ունի մեկ բաղնիք՝ 12 ցնցուղով, հանդերձարաններով, կախիչներով: Այցելության պահին բաղնիքն արդեն հինգ օր էր, որ չէր օգտագործվում ջրահեռացման խողովակների խցանման պատճառով: Ընդհանուր առմամբ բաղնիքը գտնվում էր խայտառակ հակասանիտարական վիճակում: Ջրահեռացման համակարգի թերի աշխատանքի պատճառով բաղնիքի ամբողջ տարածքում գարշահոտ էր կանգնած: Առաստաղից կաթում էր բաքում կուտակված ջուրը, ինչը տհաճություն և անհարմարություն էր պատճառում:

- **Բուժսպասարկում**

“Սևան” ՔԿՀ-ի բուժմասն ամբողջությամբ գտնվում էր վերանորոգման մեջ: Բուժմասում աշխատում են բուժմասի պետը, երեք բժիշկ՝ երկուսը վիրաբույժ, մեկն ատամնաբույժ, և երկու բուժակ: Թափուր է բուժակի երկու հաստիք: Լաբորատոր

հետազոտությունների համար հիմնարկն օգտվում է Հրազդան քաղաքի քաղաքացիական հիվանդանոցից: Բուժմասում կան ատամնաբուժական սարքավորումներ, կոմպրեսոր, որը սակայն ավելի հնամաշ էր, քան մյուս հիմնարկներինը: Չկար ԷՍԳ ապարատ և ուրիշ բուժ գործիքներ:

Կալանավորների հետ ունեցած զրույցներից պարզվեց, որ շատ դեղամիջոցներ ձեռք են բերվում իրենց հարազատների կողմից, քանի որ բուժմասում չկան:

Այցելության պահին բուժմասում կար 22 հիվանդ, որոնցից 12-ը ունեին տարբեր հոգեկան խանգարումներ: Բուժմասն ունի 6 պալատ, որոնք չեն համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին բոլոր առումներով, այդ թվում՝ նաև հիգիենայի:

- **Զբաղվածությունը**

Գրադարանը

Գրադարանն ունի 2500 գիրք: Ամսական գրադարանից միջին թվով օգտվում է 20-30 մարդ: Այստեղ վարվում է համապատասխան մատյան: Գրադարանը չունի ընթերցասրահ: Վերջերս այն համալրվել է նոր գրքերով, որոնք նվիրաբերել է “Ժողովրդական կուսակցության” նախագահ Տիգրան Կարապետյանը:

Արտադրամաս

“Սևան” ՔԿՀ-ում գործում է “Աջակցություն դատապարտյալին” հիմնադրամի կողմից ղեկավարվող արտադրամաս, որտեղ աշխատում է 20 դատապարտյալ: Այստեղ պատրաստվում են փայտե առարկաներ:

- **Սնունդ**

“Սևան” ՔԿՀ-ի խոհանոցը և ճաշարանը իրենց չափերով բավական մեծ են: Հիմնարկն ունի ճաշի պատրաստման համար նախատեսված մեծ տարածք, սակայն օդափոխության համակարգը չի աշխատում, պատուհաններն ապակեպատ չեն, ինչը հանգեցնում է խոհանոցի ոչ հիգիենիկ վիճակի: Խոհանոցում է գտնվում նաև պահեստը, սպասքը լվանալու վայրը, որտեղ ջրի սակավության պատճառով կան մի շարք խնդիրներ: Խոհանոցում աշխատում է ինը դատապարտյալ: Ճաշարանն իր

չափերով կարող է տեղավորել երեք հարյուր դատապարտյալ, բայց քանի որ քրեակատարողական հիմնարկը ծանրաբեռնված է, ճաշարանն աշխատում է հերթափոխերով:

- **Պատժախուց և կարանտին**

Պատժախցերը թվով 7-ն են, գտնվում են առանձնացված վայրում: Մեր այցելության պահին այդտեղ գտնվում էր 7 դատապարտյալ: Ինչպես հիմնարկի բոլոր շինությունները, այնպես էլ պատժախցերը գտնվում են հնամաշ, անմխիթար վիճակում. պատժախցերի պատերը կիսաքանդ են և ըստ տարածքը հսկող տեսուչի հարվածի դեպքում կարող են փլվել: Պատերից դուրս եկող հոսանքալարերը բաց էին, ինչն անթույլատրելի է, քանի որ կարող է մարդկանց հոսանքահարման պատճառ դառնալ: Խցերում կային բազմաթիվ միջատներ: Ընդհանուր առմամբ պատժախցում հակասանիտարական վիճակ էր տիրում: Պատժախուցը հսկում են 3 հերթապահ հսկիչներ: Կարանտինի համար նախատեսված շինություն չկա:

8. “Գյումրի” քրեակատարողական հիմնարկ

Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը թույլատվություն է ստացել 23.08.2010թ.-ից մինչև 27.08.2010թ.-ն ընկած ժամանակահատվածում 11:00-18:00-ն ընկած ժամերին այցելել “Գյումրի” ՔԿՀ: Հետագայում պարզվեց, որ Գյումրի ՔԿՀ-ն այլևս չի գործում: Փոխարենը գործում է Հրազդան ՔԿՀ-ն, որտեղ դիտորդական խումբը առանց որևէ պատճառաբանության չստացավ մոնիտորինգ կատարելու թույլատվություն:

9.”Արթիկ” քրեակատարողական հիմնարկ

- **Ընդհանուր տեղեկատվություն**

“Արթիկ” ՔԿՀ-ն կառուցվել է 1950-ական թվականներին: Այս հիմնարկը հանդիսանում է ունիվերսալ տեսակի հիմնարկ, այսինքն՝ իր մեջ պարունակում է ուղղիչ

հիմնարկների բոլոր տիպերը՝ բաց, կիսաբաց, կիսափակ, փակ: “Արթիկ” ՔԿՀ-ն փակվել է 2004 թվականին և վերաբացվել 2007թ.-ին:

Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը 30.08.2010թ.-ից մինչև 03.09.2010թ.-ն ընկած ժամանակահատվածում 11:00-18:00-ն ընկած ժամերին այցելել է “Արթիկ” ՔԿՀ: Հիմնարկում կատարվել են և շարունակում են կատարվել վերանորոգման շատ աշխատանքներ: Վերջերս անց է կացվել 800 մ ջրագիծ: ՔԿՀ-ի պետն ունի շուրջ 35 տարվա աշխատանքային փորձ, որից մեծ մասը՝ համակարգում, իսկ “Արթիկ” ՔԿՀ-ի պետի պաշտոնը զբաղեցնում է 2009թ.-ի հուլիս ամսից:

Քրեակատարողական հիմնարկը չունի ջրամատակարարման և ջրահեռացման խնդիրներ, ապահովված է մշտական ջրով: Հիմնարկում գործում է կաթսայատուն, որը և ապահովում է հիմնարկի բոլոր մասնաշենքերի ջեռուցումը. յուրաքանչյուր հարկում և յուրաքանչյուր սենյակում տեղադրված են ջեռուցման մարտկոցներ: Էլեկտրաէներգիայի հետ կապված խնդիրներ առանձնապես չկան. տեղադրված է համապատասխան գեներատոր, որը հոսանքի բացակայության դեպքում միանգամից կարող է միացվել:

Հիմնարկի պետը նշում է, որ “Արթիկ” ՔԿՀ-ում տնտեսությամբ զբաղվելու լայն հնարավորություններ կան, սակայն ինքն այդպիսի գործունեություն սկսելու լիազորությամբ օժտված չէ: Հիմնարկում կան կրոնական և սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչներ, ովքեր պահվում են մյուս բանտարկյալներից առանձին: Օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող բանտարկյալներ չկան: Ըստ ՔԿՀ-ի պետի՝ հիմնարկում սպանության կամ ինքնասպանության դեպքեր չեն արձանագրվել: Այցելությունից որոշ ժամանակ առաջ կատարվել էր մեկ փախուստի փորձ: Հիմնարկում նույնիսկ լուրջ ծեծկռտուք չի գրանցվել. լինում են վիճաբանություններ մանր կենցաղային հարցերի շուրջ:

Հիմնարկը նախատեսված է 373 դատապարտյալի և կալանավորի համար, իսկ այցելության պահին այստեղ գտնվում էր 379 դատապարտյալ և կալանավոր:

“Արթիկ” ՔԿՀ-ում աշխատում է հոգեբան, որի աշխատասենյակը՝ շուրջ 30 քմ, գտնվում է քննչական մեկուսարանի 2-րդ հարկում: Հոգեբանի խոսքերով իրեն դիմողների շուրջ 80%-ի հիմնական խնդիրները վերաբերում են ընտանիքի,

ամուսնալուծության հարցերին: Ըստ հոգեբանի՝ հոգեբանական գրականության պակաս կա:

Հիմնարկի վարչակազմը բաղկացած է շուրջ 250 ծառայողից: Հսկիչները մոտ 150 հոգի են: Հիմնարկում աշխատում է 2 բժիշկ, ինչպես նաև ատամնաբույժ, հոգեբան, հոգեբույժ, թոքախտաբան:

- **Կապն արտաքին աշխարհի հետ**

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունները "Արթիկ" ՔԿՀ-ում տեղի են ունենում շուրջ 60 քմ մակերես ունեցող վերանորոգված, լուսավոր սենյակում, որտեղ կա 4 սեղան, աթոռներ, 3 բազկաթոռ: Սենյակի կահավորանքը նոր էր: Տեսակցությունների ընթացքում կա անմիջական շփման հնարավորություն:

Երկարատև տեսակցություններ

Հիմնարկն ունի երկարատև տեսակցության համար նախատեսված 5 սենյակ, որոնցից երկուսը մեկ սենյականոց են, իսկ երեքը՝ երկսենյականոց: Սենյակները կահավորված են մահճակալներով, սեղաններով, սառնարաններով և հեռուստացույցներով: Երկսենյականոց տեսակցության սրահներն ունեն առանձնացված սանհանգույց: Կա նաև ընդհանուր սանհանգույց և խոհանոց: Ընդհանուր սանիտարական վիճակը լավ էր:

Հեռախոսակապ

"Արթիկ" ՔԿՀ-ի յուրաքանչյուր մասնաշենքում տեղադրված է մեկական տաքսաֆոն և բանտարկյալները օգտվում են դրանցից ըստ սահմանված գրաֆիկի: Ադմինիստրացիայի թույլտվությամբ դատապարտյալները կարող են նաև զանգեր կատարել սահմանված գրաֆիկից դուրս: Սակայն, ՔԿՀ-ում կան դատապարտյալներ, ովքեր նշված գրաֆիկում հաշվի չեն առնվում: Օրինակ՝ դատապարտյալ Նիկոլ Փաշինյանը, ով ոչ միայն հեռախոսակապից օգտվելու հնարավորություն չուներ, այլ նաև նամակագրությունից: Այս սահնանափակումները որևէ կերպ չեն հիմնավորվում

ինչպես ՔԿՀ վարչության ղեկավարության, այնպես էլ “Արթիկ” ՔԿՀ-ի ադմինիստրացիայի կողմից:

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունման կետը գտնվում է վարչական մասի շենքերից մեկի առաջին հարկում: Հանձնուքի ընդունումն ու զննությունը կատարվում է մոտ 20 քմ մակերես ունեցող սենյակում, որտեղ տեղադրված է ժամանակակից “Ռապիսկան” զննման սարք: Սկանավորման սարքի կողքին տեղադրված է կշեռք. ըստ օրենքի՝ կալանավորվածներին կարելի է փոխանցել ամսեկան 70 կգ-ից ոչ ավել հանձնուք: Սենյակում տեղադրված է նաև դիմում-բողոքների արկղ:

- **Խցեր**

“Արթիկ” ՔԿՀ-ն բաղկացած է հինգ մասնաշենքից՝ մեկուսարան, երեք կիսափակ տեսակի ուղղիչ հիմնարկ, մեկ կիսաբաց և մեկ բաց տեսակի ուղղիչ հիմնարկ: Մեկուսարանի, ինչպես նաև կիսափակ և կիսաբաց ուղղիչ հիմնարկների խցերը նույնանման են՝ 10 քմ (երկու տեղանոց) և 16 քմ (4 տեղանոց) մակերեսներ ունեցող խցեր: Մեկուսարանը և երեք կիսափակ տեսակի ուղղիչ հիմնարկների մասնաշենքերը նմանատիպ են՝ երկհարկանի շինություններ են, որոնցից յուրաքանչյուրում տեղավորվում է շուրջ 50 դատապարտյալ: Յուրաքանչյուր հարկում կա շուրջ 30 քմ մակերես ունեցող, կահավորված հանգստի սենյակ: Սենյակներից երեքում տեղադրված էր թենիսի սեղան: Մեկուսարանի երկրորդ հարկում է տեղակայված հոգեբանի սենյակը, որի մակերեսը շուրջ 30 քմ է: Երկրորդ հարկում է գտնվում նաև աշխատողների համար նախատեսված սենյակը: Յուրաքանչյուր մասնաշենք հսկում են երկու հսկիչ, ովքեր զինված են ռետինե մահակներով: Մասնաշենքերի հարկերում հսկիչների համար առանձնացված սենյակներում տեղադրված են կանչի սարքեր, որոնց միջոցով երկկողմանի կապ է հաստատվում հսկիչի և խցի միջև, ինչը հնարավորություն է տալիս առանց բղավելու կանչել հսկիչին:

Փաստաբանների և քննիչների հետ հանդիպման համար ՔԿՀ-ում առանձնացված է շուրջ 16 քմ մակերես ունեցող նոր կահավորված առանձին սենյակ:

Յուրաքանչյուր մասնաշենքում կա 8 հատ 4 տեղանոց և 8 հատ 2 տեղանոց խուց: Խցերի դռները երկաթյա են, հատակը փայտից է, պատուհանները՝ մետաղապլաստե: Բոլոր խցերը վերանորոգված են, ներսում կա սանհանգույց՝ ժամանակակից լվացարանով և զուգարանակոնքով: Տեղադրված է երկու, երեք կամ չորս մահճակալ, հեռուստացույց, DVD, պահարան, իսկ որոշ խցերում՝ նաև սառնարան, էլեկտրական սալիկ: Խցերի ներսում ապահովված է բավարար լուսավորություն: Պատուհանները վարագուրածածկ են, պատուհանագոգերին և հատակին ծաղկամանների մեջ դեկորատիվ բույսեր են դրված: Խցերից մեկում փոքր վանդակում պահվում էր երգող թռչուն, ինչի շնորհիվ բավականին հաճելի մթնոլորտ էր ստեղծված:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

“Արթիկ” ՔԿՀ-ի յուրաքանչյուր մասնաշենքի յուրաքանչյուր հարկում կա մեկ ընդհանուր բաղնիք՝ նոր վերանորոգված: Յուրաքանչյուր բաղնիքում տեղադրված է մեկ լվացարան և երկու ցնցուղ, որոնք առանձնացված են միջնապատով: Որոշ բաղնիքներում կա նաև ջեռուցման անհատական համակարգ: Ազատազրկվածները լոգանք են ընդունում ըստ սահմանված ժամանակացույցի՝ շաբաթը մեկ անգամ:

Հիմնարկում գործում է լվացքատուն, որն ունի երեք նոր “Սամսունգ” մակնիշի լվացքի մեքենա: Լվացքատան աշխատանքներն իրականացնում են դատապարտյալները: Լվացքատանը կից գործում է չորանոց, որտեղ կա արդուկ, ինչպես նաև կարի մեքենա:

- **Բուժսպասարկում**

“Արթիկ” ՔԿՀ-ի բուժմասը գտնվում էր վերանորոգման ընթացքում: Այստեղ կա 6 սենյակ, որոնցից յուրաքանչյուրն ունի մոտ 12 քմ մակերես: Բուժմասն ունի առանձնացված խոհանոց և սանհանգույց:

Բուժմասում աշխատում է երկու բժիշկ, ատամնաբույժ, թոքախտաբան և 4 բուժակ: Տարին երկու անգամ վարչության կողմից շրջիկ ֆլուորագրաֆիկ մեքենաների օգնությամբ տեղում կատարվում է ֆլուորագրաֆիա, իսկ հարկ եղած դեպքում դատապարտյալներին տեղափոխում են մոտակայքում գտնվող քաղաքացիական հիվանդանոց՝ համապատասխան բուժզննում անցնելու համար: Ի տարբերություն

“Նուբարաշեն” ՔԿՀ-ի, մեկուսարանը նոր բերված կալանավորների ՄՌՊ և ֆլուորագրաֆիկ հետազոտություններ իրականացնելու հնարավորություն չունի: Ըստ հիմնարկի բժշկի՝ դեղորայքի պակաս չի զգացվում, սակայն երբեմն հիվանդ կալանավորների կամ դատապարտյալների հարազատները իրենք են դեղորայք բերում: Հիվանդասենյակներում փայտե և լինոլեումապատ հատակի փոխարեն վերանորոգումից հետո լինելու են լամինատե, հեշտ մաքրվող հատակներ: Մեր այցելության ընթացքում հիմնարկի բուժմաս բերվեցին մետաղապլաստե դռներ և պատուհաններ:

Ըստ բուժմասի պետի՝ որոշ խոչընդոտներ և ձգձգումներ են առաջանում՝ կապված շտապ կերպով հիվանդին կենտրոնական կամ քաղաքացիական հիվանդանոց տեղափոխելու հետ: Թղթագրությանը, քրեակատարողական վարչությանը տեղեկացնելուն և պահակախումբ ապահովելուն վերաբերող հարցերը բավականին ժամանակատար են:

Դիտորդական խումբը պատժախցում հանդիպեց տուբերկուլյոզով հիվանդ դատապարտյալի, ով դիտորդների խուց մտնելուն պես հազավ բժշկական դիմակ: Հիվանդին պատժախցում մեկուսացնելու պատճառը կրում էր ոչ թե պատժիչ, այլ պրոֆիլակտիկ բնույթ. տուբերկուլյոզով հիվանդին լիարժեք հետազոտելու համար ժամանակ է պահանջվում, իսկ հիվանդին մեկուսացնելը կատարվում է այլ դատապարտյալներին չվարակելու նպատակով:

- **Զբաղվածությունը**

Գրադարան

Գրադարանը գտնվում է կիսաբաց ուղղիչ հիմնարկի մասնաշենքում: Այստեղ պահվում է ավելի քան 3500 կտոր գիրք: Դիտորդական խմբի այցելությունից 2-3 օր առաջ, ըստ գրադարանավարի, գրադարանը բարեգործական աղբյուրներից համալրվել է գրքերով: Գրքերի ելքն ու մուտքը կարգավորվում է համապատասխան մատյանի միջոցով՝ գիրք ստացողներից ստորագրություն վերցնելով: Փակ տիպի ուղղիչ հիմնարկի դատապարտյալներից շուրջ 80 հոգի օգտվում է գրադարանից, իսկ ընդհանուր առմամբ կալանավորների ու դատապարտյալների շուրջ 25-30 տոկոսը օգտվում է գրադարանից: Գրադարանը նոր գրքերի կարիք ունի:

Դպրոց

Կիսաբաց ուղղիչ հիմնարկի մասնաշենքում է նաև տեղակայված դպրոցը, որն ունի 65 աշակերտ, որոնց տարիքը տատանվում է 18-ից 28-ի սահմաններում: Դասերը սկսվում են ժամը 16.00-ին. դասավանդվում են հանրակրթական դպրոցների համար նախատեսված բոլոր առարկաները բացի նախնական զինվորական պատրաստությունից և ֆիզիկական դաստիարակությունից: Դասասենյակներում տեղադրված էին 6-8 հատ երկտեղանոց նոր դասասեղաններ: Ըստ դպրոցի տնօրենի՝ դպրոցը նոր դասագրքերի կարիք ունի:

Զբոսանք

“Արթիկ” ՔԿՀ-ի քննչական մեկուսարանի կալանավորների համար նախատեսված զբոսահրապարակները չորսն են: Դրանցից յուրաքանչյուրն ունի մոտ 10 քմ մակերես, ներսում՝ մեկ նստարան:

Կիսափակ ուղղիչ հիմնարկի մասնաշենքում հանգստի գոտի է հանդիսանում մասնաշենքի բակը, որը ծառապատ է, ընդարձակ, ունի տաղավարներ: Մասնաշենքերից մեկում գտնվում է սպորտհրապարակը, իսկ հիմնարկի տարածքում կա ֆուտբոլի դաշտ, որտեղ պարբերաբար անց են կացվում ֆուտբոլային և այլ մարզաձևի խաղեր:

Հիմնարկի տարածքում կառուցվում էր մատուռ, որի աշխատանքներին ներգրավված էին նաև որոշ դատապարտյալներ: Մատուռի կառուցման աշխատանքների ֆինանսավորումը հիմնականում կատարվում էր սույն ՔԿՀ-ում նախկինում ազատազրկման պատիժ կրած անձանց միջոցներով:

- **Սնունդ**

“Արթիկ” ՔԿՀ-ի խոհանոցը շուրջ 80 քմ մակերես ունեցող մեծ սենյակ է, որը նախկինում վերանորոգվել է, սակայն խոնավության պատճառով առաստաղն արդեն վնասված է և վերանորոգման կարիք ունի: Օդափոխության առանձնացված համակարգ չկա. բոլոր պատուհանները բաց էին: Ընդհանուր առմամբ խոհանոցի սանիտարահիգիենիկ վիճակը կարելի է գնահատել բավարար: Խոհանոցում կա 5 մեծ կաթսա, որոնցում պատրաստվում են առանձին ճաշատեսակները, եռացվում է թեյի

ջուրը: Կա նաև մեկ էլեկտրական սալիկ: Խոհանոցում աշխատում են դատապարտյալները: Շաբաթը մեկ անգամ ճաշացանկը փոխվում է: Ըստ խոհանոցի աշխատակցի՝ ավելացած ճաշը թափվում է: Ճաշերի որակի և պահպանման մատյան է վարվում, որը ստորագրվում է բժշկի և հերթապահի կողմից: Խոհանոցում տեղադրված են երկու մեծ երկաթե սառնարաններ, ինչպես նաև կարտոֆիլ մաքրող սարք, լվացարան և այլն: Խոհանոցին կից գտնվում է նույն չափի ճաշարանը, որը վերանորոգման կարիք ուներ. խոնավության պատճառով այստեղ նույնպես պատերը վնասված էին: Ճաշարանում տեղադրված էր 10 սեղան՝ յուրաքանչյուրը 10 հոգու համար նախատեսված:

- **Պատժախուց և կարանտին**

Դիտորդական խմբի այցելության պահին պատժախցում գտնվում էր մեկ դատապարտյալ: Պատժախցերը թվով տասն էին՝ յուրաքանչյուրը մոտ 5 քմ մակերեսով: Պատժախցերի հատակը փայտյա էր, տեղադրված էր փայտե սեղան և մահճակալ, իսկ անկողնային պարագաները տրամադրվում էին երեկոյան: Բոլոր 10 խցերի համար գործում էր մեկ ընդհանուր սանհանգույց՝ ասիական տիպի զուգարանակոնքով, լվացարանով: Սանհանգույցը գտնվում էր ոչ այնքան մաքուր վիճակում:

Կարանտինի համար նախատեսված էր առանձին սենյակ՝ մոտ 80 քմ մակերեսով: Կարանտինային սենյակում տեղադրված էր 10 անկողին և 2 մեծ սեղան: Կարանտինային սենյակը ջեռուցվում էր, ուներ առանձնացված սանհանգույց, որը վերանորոգված էր, ուներ ցնցուղ, լվացարան և զուգարանակոնք: Այցելության պահին այստեղ գտնվում էր 4 նոր բերված կալանավոր:

10.”Վանաձոր” քրեակատարողական հիմնարկ

- **Ընդհանուր տեղեկատվություն**

“Վանաձոր” քրեակատարողական հիմնարկի շենքը շահագործման է հանձնվել 2007թ.-ին, որը նախկինում եղել է ավտոբուսի պարկ:

Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը 06.09.2010թ.-ից մինչև 17.09.2010թ.-ն ընկած ժամանակահատվածում 11:00-18:00-ն ընկած ժամերին այցելել է “Վանաձոր” ՔԿՀ:

Չնայած այն հանգամանքին, որ շենքը շահագործման է հանձնվել 3 տարի առաջ՝ միանգամից աչքի է զարնում այն փաստը, որ շինարարական աշխատանքները կատարվել են թերի, ոչ արհեստավարժ շինարարների կողմից. փորձ է արվել ծախսել հնարավորինս քիչ ֆինանսական միջոցներ: Սրան գումարվել է նաև խոնավությունը, և արդյունքում խցերի պատերի վրայի ներկը և գաջածածքը տեղ-տեղ թափվել, քայքայվել է, իսկ սանհանգույցի խողովակների վթարի պատճառով խցերի առաստաղներն են քայքայվել: Միջանցքներում տեսչական անձնակազմի համար նախատեսված պահակակետը մետաղապլաստից շինություն է, որի հատակը բետոնից է և նույնիսկ փայտածածկ չէ: Ընդհանուր առմամբ միջանցքների արհեստական լուսավորությունը բավականին թույլ էր: Խցերի դռներն իրենց կառուցվածքով ամուր չէին, փայտյա էին՝ ծածկված թիթեղով: Առանց հաշվի առնելու դատապարտված և կալանավորված անձանց թիվը՝ հարկերում կառուցվել էին փոքր և շահագործման համար ոչ պիտանի բաղնիքներ: Մոնիտորինգային խմբի այցելության ժամանակ վերակառուցման փուլում էին գտնվում 3-րդ և 4-րդ հարկերի բաղնիքները, ինչպես նաև կառուցվում էր նոր հսկիչ-անցագրային կետ:

“Վանաձոր” ՔԿՀ-ն ունիվերսալ տիպի է, այսինքն՝ իր մեջ պարունակում է ինչպես բաց, կիսաբաց, այնպես էլ փակ և կիսափակ տիպի ուղղիչ հիմնարկներ: Սույն ՔԿՀ-ի համար հաստատված է հետևյալ լրակազմը՝

ա) փակ ուղղիչ հիմնարկ - 130 մարդ,

բ) կիսափակ ուղղիչ հիմնարկ - 10 մարդ,

գ) կիսաբաց ուղղիչ հիմնարկ - 15 մարդ,

դ) բաց ուղղիչ հիմնարկ -10 մարդ,

գ) կալանավորվածներին պահելու վայր - 80 մարդ:

Ըստ լրակազմի՝ հիմնարկը նախատեսված է 245 դատապարտյալի և կալանավորվածի համար: Այցելության պահին այստեղ գտնվում էր 243 մարդ: Հիմնարկի պետ Ա. Մխոյանը սեպտեմբեր ամսվա դրությամբ իր պաշտոնն էր զբաղեցնում շուրջ 4 ամիս, իսկ համակարգում աշխատում է 2009թ.-ի ապրիլի 7-ից:

Նրա խոսքերով մինչ իր պաշտոնավարումը հիմնարկի անվտանգությունը բավարար կերպով ապահովված չէր. դիտակետերից մեկը գտնվում էր ոչ հարմար դիրքում և չուներ համապատասխան տեսադաշտ: Պետ նշանակվելուց հետո նա իր միջոցներով հիմնարկի ամբողջ տարածքում հսկող տեսախցիկներ է տեղադրել:

Ըստ հիմնարկի պետի՝ իր պաշտոնավարման սկզբնական շրջանում հիմնարկը ջրամատակարարման հետ կապված խնդիրներ չի ունեցել: Սակայն, ներկայումս հիմնարկի հարակից շինություններին ջուր մատակարարելու պատճառով մասնաշենքի 4-րդ հարկում ջրի հոսքը ժամանակ առ ժամանակ դանդաղում է: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ ՔԿՀ-ում ջրամատակարարումը կրում է մշտական բնույթ: Հիմնարկը չունի էլեկտրաէներգիայի հետ կապված խնդիրներ. հոսանքի անջատման դեպքում ավտոմատ կերպով միանում է գեներատորը, որն ապահովում է ողջ հիմնարկի էլեկտրամատակարարումը: Հիմնարկը չունի նաև ջեռուցման հետ կապված խնդիրներ. ՔԿՀ-ն ապահովված է կենտրոնական ջեռուցման համակարգով:

ՔԿՀ-ն ունի ավելի քան 200 աշխատակից, որոնցից մոտ 100-ը պահպանության բաժնի աշխատակիցներ են, իսկ շուրջ 50-ը՝ անվտանգության: Նոր պետի նշանակումից հետո մոտ 15 աշխատող կրճատվել է. հսկիչներից 4-ը աշխատանքից հեռացվել են ազատազրկվածներին բջջային հեռախոսներ վաճառելու համար, իսկ մեկի նկատմամբ էլ նույն պատճառով ծառայողական քննություն էր սկսվել և հիմնարկի պետի միջնորդությամբ գործը ուղարկվելու էր հատուկ քննչական բաժին: Հետագայում նմանատիպ դեպքերից խուսափելու համար, պետը հիմնարկի տարածքում տեղադրել է խլացուցիչ սարքեր, որոնք, սակայն, նրա իսկ խոսքերով, բարձր արդյունավետություն չեն ապահովում, ինչի պատճառով փոխարինվելու են նորերով:

Հիմնարկում աշխատում է մեկ պայմանագրային հոգեբույժ, կա բժշկի երկու թափուր հաստիք:

Կալանավայրի աշխատակիցները հայտնեցին, որ կալանավորների գործերով տարբեր մարզեր մեկնելու ծախսերը կատարվում են իրենց հաշվին, քանի որ նախարարությունը իրենց գումար չի հատկացնում: Սոցիալ-հոգեբանական բաժնի աշխատակիցներից տեղեկացանք, որ հաճախ անհրաժեշտություն է առաջանում

մեկնելու ՀՀ տարբեր մարզեր՝ կապված կալանավորների և դատապարտյալների գործերի հետ: Գրեթե բոլոր ֆինանսական ծախսերը, կապված գործուղման հետ, կատարում են իրենց հաշվին, քանի որ ո՛չ հիմնարկությունը, և ո՛չ էլ վարչությունն իրենց դրամական միջոցներ չեն հատկացնում:

- **Կապն արտաքին աշխարհի հետ**

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների սրահի մակերեսը մոտ 50 քմ է: Այստեղ կա 7 սեղան, որոնցից յուրաքանչյուրի համար նախատեսված է 2 նստարան՝ ամրացված հատակին: Հարկ է նշել, որ մեկուսարանի պետի սենյակում տեղադրված հեռուստացույցի միջոցով հնարավոր է դիտել կարճատև հանդիպումների ողջ սրահը: Բացի տեսախցիկից, տեսակցության ընթացքում սրահում գտնվում է նաև տեսչական անձնակազմի աշխատակից: Ըստ պետի՝ տեսակցությունների սրահը ճիշտ չի կառուցված և առաջիկայում անհրաժեշտ է այն ձևափոխել, առանձնացնելով կալանավորվածներին իրենց հարազատներից ապակյա միջնորմներով, որպեսզի տեսակցության եկածները հնարավորություն չունենան թմրամիջոցներ և այլ կարգի արգելված իրեր փոխանցել:

Երկարատև տեսակցություններ

“Վանաձոր” ՔԿՀ-ի երկարատև տեսակցությունների սենյակները 2-ն են՝ յուրաքանչյուրի մակերեսը 16-20 քմ: Սենյակներում կա պահարան, սեղան, մահճակալներ, բազմոց և բազկաթոռներ: Տեսակցության եկածների համար գործում է ընդհանուր խոհանոց: Սենյակները ջեռուցվում են կաթսայատան կենտրոնական համակարգի միջոցով և ապահովված են սանհանգույցով: Բնական լուսավորությունը բավարար է:

Հեռախոսակապ

“Վանաձոր” ՔԿՀ-ի յուրաքանչյուր մասնաշենքում, բացառությամբ առաջինի, տեղադրված է մեկական տաքսաֆոն, որից կալանավորված անձինք և դատապարտյալներն օգտվում են ըստ նախապես կազմված ժամանակացույցի:

Երբեմն նախաքննության մարմնի հատուկ որոշմամբ որոշ ժամանակով հեռախոսակապից օգտվելու արգելք է դրվում: Մասնաշենքերից մեկում պատին փակցված էր խլացուցիչ սարք, որը թույլ չէր տալիս կալանավորվածներին և դատապարտյալներին օգտվելու անօրինական ճանապարհով ձեռք բերված բջջային հեռախոսներից:

Հանձնուքներ

“Վանաձոր” ՔԿՀ-ում հանձնուքի ընդունման կետը 10-12 քմ մակերես ունեցող 2 մասի բաժանված սենյակ էր. մի մասը նախատեսված էր հանձնուքը հանձնելու համար, տեղադրված էր սեղան՝ 2 նստարաններով, իսկ մյուսը նախատեսված էր հանձնուքը կշռելու, ստուգելու և ընդունելու համար: Հանձնուքի փոխանցման համար թույլատրելի ժամերը և կարգը, սննդի և իրերի ցանկը փակցված էին սենյակի պատին: Հանձնուքի զննումը կատարվում է ժամանակակից “Ռապիսկան” սարքի միջոցով:

Սենյակում չկար լվացարան ու սանհանգույց, և սննդի հետ գործ ունեցող տեսչական անձնակազմն այն ստուգում էր ձեռքերով, ինչը հակահիգիենիկ բնույթ է կրում: ՔԿՀ-ում գործում էին ադմինիստրացիայի կողմից անհիմն կերպով սահմանված արգելանքներ տարբեր տեսակի մրգեր և հատապտուղներ ընդունելու վերաբերյալ: Օրինակ՝ խաղող, ծիրան, ձմերուկ, սեխ, հոն հարազատների կողմից բերելն արգելվում էր, և թվարկված ապրանքները ետ էին վերադարձվում: Պատճառաբանությունները հիմնականում կապված են այն հանգամանքի հետ, որ խցերում այդ մրգերից և հատապտուղներից հնարավոր է ոգելից խմիչքներ պատրաստել: Սակայն, դատապարտյալներից մեկի հետ զրույցի ընթացքում նա պարզաբանեց, որ ավելի դյուրին է ոգելից խմիչք ստանալ նույն չամիչից կամ ծիրանի չրից, որոնց մուտքը ՔԿՀ թույլատրվում է, քան խաղողից կամ ծիրանից, որոնց ներմուծումն անհայտ պատճառներով արգելվում է: Սա, ըստ շատ կալանավորների և դատապարտյալների, ևս մի անհիմն պատժի ձև է: Մեկ այլ դատապարտյալ մեզ հետ զրուցելիս հիմնարկի աշխատակիցների ներկայությամբ տեղեկացրեց, որ կինն իրեն մի քանի կիլոգրամ խաղող էր բերել, որը ոչ միայն չի ընդունվել, այլև չի վերադարձվել, ինչը պարզ է դարձել կնոջ հետ ունեցած հեռախոսազրույցից:

Հանձնուքն ընդունելու սենյակում սեղանին դրված էր խաղողով լի աման, որից օգտվում էին հանձնուքի սենյակի աշխատակիցները:

- **Հանրակացարաններ և խցեր**

ՔԿՀ-ի դատապարտյալների և կալանավորների մասնաշենքը բաղկացած է 4 հարկից: Առաջին հարկում գտնվում է 10 խուց, որոնցից 4-ը պատժախուց են, 4-ը՝ կարանտինային խցեր, և 2 խուց հատկացված է հացադուլավորների համար: Բոլոր 10 խցերը միանման են, ունեն մոտ 17 քմ մակերես: Յուրաքանչյուր խցում կարող է պատիժ կրել 4 անձ. այս շեմը խախտված չէր: Խցերում կային պահարաններ, մահճակալներ և իրար միացված աթոռ ու սեղան, որոնք ամրացված էին հատակին: Հատակը փայտյա էր: Բնական լուսավորությունը բավարար էր, իսկ արհեստական լուսավորությունը՝ անբավարար, քանի որ 17 քմ մակերես ունեցող սենյակը լուսավորվում էր մեկ հատ 60W լամպով: Կային խցեր, որոնց սանհանգույցները գտնվում էին բավականին կեղտոտ վիճակում, հատակը ցեխոտ էր, կիսապատռված պոլիէթիլենե պարկով աղբը նետված էր հատակին: Առաջին հարկում և այստեղի բոլոր 10 խցերում խոնավության մակարդակը շատ բարձր էր, պատերը բորբոսնած էին, ներկածածկույթը քայքայված էր: Պատժախցերից մեկում հոսանքի սնուցման աղբյուրն ամբողջովին բաց էր: Առաջին հարկում կար նաև սենյակ, որը նախատեսված էր քննիչի կամ պաշտպանի հետ հանդիպումների համար:

Երկրորդ հարկում գտնվում է տնտեսմասը, որտեղի կացարաններում բնակվում են տնտեսմասում աշխատող դատապարտյալները: Յուրաքանչյուր կացարան ունի մոտ 36 քմ մակերես, և ներսում տեղադրված է 5 հատ երկհարկանի մահճակալ: Բարաքներում բնական լուսավորությունը բավարար էր, իսկ արհեստականը՝ թերի, քանի որ դրանք լուսավորվում էին 2 հատ 60 W լամպերով: Ըստ քրեակատարողական հիմնարկի անվտանգության աշխատակիցների՝ մեկուսարանի անվտանգության առումով թե՛ վանդակաճաղերը, և թե՛ խցերի դռները շատ անապահով են, քանի որ նույնիսկ թեթև հարվածի դեպքում հնարավոր է դրանք կոտրել: Պատուհանները չափից ավելի մեծ են և ցածր տեղակայված, ինչը հնարավորություն է տալիս կալանավորներին և դատապարտյալներին հարկից հարկ ազատ շփվելու և թելի միջոցով փոքրիկ իրեր փոխանցել:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

Շենքի յուրաքանչյուր հարկում կա լոգարան, որտեղ կա երկու ցնցուղ, հանդերձարան, սակայն բացակայում են նստելու հնարավորությունները: Գրեթե բոլոր լոգարաններում ընթանում էին վերանորոգման աշխատանքներ:

Առաջին հարկի լոգարանից օգտվում էին նաև հիմնարկի աշխատողները: Բուժմասը չունի իր առանձին լոգարանը:

ՔԿՀ-ում գործում է լվացքատուն, որը հագեցած է 4 ավտոմատ լվացքի մեքենաներով: Այստեղ աշխատում էր մի կին՝ ազատ վարձու հաստիքով:

Կալանավորվածները և դատապարտյալներն օգտվում են լոգարանից նախապես սահմանված ժամանակացույցի համաձայն:

- **Բուժսպասարկում**

Բուժմասն ուներ 3 հիվանդասենյակ, որոնք գրեթե ոչնչով չէին տարբերվում մնացած խցերից. ունեին մոտ 12 քմ մակերես, կահավորված էին 3 մահճակալով, 1 սեղանով և նստարաններով: Բուժմասի խցերից մեկում վթարի արդյունքում տեղի ունեցած ջրի արտահոսքի պատճառով առաստաղը ամբողջությամբ քանդված էր, և այդ խցում պառկած էր սրտամկանի ինֆարկտով հիվանդ բանտարկյալ:

Բուժմասն ուներ 2 սենյակ՝ նախատեսված բժիշկների և բուժակների համար, որոնցից մեկում տեղադրված էր ատամնաբուժական աթոռն իր սարքավորումներով: Ըստ բուժմասի պետի՝ հիվանդների հարազատների կողմից բերված դեղերը վերցնելն ու ընդունելը խստիվ արգելվում է: Դեղորայքի առումով որևէ խնդիր չի զգացվում, իսկ ինչ վերաբերում է ծանր հիվանդներին կամ այլ նեղ մասնագիտական բուժման կարիք ունեցող դատապարտյալների կլինիկական հիվանդանոց տեղափոխելուն, ապա այս հարցում որևէ դժվարություն չի առաջանում: Ըստ ատամնաբույժի, որն ազատ վարձու աշխատող էր, ատամնաբուժական աթոռից բացի ստոմատոլոգիական բուժում իրականացնելու համար անհրաժեշտ որոշակի նյութեր և դեղորայքներ իրեն չեն տրամադրվում. այս ամենը նա ձեռք է բերում սեփական ուժերով: Բուժմասն ուներ նաև առավել ագրեսիվ և վտանգավոր հոգեկան հիվանդների համար

նախատեսված հատուկ սենյակ, որը չափերով մոտ 6-8 քմ էր և որի պատերն ամբողջովին պատված էին փափուկ կտորով:

- **Զբաղվածությունը**

Գրադարան

Գրադարանը համալրված է 784 գրքով, որոնց մոտ 70 տոկոսը ռուսերեն լեզվով են: Վերջին անգամ գրադարանը համալրվել էր նոր գրքերով մեկ տարի առաջ, որոնք նույնպես ռուսերեն էին: Գրադարանավարը հայտնեց, որ 6 ամսից ավել է, ինչ գրադարանը չի ստանում թերթեր, և բանտարկյալները մամուլի տեսությանը ծանոթանում են իրենց հարազատների բերած թերթերից: Գրադարանավարը նաև նշեց, որ կա պատմական, գիտահանրամատչելի և դասական գրքերի պահանջ:

Զբոսանք

Հիմնարկն ունի 7 զբոսանքի սենյակ՝ 20-25 քմ մակերեսով: 8-րդ զբոսասենյակը ձևափոխված էր մատուռի:

- **Սնունդ**

Խոհանոցում կար մեկ սառնարան, չժանգոտվող պողպատից 5 լվացարան, տաք ջուր ապահովող 1 սարք, և ճաշ եփելու համար երկու մեծ էլեկտրական կաթսա: Կար նաև էլեկտրական սալօջախ՝ իր ջեռոցով: Խոհանոցին կից գործում էր սրահ, որտեղ տեղադրված էին սեղաններ, բազմաթոռներ՝ նախատեսված տնտեսմասի դատապարտյալների համար:

ՔԿՀ-ի աշխատակիցները հայտնեցին, որ 2009թ.-ին կարտոֆիլը գնել են 240 դր/կգ գնով, մինչդեռ այդ տարի կարտոֆիլի շուկայական գինը 80 դր/կգ էր: Այցելության ժամանակ ճաշարանում դարձյալ չկար կարտոֆիլ, քանի որ դրա շուկայական գինը բարձրացել էր և վարչությունը այն գնելու հնարավորություն չէր ունեցել: Կարտոֆիլին փոխարինում էր եգիպտացորենով պատրաստված շիլայանման կերակուրը:

- **Պատժախուց և կարանտին**

Պատժախցերը գտնվում են առաջին հարկում: Դրանք թվով 4-ն են և ոչնչով չեն տարբերվում մնացած խցերից: Նույնը կարելի է ասել նաև կարանտինային խցերի մասին:

11. "Երևան-Կենտրոն" քրեակատարողական հիմնարկ

- **Ընդհանուր տեղեկատվություն**

"Երևան-Կենտրոն" ՔԿՀ-ն գտնվում է ՀՀ ԱԱԾ-ի շենքի առաջին և նկուղային հարկում: Հիմնարկի շենքը կառուցվել է 1958թ.-ին:

Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը 20.09.2010թ.-ից մինչև 24.09.2010թ.-ն ընկած ժամանակահատվածում 11:00-18:00-ն ընկած ժամերին այցելել է "Երևան-Կենտրոն" ՔԿՀ:

Սա երկհարկանի կառույց է, որի, սակայն, միայն առաջին հարկն է օգտագործվում: Նկուղը գտնվում էր ավերակ վիճակում, խոնավության բարձր մակարդակի պատճառով թափվել էր պատի վրայի գաջի ծածկը: Սենյակներից մեկում կային քարից պատրաստված բետոնապատ մեծ ավազաններ, որոնք ժամանակին նախատեսված էին լվացքատան աշխատանքների համար: Մեր այցելության պահին գործում էր միայն նկուղի սկզբնամասում մի հատված՝ նախատեսված բաղնիքի համար:

Կառույցի օգտագործվող մասը՝ առաջին հարկը, իրենից ներկայացնում է ՔԿՀ-ն իր ադմինիստրատիվ աշխատասենյակներով, խոհանոցով, բուժմասով, գրադարանով և խցերով, որոնք թվով 13-ն են: Զբոսահրապարակները գտնվում են ԱԱԾ-ի շենքի տանիքում: Հիմնարկությունը հանդիսանում է փակ, կիսափակ և կիսաբաց տիպի ՔԿՀ: Հիմնարկությունը ղեկավարում էր Ն. Ղազարյանը, ով սեպտեմբեր ամսվա դրությամբ այս պաշտոնն էր զբաղեցնում 1 տարի 6 ամիս: Պետն ուներ 2 տեղակալ՝ մեկն անվտանգության, մյուսը տնտեսական գծով:

ՔԿՀ-ն նախատեսված է 53 կալանավորված և դատապարտված անձանց պահելու համար, սակայն գործնականում տեղավորում է 50 մարդ: Մեր այցելության պահին

այստեղ գտնվում էր 48 մարդ, որոնցից 3-ը ցմահ դատապարտյալ էին: Ընդհանուր առմամբ հիմնարկն ունի 38 տեղ կալանավորված անձանց համար, 5 տեղ՝ կիսաբաց կարգով պահվող անձանց: Հարկ է նշել, որ մեր կողմից այցելած գրեթե բոլոր խցերում իրար հետ պահվում էին ինչպես դատապարտված անձիք, այնպես էլ քննչական կալանավորները: Նման պայմաններում միայն աշխատակիցները գիտեին, թե որ խցում ինչ տիպի ազատազրկման ենթարկված անձ էր պահվում: Հիմնարկում կային նաև օտարերկրյա քաղաքացիներ՝ երկուսը Իրանից, մեկը Վրաստանից և մեկը Սիրիայից: Ըստ մեկուսարանի պետի՝ նրանց պահման պայմանները ոչնչով չեն տարբերվում մյուս բանտարկյալների պահման պայմաններից: Հիմնարկում սեռական և կրոնական փոքրամասնություններ չկային: Ցավով պետք է նշել, որ ի տարբերություն “Նուբարաշեն” ՔԿՀ-ի, “Երևան-Կենտրոն” ՔԿՀ-ում ցմահ դատապարտյալները իրենց պատիժն են կրում մենախցերում և այլ մարդկանց հետ շփվելու որևէ հնարավորություն չունեն: Այս պատճառով նրանցից մեկն արդեն ցուցաբերում էր ոչ ադեկվատ վարքագիծ և հավանաբար լուրջ հոգեբուժական հսկողության կարիք ուներ. դիտորդներն այն բանի ականատեսն եղան, թե ինչպես էր նա պառկած վիճակում զրուցում կենտրոնական ջեռուցման խողովակի հետ:

Այցելության սկզբում դիտորդական խումբը ՔԿՀ-ի տարածք մտնելիս արձանագրեց, որ հերթափոխը հանձնած տեսչական անձնակազմը, չունենալով հանդերձարան, հագուստները փոխում էր անմիջապես միջանցքում: Չնայած այն հանգամանքի, որ ադմինիստրատիվ սենյակների չափերը շատ փոքր են, այստեղ աշխատում են մեծ թվով աշխատողներ, որոնցից ոչ բոլորն են ապահովված տարրական աշխատանքային պայմաններով (սեղան, համակարգիչ և այլն): Ընդհանուր առմամբ հիմնարկում աշխատում է 44 աշխատակից, որոնցից 6-ը վարձու, մնացածը քրեակատարողական աշխատակիցներ են: Բուժմասը սպասարկում են մեկ բժիշկ, ով հանդիսանում է նաև բուժմասի պետը, և մեկ բուժքույր:

ՔԿՀ-ի պետի աշխատասենյակից մի փոքր այն կողմ գտնվում էր հիմնարկի խոհանոցը, որի դռները բաց էին և որտեղ բացակայում էր բնական լուսավորությունն ու օդափոխությունը:

- **Կապն արտաքին աշխարհի հետ**

Կարճատև տեսակցություններ

ՔԿՀ-ն ունի կարճատև տեսակցությունների համար նախատեսված մեկ 8-10 քմ մակերեսով սենյակ, որն իր նպատակի համար փոքր է: Տեսակցության ընթացքում այստեղ պարտադիր կարգով գտնվում է 1 տեսուչ: Որոշ դեպքերում այցելուների կուտակումներից խուսափելու նպատակով ՔԿՀ-ի ադմինիստրացիան թույլ է տալիս, որ տեսակցություններն անցկացվեն ադմինիստրացիայի աշխատասենյակներից մեկում, որը նախատեսված է քննիչների և պաշտպանների այցելությունների համար:

Երկարատև տեսակցություններ

Երկարատև տեսակցությունների սենյակ "Երևան-Կենտրոն" ՔԿՀ-ն չունի, ինչի պատճառով երկարատև տեսակցությունը փոխարինվում է կարճատև տեսակցությամբ:

Հեռախոսակապ

ՔԿՀ-ի տարածքում գործում է 1 տաքսաֆոն, որը տեղադրված է գրադարանում: Հեռախոսազրույցները տեղի են ունենում տեսչական անձնակազմի ներկայությամբ՝ ըստ նախապես հաստատված ժամանակացույցի:

Հանձնուքներ

Հանձնուքներն ընդունվում են ՔԿՀ-ի տարածքից դուրս գտնվող ԱԱԾ-ի մասնաշենքերից մեկի առաջին հարկում: Հանձնուքի ստուգումն իրականացվում է ժամանակակից "Ռապիսկան" սարքի միջոցով, որից հետո այն ՔԿՀ-ի աշխատակիցների օգնությամբ տեղափոխվում է հիմնարկ: Քաշային առումով սահմանափակում գրեթե չկա: Ամռան ամիսներին լինում են սահմանափակումներ՝ կապված սննդամթերքի տեսակի հետ:

- **Խցերը**

"Երևան-Կենտրոն" ՔԿՀ-ն ունի ըստ չափերի երեք տիպի 13 խուց՝ երկտեղանոց խուցը 10քմ մակերեսով, հինգ տեղանոց խուցը 20-25 քմ և վեց տեղանոց խուցը 25-30

քմ մակերեսներով: Յուրաքանչյուր խցի մոտ 3 քմ-ը զբաղեցնում է սանհանգույցը: Սանհանգույցը առանձնացված է ընդհանուր խցից մոտ 1,5 մ բարձրությամբ միջնորմով: Կան խցեր, որոնցում այս բաժանումն իրականացվել է նրբատախտակի միջոցով: Սանհանգույցները գտնվում են անմխիթար վիճակում: Երեք խցում, որոնք երկտեղանոց են, պահվում է 3 ցմահ դատապարտյալ: Խցերի հատակները փայտյա են, պատուհանները գտնվում են մոտ 2 մետր բարձրության վրա, չափերով փոքր են և բավարար չեն լիարժեք բնական լուսավորություն ապահովելու համար: Յուրաքանչյուր խցում արհեստական լուսավորությունն իրականացվում էր մեկական լամպի միջոցով: Ինչ վերաբերվում է օդափոխությանը, ապա 5 և 6 տեղանոց խցերում այն բավարար չէ: Խցերը կահավորված են երկաթյա մահճակալներով, սեղաններով, բազկաթոռներով: Կան խցեր, որոնցում տեղադրված է հեռուստացույց, սառնարան, DVD, էլեկտրական թեյնիկ: Երեք ցմահ դատապարտյալների մենախցերում որևէ կենցաղային էլեկտրական սարք չկա: Ընդհանուր առմամբ ՔԿՀ-ն և հատկապես խցերը կապիտալ վերանորոգման կարիք ունեն:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

Քրեակատարողական հիմնարկի նկուղային հարկում գործում է բաղնիք, որն իր մեջ ներառում է նախասրահ, հանդերձարան և լողասենյակ, որտեղ տեղադրված է 3 ցնցուղ, որոնցից մեկի տաք ջուրն ապահովվում է էլեկտրական ջրատաքացուցիչի, իսկ մյուս երկուսինը՝ բաքի միջոցով: Բաղնիքը, ինչպես և ամբողջ մեկուսարանը կապիտալ վերանորոգման կարիք ունի: Կալանավորներն ու դատապարտյալները կարող են բաղնիքից օգտվել շաբաթը մեկ անգամ՝ ըստ նախապես սահմանված ժամանակացույցի:

ՔԿՀ-ն չունի լվացքատուն: Բուժմասում կա փոքր, ժամանակակից լվացքի մեքենա, որի միջոցով լվացվում են սպիտակեղենն ու հագուստները: Տնտեսական աշխատանքները կատարվում են ազատ վարձու աշխատողների միջոցով: Ընդհանուր առմամբ ամբողջ մեկուսարանի սանիտարահիգիենիկ վիճակը կարելի է գնահատել անբավարար՝ կապված հիմնարկի հնամաշության, փոքր չափերի և թերի օդափոխության ու բնական լուսավորության հետ:

- **Բուժսպասարկում**

Բուժմասը, որպես այդպիսին, իրենից ներկայացնում է մեկ սենյակ, որտեղ կա բժիշկի սեղան, բուժքրոջ սեղան, հին ատամնաբուժական սարքավորումներով մեկ ստերիլ սեղան՝ նախատեսված փոքրածավալ վիրահատական միջամտությունների համար և մեկ մահճակալ: Տարածքի սահմանափակության պատճառով մահճակալի կողքին է գտնվում հիմնարկում գործող միակ լվացքի մեքենան: Ըստ բուժմասի պետի՝ հիմնարկը որևէ դեղորայքի կարիք չունի. այստեղ հիմնական խնդիրը կապված է ատամնաբույժի բացակայության և բուժակների թվաքանակի հետ: Վերջիններիս թիվը ցանկալի կլիներ ավելացնել 4-ով, քանի որ չի կատարվում գիշերային հերթապահություն, և ցանկացած կանչի ժամանակ բուժքույրը, ով ապրում է մոտակայքում, կամ հերթապահ բժիշկը ստիպված են լինում նորից վերադառնալ հիմնարկ: Խնդիրներ են առաջանում կապված հիվանդների գործիքային և լաբորատոր հետազոտությունների կազմակերպման հետ, քանի որ դրանց անհրաժեշտության պարագայում հիվանդներին ստիպված են լինում տեղափոխել “Դատապարտյալների հիվանդանոց” կամ այլ կլինիկական հիվանդանոցներ: Բուժմասը չի իրականացնում ստացիոնար բուժում. այն անց է կացվում ամբուլատոր պայմաններում: Նոր բերված կալանավորները չեն անցնում որևէ լաբորատոր և ֆլուորագրաֆիկ հետազոտություն: Ֆլուորագրաֆիա իրականացվում է շրջիկ մեքենայի օգնությամբ տարին 2 անգամ:

- **Զբաղվածությունը**

Զբոսանք

ՔԿՀ-ն ունի 6 զբոսահրապարակ, որոնք գտնվում են Ազգային անվտանգության ծառայության գլխավոր մասնաշենքի տանիքում: Զբոսահրապարակներից մեկի տարածքը 20քմ է, երկրորդինը՝ 60քմ, իսկ մյուսներինը՝ 40-50քմ: Այստեղ կան նստարաններ, մարզական սարքեր: Կալանավորներին և դատապարտյալներին զբոսահրապարակ են հասցնում վերելակի միջոցով: Յուրաքանչյուր հրապարակում կարող է զբոսնել 5 հոգուց ոչ ավելի կալանավոր կամ դատապարտյալ: Դատապարտյալները կամ կալանավորները զբոսանքի կարող են դուրս գալ օրական մեկ անգամ՝ մեկ ժամով: Ընդհանուր զբոսանքը կատարվում է երկու հերթափոխով:

Գրադարան

ՔԿՀ-ի գրադարանավարը տեսչական անձնակազմի հսկիչ է, ով չի առանձնանում գործի լավատեղյակությամբ՝ չի վարում մատյան, չգիտի գրքերի կոնկրետ թվաքանակը: Սակայն, նրա խոսքերով կալանավորներն ու բանտարկյալները կանոնավոր կերպով օգտվում են գրադարանից: Այն կալանավորներն ու դատապարտյալները, ովքեր բաժանորդագրվում են, կանոնավոր կերպով ստանում են թերթեր, իսկ չբաժանորդագրված կալանավորներն ու դատապարտյալները ժամանակ առ ժամանակ կարող են օգտվել մամուլի տեսությունից: Գրադարանը հարուստ չէ նոր գրականությամբ, մեծամասամբ ռուսական գրականություն է: Գրքերի թարմացում վերջին անգամ կատարվել է մեկ տարի առաջ՝ բարեգործական հիմունքներով: Գրադարանում է գտնվում նաև տաքսաֆոնը:

- **Սնունդը**

ՔԿՀ-ի խոհանոցը մոտ 10-12քմ մակերեսով տարածք է, որը չունի պատուհաններ և բնական օդափոխության հնարավորություն: Համալրված է մեկ էլեկտրական սալօջախով, մեկ սառնարանով, մեկ կաթսայով, լվացարանով, սպասքի համար նախատեսված պահարանով: Պետի խոսքերով օրական պատրաստվում է նախատեսվածի չափով ուտելիք, որի, սակայն, մեծ մասը չի օգտագործվում, քանի որ բանտարկյալներն ու կալանավորները հիմնականում օգտվում են հարազատների բերած ուտելիքներից:

Խոհանոցի դուռը բացվում է անմիջապես ադմինիստրացիայի ընդհանուր միջանցք և այցելության պահին գտնվում էր բաց վիճակում:

- **Պատժախուց և կարանտին**

Պատժախուց և կարանտինային խցեր մեկուսարանը չունի: Նախատեսված է խիստ օրինախախտներին տեղափոխել այլ ՔԿՀ-ներ:

12.”Գորիս” քրեակատարողական հիմնարկ

- **Ընդհանուր տեղեկատվություն**

“Գորիս” քրեակատարողական հիմնարկը կառուցվել է 1812թ.-ին, իսկ 1878թ.-ից գործում է որպես բանտ: Ներկայումս հիմնարկը հանդիսանում է փակ տիպի ՔԿՀ, սակայն իր մեջ պարունակում է նաև կիսափակ, կիսաբաց և բաց տիպեր: “Գորիս” ՔԿՀ-ն ունի տեղամաս Մեղրիի Նռնաձոր գյուղում, որը համարվում է բաց տիպի: Այստեղ իրենց կալանքն են կրում 11 դատապարտյալ: Հիմնարկն ունի նռան այգիներ, որոնք խնամվում են դատապարտյալների կողմից, որոնց աշխատանքը ղեկավարում է “Աջակցություն դատապարտյալին” հիմնադրամը:

“Գորիս” ՔԿՀ-ի պետն է Արտուշ Մակունցը, ով աշխատում է համակարգում 1978թ.-ից: Նախկինում Մակունցը սույն հիմնարկում աշխատել է որպես տեսուչ, գրադարանավար, այնուհետև ղեկավարել է Նռնաձորի տեղամասը: Հիմնարկն ունի 3 դիտակետ, պատերի վրա արտաքին տրամագծով տեղակայված են տարբեր տեսակի անվտանգության համակարգեր՝ փշալար և շոկային հոսանքալարեր: Հիմնարկի ղեկավարից տեղեկացանք, որ մինչև 2012թ.-ը Խնձորեսկում նախատեսվում է շահագործման հանձնել նոր ՔԿՀ, ինչի պատճառով սույն ՔԿՀ-ում ծախսատար վերանորոգման կամ վերազինման աշխատանքներ չեն իրականացվում: Հիմնարկում չկան օտարերկրյա քաղաքացիներ և կրոնական փոքրամասնություններ:

Ընդհանուր առմամբ ՔԿՀ-ում յուրաքանչյուր շնչի համար նախատեսված 4 քմ տարածքն ապահովված է՝ բացառությամբ տնտեսմասի դատապարտյալների, ովքեր 13 հոգով բնակվում են մոտ 30քմ տարածք ունեցող առանձին 2 կացարաններում, որոնցից մեկը չափերով փոքր է մյուսից: Դեպի կացարան տանող աստիճանները դրսի կողմից են և կապված չեն ընդհանուր մասնաշենքի հետ:

“Գորիս” ՔԿՀ-ի լրակազմը 170 մարդ է՝ ավելացրած Մեղրիի տեղամասի 50 տեղը.

ա) փակ ուղղիչ հիմնարկ - 110 մարդ, փաստացի - 89,

բ) կիսափակ ուղղիչ հիմնարկ - 10 մարդ, փաստացի - 1,

գ) կիսաբաց ուղղիչ հիմնարկ - 10 մարդ, փաստացի - 13 տնտեսմասի դատապարտյալ,

ե) բաց ուղղիչ հիմնարկ - 5 մարդ, փաստացի - 2,

զ) կալանավորվածներին պահելու վայր – 35 մարդ, փաստացի 22:

ՔԿՀ-ում պահվում էին նաև 7 հոգի, որոնց դատավճիռն ուժի մեջ դեռևս չէր մտել, 6 հոգի, որոնցը մտել էր և 1 տարանցիկ: Այսպիսով՝ դատապարտված և կալանավորված անձանց ընդհանուր թիվը կազմում էր 152 հոգի:

2009 և 2010թթ.-ին մահվան, ինքնասպանության և փախուստի դեպքեր չեն արձանագրվել:

Հիմնարկը երկհարկանի շինություն է, որը կառուցված է ցեխի և թեփի խառնուրդից պատրաստված ծեփանյութով: Այն բաղկացած է 37 խցից, որոնցից 2-ը նախատեսված են բուժմասի համար, իսկ 1-ը գործում է որպես կարանտինային խուց: “Գորիս” ՔԿՀ-ում աշխատում է 101 աշխատակից, որոնցից 5-ն աշխատում են Նռնաձոր տեղամասում: Ազատ վարձու աշխատողները 3-ն են՝ 1 խոհարար, 1 հավաքարար և 1 բժիշկ: Մյուս բոլոր աշխատողները քրեակատարողական աշխատակիցներ են: Պետի խոսքերով բուժակի 4 հաստիքները կրճատվել են 2-ով:

Ընդհանուր առմամբ շենքը բավականին հնամաշ է, ներսի գույքը՝ աղքատիկ, արտաքին պատերը տեղ-տեղ քանդված են՝ 2-րդ հարկի մակարդակի վրա դրսից ամրացված մետաղական կոնստրուկցիաներով: Այնուամենայնիվ, հիմնարկը ջրամատակարարման, ջրահեռացման, հոսանքի հետ կապված որևէ խնդիր չունի:

- **Կապն արտաքին աշխարհի հետ**

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների սենյակը գտնվում է հիմնարկի բնակելի գոտու սկզբնամասում: Այն իրենից ներկայացնում է մոտ 20-25քմ-անոց տարածք, որտեղ տեղադրված է մեկ բազմոց՝ իր 2 բազկաթոռներով և սեղան՝ իր աթոռներով: Ըստ աշխատակիցների՝ հիմնականում կուտակումներ չեն լինում. դրանցից խուսափելու համար միաժամանակ տեսակցություն է տրվում միայն 2 տարբեր այցելությունների եկածների: Կարճատև տեսակցությունների սենյակի կողքին գտնվում է փոքր սենյակ (ներսում 1 սեղան և 3 աթոռ)՝ նախատեսված փաստաբանների և քննիչների հետ հանդիպումների համար:

Երկարատև տեսակցություններ

Երկարատև տեսակցությունների սրահը գործում է նույն գոտում, և իրենից ներկայացնում է 2 նույն չափի սենյակ՝ մոտ 15քմ մակերեսով, որտեղ կա մահճակալ, հեռուստացույց, փոքր կողապահարան և 1 զգեստապահարան: Երկու սենյակներն ունեն ընդհանուր խոհանոց՝ խոհանոցային սպասքով, գազօջախով, էլեկտրական սալօջախով, սառնարանով: Երկարատև տեսակցության այցելուների գալուն պես ընդհանուր տարածքի դուռը փակվում է՝ սահմանափակելով այցելուների ելքն ու մուտքը: Տեսակցության եկած անձը սենյակից դուրս գալու հնարավորություն է ստանում միայն հիմնարկի աշխատակիցներին դիմելու միջոցով:

Հեռախոսակապ

Հիմնարկի առաջին մասնաշենքում կա տաքսաֆոնի համար նախատեսված 1 հեռախոսախցիկ: Եվս մեկը տեղադրված է 2-րդ հարկում: Հեռախոսակապից կարելի է օգտվել 15 րոպե մինչև ժամը 18:00-ը՝ ըստ նախապես կազմված ժամանակացույցի:

Հանձնուքներ

Հանձնուքների ընդունման կետը գտնվում է ադմինիստրատիվ մասնաշենքի առաջին հարկում: Այն ունի առանձին մուտք և իրենից ներկայացնում է մոտ 15-20քմ տարածք, որտեղ տեղադրված է 1 սեղան և 2 բազմաթոռ: Այստեղից հանձնուքը պատուհանից փոխանցվում է է կարճատև տեսակցությունների համար նախատեսված սենյակ, որտեղ առանձին սեղանի վրա առանց որևէ սարքավորման, ոչ ստերիլ պայմաններում ենթարկվում է մանրակրկիտ զննման, այնուհետև տնտեսմասի դատապարտյալների միջոցով տեղափոխվում բնակելի գոտի:

- **Խցեր**

“Գորիս” ՔԿՀ-ում խցերն ըստ չափերի 3 տիպի են՝ 2, 6 և 10 տեղանոց: Մեր այցելած գրեթե բոլոր խցերը, բացառությամբ մի քանիսի, ունեն փայտյա հատակ: Ընդհանուր մակերեսի մոտ 2քմ-ը առանձնացված է սանհանգույցի համար, որտեղ կա լվացարան և ասիական տիպի զուգարան: Կան խցեր, որոնցում զուգարանի անցքը փակված է պոլիէթիլենե պարկի մեջ լցված կտորով: Համարյա բոլոր խցերում սանհանգույցը

միջնորմով անջատված է ընդհանուր տարածքից: Որոշ խցերում միջնորմի բարձրությունը հասնում է 1,5 մետրի: Ըստ անվտանգության պետի տեղակալի՝ “Կարմիր խաչ”-ի ֆինանսավորմամբ վերանորոգված, ինչպես նաև դատապարտյալների կողմից վերանորոգված խցեր կան: Եղանք խցերում, որոնք ընդհանրապես վերանորոգված չեն: Այդպիսի վիճակում է գտնվում կարանտինային խուցը: Բոլոր խցերն էլ՝ վերանորոգված կամ ոչ, կապիտալ վերանորոգման կարիք ունեն, քանի որ անգամ վերանորոգված խցերում կան չաշխատող ծորակներ, պատերից թափվում է ներկը, տեղադրված են հին և կիսաքանդ պատուհաններ: Խցերը լուսավորվում են մոտ 2 մետր բարձրության վրա գտնվող պատուհանների միջոցով, որոնք չափերով փոքր են: Արհեստական լուսավորությունը նույնպես բավարար չէ, իրականացվում է փոքր խցերում մեկական, իսկ մեծ խցերում՝ մինչև 3 լամպի միջոցով: Անկողնային պարագաները գտնվում են քրքրված և հնամաշ վիճակում, իսկ համեմատաբար մաքուր և նոր անկողնային պարագաները բերված են կալանավորների և դատապարտյալների հարազատների կողմից: Խցերի ջեռուցումն իրականացվում է կենտրոնացված ջեռուցման համակարգի միջոցով: Խցերում արհեստական օդափոխանակության համակարգ չկա, իսկ բնական օդափոխությունը տեղի է ունենում ոչ լիարժեք, քանի որ նույնիսկ ամռան ամիսներին դռան վրայի՝ կերակուր փոխանցելու համար նախատեսված պատուհանները գտնվում են փակ վիճակում, իսկ պատուհանների փոքր չափերը թույլ չեն տալիս բավարար օդափոխություն ապահովել:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

Ընդհանուր առմամբ մեկուսարանի սանիտարահիգիենիկ վիճակը ցածր մակարդակի վրա է, ինչը հիմնականում կապված է շենքի հնամաշության, ախտազերծող սարքավորումների բացակայության (տեղեկացրեցին, որ ստացել են նմանատիպ սարք, բայց դեռևս չեն օգտագործում) հետ: Բաղնիքները թվով 4-ն են: Դրանցից 2-ը գտնվում են տնտեսմասի բակում, և մեկական բաղնիք՝ մասնաշենքերում: Յուրաքանչյուր բաղնիքում կա 4-5 ցնցուղ, լողասենյակներն առանց միջնապատերի են: Բաղնիքից օգտվելու հնարավորություն տրվում է շաբաթական մեկ անգամ, և ավելորդ ջեռուցման ծախսերից խուսափելու համար բաղնիքի օր է նշանակվում

շաբաթական մեկ օր (ամեն շաբաթվա հինգշաբթի օրը) ամբողջ հիմնարկի համար: Ըստ հիմնարկության աշխատակիցների՝ մեկ ամբողջ օրվա ընթացքում հնարավոր է լինում կազմակերպել լոգանք ողջ հիմնարկի համար:

Օգտագործված անկողինը և հագուստները դատապարտյալներն ու կալանավորները հնարավորություն ունեն լվանալու հիմնարկի լվացքատանը, որն ունի 1 մեծ և 1 փոքր լվացքի մեքենա: Շորերը չորացվում են տնտեսմասի բակում: Լվացքատանն աշխատում է տնտեսմասի դատապարտյալ:

- **Բուժսպասարկում**

ՔԿՀ-ում բուժսպասարկումն իրականացվում է բժիշկի, ով նաև բուժմասի պետն է, մեկ վիրաբույժի և բուժքրոջ միջոցով: Մեր այցելության պահին այստեղ էր գտնվում միայն բուժքույրը և նա էլ մեզ ներկայացրեց հիմնարկի բուժմասը՝ բաղկացած 2 սենյակից, որտեղ նստում են բժիշկները և բուժքույրը: Այնտեղ են կատարվում նաև փոքր վիրահատական միջամտությունները: Բուժմասն իրեն կից ստացիոնար չունի, սակայն 2-րդ հարկի խցերից 2-ը վերանորոգվել և հարմարեցվել են որպես հիվանդասենյակներ: Ցանկացած լաբորատոր և գործիքային հետազոտություն կատարվում է քաղաքային կլինիկական հիվանդանոցում: Ֆլուորագրաֆիա իրականացվում է տարին 2 անգամ բուժվարչության կողմից տրամադրվող շրջիկ մեքենայի օգնությամբ: Նոր էին ստացել ատամնաբուժական աթոռ իր հավելյալ սարքավորումներով, սակայն այն չէր օգտագործվում, քանի որ չկար ատամնաբույժ: Բուժմասն ունի ԷՍԳ-ի հին սարք, որը, սակայն, չի աշխատում: Դեղորայք ստանում են շաբաթը մեկ անգամ Դատապարտյալների հիվանդանոցից. ինչպես քանակական, այնպես էլ որակական առումով դժգոհություններ չկային:

- **Զբաղվածությունը**

Հիմնարկում կա տնտեսմաս, որտեղ աշխատում է 13 դատապարտյալ: Նրանց պարտականությունների մեջ են մտնում տարածքը մաքրելը, ճաշ բաժանելը, լվացքատան աշխատանքները, ինչպես նաև “Աջակցություն դատապարտյալին” հիմնադրամի կողմից տարածքում աշխատեցվող հացի փռի շահագործումը, այն

իրականացնում են 2 դատապարտյալ: Բացի այդ 3 դատապարտյալ իրենց խցերում զբաղվում են փայտից և ոսկորից փոքրիկ առարկաների պատրաստմամբ:

Գրադարան

Գրադարանը գտնվում է հիմնարկի առաջին հարկում: Այն 12-13քմ մակերես ունեցող սենյակ է: Այժմ գրադարանավարի պաշտոնն է զբաղեցնում հիմնարկության սոցիալ-հոգեբանը, ում խոսքերով գրադարանում կա 1138 գիրք՝ մեծամասամբ ռուսական գրականություն: Գրքերը հիմնականում հին են: Գրքերի ելքն ու մուտքը կարգավորվում է համապատասխան մատյանի միջոցով: Ինչ վերաբերում է մամուլին, ապա կան բանտարկյալներ, ովքեր հետաքրքրվում են մամուլի տեսությամբ, սակայն թերթերը ստանում են ուշացումով՝ շաբաթական 2 անգամ: Գրքերը շատ երկար ժամանակ է չեն թարմացվել:

Զբոսանք

Զբոսանքի համար հիմնարկն ունի 4 զբոսահրապարակ՝ մոտ 25քմ մակերեսով: Բոլոր զբոսահրապարակները գտնվում են առաջին հարկում, վերևից ծածկված են վանդակաճաղերով և ներսում ունեն մեկական նստարան: Զբոսանքի հնարավորություն տրվում է ամեն օր (ներառյալ շաբաթ և կիրակի օրերը) մեկ ժամով:

- **Սնունդ**

Սնունդը պատրաստվում է ճաշարանում 2 խոհարարի կողմից, որոնցից մեկը ՔԿՀ-ի աշխատակցուհի է, իսկ մյուսը՝ ազատ վարձու: Ընդհանուր առմամբ խոհանոցը բավականին ընդարձակ սենյակ է, և մոտ 1,5-2մ բարձրություն ունեցող միջնորմով բաժանված է 2 մասի: Առանձնացված փոքր մասը գործում է որպես սպասքը պահելու, լվանալու և հում կամ կիսաֆաբրիկատ սննդամթերքը պահելու վայր: Սենյակի մյուս՝ մեծ հատվածը գործում է որպես բուն խոհանոց, որտեղ տեղադրված է 2 փոքր գազօջախ, որոնց չափերը փոքր են և չեն համապատասխանում կաթսաների (թվով 4) չափերին, և մեկ էլեկտրական սալօջախ: Ինչ վերաբերում է սննդին, ապա, չնայած ճաշի համար օգտագործվող սննդամթերքների աղքատությանը, երևում էր, որ այն պատրաստված է հմուտ խոհարարի ձեռքերով: Ճաշի նմուշն ուսումնասիրելիս

արձանագրեցինք, որ դրանում կարտոֆիլ չկար, իսկ պահածոյացված տավարի մսի քանակը չնչին էր: Խոհանոցի ընդհանուր վիճակը հիգիենայի առումով կարելի է գնահատել բավարար, սակայն թե՛ վերանորոգումը և թե՛ օգտագործվող սարքավորումները հնամաշ են. խոհանոցը կապիտալ վերանորոգման և կառուցվածքի ձևափոխման կարիք ունի, որպեսզի առանձնացվեն ճաշարանի 2 մասերը, և պատրաստի սննդամթերքը չառնչվի նոր բերված ու տեխնիկական մշակման չենթարկված մթերքի հետ:

Մեր այցելության պահին 7-րդ, 12-րդ և 16-րդ խցերի կալանավորվածների համար պատրաստվում էր առանձին դիետիկ սնունդ, որը, ըստ ճաշարանի խոհարարի օգնականի, տրամադրվում է ստամոքսի հիվանդություն ունեցող անձանց:

- **Պատժախուց և կարանտին**

Հիմնարկի առաջին հարկում գտնվում է մի խուց, որի մակերեսը մոտ 10-15քմ է, և որը նախատեսված է կարանտինի համար: Այստեղ տեղադրված են 2 երկհարկանի երկաթյա մահճակալ, կա սեղան՝ իր բազմաթոռով: Պատի մեջ ամրացված է փոքր երկհարկանի երկաթյա դարակ՝ սպասքի և այլ պարագաների համար: Քանի որ մեր այցելության պահին այստեղ նոր բերված կալանավորներ կամ դատապարտյալներ չկային, խցում բացակայում էին անկողնային պարագաներ: Ինչ վերաբերում է ընդհանուր խցին և մոտ 1,5մ բարձրությամբ միջնորմով առանձնացված սանհանգույցին, ապա դրանք գտնվում են խայտառակ քայքայված, կեղտոտ, հակասանիտարական վիճակում և որևէ կերպ նախատեսված չեն կալանավորներին և դատապարտյալների տեղավորելու համար:

Պատժախցերը թվով 3-ն են մոտ 6-8քմ մակերեսով: Դրանցից յուրաքանչյուրը նախատեսված է մեկ անձի համար: Բոլոր պատժախցերն ունեն փայտյա հատակ, սանհանգույցը գտնվում է ներսում, առանձնացված չէ: Կահավորված են երկաթյա մահճակալներով, փոքրիկ աթոռով և սեղանով: Բնական լուսավորությունը բավականին թույլ է, իսկ արհեստական լուսավորությունն իրականացվում է մեկական լամպի միջոցով, որոնց անջատիչները գտնվում են դրսում: Մեր այցելության ժամանակ երեք խցերի անկողնային պարագաներն էլ թափված էին

միջանցքի հատակին: Դրանցում գտնվող 3 դատապարտյալներն էլ պատիժ էին կրում խցային պայմաններում ոգելից խմիչք պատրաստելու և օգտագործելու համար:

ՀՀ “Էրեբունի”, “Նուբարաշեն” և “Վարդաշեն” քրեակատարողական հիմնարկների մոնիտորինգի հաշվետվություն՝ կատարված “Սոցիոսկոպ” կազմակերպության կողմից

Հելսինկյան Ասոցիացիայի մոնիտորինգային ծրագրի շրջանակներում հարցազրույցներն են անցկացվել նաև ադմինիստրացիայի աշխատողների հետ: Ստորև նկարագրված են քրեակատարողական հիմնարկներում առկա խնդիրները, այդ թվում նաև ադմինիստրացիային առնչվող՝ հիմնված հարցազրույցների վրա:

ՀԱՄԱՏԵՔՍՏ. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

- **Հարցվողների պատրաստակամությունը տրամադրել տեղեկատվություն**

Ադմինիստրացիայի աշխատակիցների մոտ կա մոնիտորինգի երկու հակադարձ ընկալում.



Ադմինիստրացիայի աշխատակիցների մի մասը պատրաստակամությամբ պատասխանում էր հարցերին՝ ակնկալելով, որ Հելսինկյան Ասոցիացիան Եվրոպական կառույցների միջնորդությամբ իրենց հուզող հիմնախնդիրներին լուծում կտա: Մյուս մասի մոտ նկատվում էր կառույցի մասին որևէ բացասական տեղեկատվություն տրամադրելու վախ:

- **Սոցիալ-հոգեբանական բաժնի մասնագիտական նկարագիրը**

Սոցիալ-հոգեբանական բաժնում աշխատող մասնագետների՝ հոգեբանների, սոցիալական-աշխատողների, միայն մի մասն ունի համապատասխան մասնագիտություն: Օրինակ, հիմնարկներից մեկում նախկին ոստիկանն է աշխատում որպես սոցիալական-աշխատող՝ զուգահեռաբար իրականացնելով մի շարք գործառույթներ, որոնք չեն առնչվում սոցիալական-աշխատողի մասնագիտացմանը, օրինակ, կոորդինացնում և կառավարում է բանտարկյալների զանգերը տուն, հերթագրում ու կազմակերպում է բանտարկյալների լոգանքը և այլն: Միայն որոշ քրեակատարողական հիմնարկներում համապատասխան որակավորում ունեցող հոգեբաններ էին աշխատում: Վերը նշված քրեակատարողական հիմնարկներից որևէ մեկում չկար դիպլոմավորված սոցիալական-աշխատող:

Հիմանխնդիրը՝ ոչ մասնագետների ներգրավվածությունը սոցիալ-հոգեբանական բաժնում:

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

- **Ադմինիստրացիայի աշխատակիցների անբավարար թվաքանակը**

Ադմինիստրացիայի աշխատանքը դժվարանում է մեծ թվով բանտարկյալների և նրանց սպասարկող ադմինիստրատիվ աշխատողների անբավարարության պատճառով: Օրինակ՝ հիմնարկներից մեկում սոցիալ-հոգեբանական բաժնում կա 11 հոգի, ովքեր աշխատում են 1200-1300 կալանավորի հետ: Հատկապես դժվարանում է հոգեբանների գործը, քանի որ յուրաքանչյուր բաժնում կա միայն մեկ հոգեբան, ով պետք է սպասարկի բոլոր բանտարկյալներին:

Հիմանխնդիրը՝ Յուրաքանչյուր 10-13 կալանավորին կամ բանտարկյալին սպասարկում է մեկ աշխատակից սոցիալ-հոգեբանական բաժնից:

- **Բյուրոկրատական թղթաբանություն**

Ադմինիստրացիայի աշխատանքները դժվարանում են պարտադրված թղթաբանության պատճառով, որը որոշ դեպքերում աշխատակիցների կողմից գնահատվում է որպես ավելորդ՝ նրանց համար ստեղծելով լրացուցիչ զբաղվածություն և խլելով բանտարկյալների հետ աշխատանքի ժամանակը: Որպես լուծում առաջարկվում է համակարգչային նորագույն ծրագրերի կիրառումը, ինչը

կհամակարգի ինչպես ադմինիստրացիայի աշխատանքները, այնպես էլ աշխատանքը տարբեր հաստատությունների միջև, օրինակ, Արդարադատության նախարարության և քրեակատարողական հիմնարկների միջև:

Հիմանխնդիրը՝ Թղթաբանության վրա ծախսվում է աշխատաժամանակի հիմնական մասը:

- **Տրանսպորտի հիմնախնդիրը**

Քանի որ քրեակատարողական հիմնարկների մեծ մասը գտնվում է բնակելի տարածքներից հեռու, ապա ադմինիստրացիայի աշխատակիցները բախվում են հաստատություն հասնելու հիմնախնդրի հետ:

- **Սոցիալ-հոգեբանական բաժնի աշխատանքների դժվարությունները քրեակատարողական հիմնարկում՝ ըստ կալանավոր և դատապարտյալ բաժանման.**

  × Կալանավոր – նրանց հետ աշխատանքն ավելի խոցելի է, քանի որ հոգեբանական, սոցիալական և շատ այլ հարցեր են առաջանում,

  × Դատապարտյալ – նա գիտի, որ պետք է նստի, նրա հետ աշխատելը շատ ավելի հեշտ է:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Քրեաիրավական հիմնարկների աշխատակիցների՝ իրենց աշխատանքային պայմանների բարելավման առաջարկներով դիմելու փորձերը պսակվում են անհաջողությամբ, քանի որ աշխատանքի պայմանների բարելավելու իրենց բանավոր խնդրանքներին ստանում են *“ձեռ չի տալիս մի աշխատի”* պատասխանը: Նման պայմաններում աշխատողներին անհրաժեշտ է աշխատանքը շարունակելու մոտիվացիա.

Դրամական՝ աշխատավարձի տեսքով

Բժշկական ապահովագրություն

Նյութատեխնիկական և զուգընթաց աջակցություն (սարքավորումներ, սթոմներ, հեմոդիալիզ, տպիչ, ֆաքս, տրանսպորտային միջոցներ, սթոմ, սեղան)

Դասընթացներ բանտարկյալների հետ՝ ուղղված նրանց տեղեկացվածության/իրավագիտակցության բարձրացմանը

“Մարդը իր չարչարանքի դիմաց չի վարձատրվում: Բժշկական ապահովագրությունը մեզ համար ցանկալի կլիներ: Բժշկական աջակցությունը անբավարար է: Մենք էլ ռիսկային աշխատողներ ենք”,- նշում են ադմինիստրացիայի աշխատողները:

“Աշխատակից Տ.-ն ստանում է հարյուր երեսունվեց հազար դրամ աշխատավարձ, հո նրանից չենք կարող հարյուր տոկոսանոց աշխատանք պահանջել”:

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

- **Պաշտպանվածության հիմնախնդիրը.**

Ադմինիստրացիայի աշխատակիցների մի մասը համարում է, որ այսօր բանտարկյալները ավելի պաշտպանված են տարբեր կառույցների կողմից, քան ադմինիստրացիան: Ադմինիստրացիայի համար հատկապես լուրջ խնդիրներ են առաջացնում այն քաղաքացիները, ովքեր հիմնախնդիրների լուծման համար դիմում են ծայրահեղ քայլերի, օրինակ՝ հացադուլի:

Նիկոլ Փաշինյանի դեպքը (ըստ ադմինիստրացիայի աշխատողի մեկնաբանության)
Նիկոլ Փաշինյանի դիմում է ուղղել ղեկավարությանը այլ հիմնարկ տեղափոխվելու համար: Սակայն դիմումի պատասխանը երկարում է օբյեկտիվ պատճառներով, օրինակ՝ փոստի վրա ծախսած ժամանակով, նաև դեռևս որոշում կայացված չէ նրա պատժաչափի ժամանակի հետ կապված, բանտային ադմինիստրացիայի աշխատողը փորձել է բացատրել, հիմնավորել պատասխանը, որ “քո շահերից է բխում ձգձգումը: Իմանանք ինչքան են տալիս, որ իմանանք ուր տեղափոխենք”:

Սանկցիաների կիրառումը ադմինիստրացիայի աշխատակիցների նկատմամբ հանդիսանում է բանտարկյալների և կալանավորների իրավունքների պաշտպանության հիմնական միջոցը: Օրինակ, ադմինիստրացիայի աշխատակիցներից մեկը նշում է, որ "*տեսակցությունների դեպքում մենք նայում ենք դատապարտյալի որակին: Բայց եթե օրենքով նախատեսվում է: Մեկին չէի ուզում տալ, բայց մտավախությունը կար, որ կբողոքի*":

Բանտարկյալների իրավունքները իրացվում են հենց բանտարկյալների տեղեկացվածության շնորհիվ. "*Նրանք շատ լավ ինֆորմացված են: Նրանց բողոքները տեղ են հասնում: Եթե դիմումը տեղ չհասավ պայթյունավտանգ իրավիճակ է ստեղծվում, մենք են ընկնում հարվածի տակ: Մենք անում ենք ամեն ինչ, որ դատապարտյալը դժգոհություն չունենա*":

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ՊԱՀՎՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԱՆՏԱՅԻՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

- **Բանտային պայմանների բնութագիրը.**

Ադմինիստրացիայի աշխատողներն առանձնացնում են են քրեակատարողական հիմնարկներում առկա հետևյալ հիմնախնդիրները.



- **Տարածքի հիմնախնդիրը**

Քրեակատարողական հիմնարկներում տարածքի սահմանափակության հիմնախնդիրը լուրջ է, հատկապես երբ կալանավորված անձինք բնակվում են խցային պայմաններում: Միջինում մեկ խցում բնակվում է 10-15-20 հոգի: Ադմինիստրացիայի աշխատակիցները գտնում են, որ իշխանությունները պարտավոր են անդրադառնալ այս խնդրին:

- **Բժշկական հիմնախնդիրներին լուծում տալու խոչընդոտները**

Դեպքի նկարագրություն (ըստ ադմինիստրացիայի աշխատողի պատմության)
«Կալանավորներից մեկի ստոծանին բացվել է, աղիները լցվում են վերև, նա ասաց, ինձ ընդունեք հակառակ պարագայում ես պետք է հացադուլ հայտարարեմ: Ես հանդիպել եմ, ասել եմ բժիշկները կգան և դեղահաբեր կտան, որ ցավազրկեն և նրան տեղափոխեն ՑԲ(դատարարտյալների հիվանդանոց): Սակայն նրան ՑԲ-ում հնարավոր չէ աջակցություն ցույց տալ, իսկ քաղաքացիական հիմնարկ տանելը որոշակի բարդույթներ է ներառում՝ մասնավորապես շուրջօրյա վերահսկողությունը ՔԿՀ-ի աշխատակցի կողմից, ինչը անհնարին է»:
Մինչև այսօր խնդիրը լուծում չի ստացել, չնայած փաստաթղթային մասը 1 օր է տևում, և փաստաթուղթն արդեն վարչության ղեկավարության սեղանին է:

Բանտային ադմինիստրացիան որպես լուրջ հիմնախնդիր է տեսնում բանտարկյալների և կալանավորների բուժօգնության կազմակերպումը: Կալանավորներին բժշկական օգնություն հասցնելու խնդիրները, որոնք անհապաղ միջամտություն են պահանջում. ոչ միշտ են արագ լուծում ստանում:

ԼՈՒԾՈՒՄ. Լուծումն ադմինիստրացիայի աշխատակիցները տեսնում են քրեակատարողական հաստատություններում վիրահատություններ իրականացնելու համար հնարավորություն ստեղծելու մեջ:
“Ութսուն տոկոսը վատառողջ մարդիկ են, յոթ տարի նստածին էլ ինչ առողջություն”, գնահատում են ադմինիստրացիայի աշխատակիցները: Հիմնախնդրները լուծող մարմին աշխատակիցները համարում են երկրի իշխանությունը. “Երկրի թագավորը պետք է լուծի այս խնդիրը”:

Բանտարկյալների և կալանավորների զբաղվածության հիմնախնդիրը.

Զբաղվածության ապահովման չհաջողված դեպք	Զբաղվածության ապահովման հաջողված դեպք
• «Մենք հիմնադրամն ունեք, պայմանավորվեցինք բլոկների ցեխ դնենք: Բայց չդրեցինք, որովհետև չէր ապառվի արտադրանքը»:	• Լիրսոնոնոսիոյրոն,տորկլոյը առցիալոգի հարդարով, միջամտությամբ, դիմեց հասարակական հեռակա ուսուցման համար, հեռակա պաշտպանություն էր: Իր հավասարեռնությունն էր: Այս տղան տանվեց տարի հետաձգ է: Նորից դիմել է մեզ ասպիրանտուրայի համար: • *Դժվարությունները.* Ես (ադմինիստրատիվ աշխատողը) պետք է վեր կենամ գնամ կրթության նախարարություն այդ հարցերը լուծելու համար: • *Դժվարությունը հաղթահարելու համար:* Մեզ պետք է տրանսպորտով ապահովեն, հորմոզ կրոպի միջոցով տարահովեն, որ հեշտ լուծվեն նման խնդիրները:

ԼՈՒԾՈՒՄ. Զբաղվածության բարձր մակարդակը, ըստ հարցվողների, կլուծի բանտային մի շարք հիմնախնդիրներ, այդ թվում՝ կապահովվի կարգ ու կանոնը հաստատություններում:

Խախտումներն ըստ ՀՀ Սահմանադրության և Եվրախորհրդի հանձնարարականների

Համաձայն ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի՝ “ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք”: Չնայած, զրկված լինելով մի շարք անձնական ազատություններից, ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք չեն կարող զրկվել արժանապատվությունից, որը՝ որպես նրանց իրավունքների ու ազատությունների հիմք, պետք է հարգվի և պաշտպանվի պետության կողմից: Մարդկանց սահմանադրական այս իրավունքները ամրագրված են նաև Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից ընդունված Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին “Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականում: Հանձնարարականի ընդհանուր մասում ասվում է, որ

ազատությունից զրկված բոլոր անձանց պետք է վերաբերվել նրանց՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքով, քանի որ նրանք պահպանում են իրենց բոլոր այն իրավունքները, որոնցից օրինականորեն չեն զրկվել: Կյանքի ընթացքն ազատազրկման վայրերում պետք է որքան հնարավոր է մոտ լինի հասարակության մեջ կյանքի դրական կողմերին: Ավելին, ազատազրկումն այնպես պետք է ընթանա, որ նպաստի ազատ հասարակության մեջ ազատությունից զրկված մարդկանց վերաինտեգրմանը:

Համաձայն Հելսինկյան Ասոցիացիայի կողմից իրականացված մոնիտորինգի արդյունքների՝ ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգում ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձանց՝ արժանապատվության հարգման սահմանադրական իրավունքը հիմնականում խախտվում է: Այս կատեգորիայի մարդիկ ՔԿՀ-ների աշխատակազմերի կողմից դիտվում են որպես ոչ միայն ազատությունից, այլ նաև այլ հիմնարար իրավունքներից զրկված անձիք: Ազատազրկման վայրում կյանքը կարելի է համեմատել միայն հասարակության մեջ խիստ անապահով և դաժան պայմաններում գոյություն պահպանող խավի կյանքի հետ, ինչը չի նպաստում ազատությունից զրկված մարդկանց վերադաստիարակմանը և հետագայում՝ ազատ հասարակության մեջ ապրելու կարողությանը:

“Եվրոպական բանտային կանոնների մասին” հանձնարարականի այլ բաժինների խախտումները, որոնք առավել հաճախ են հանդիպում ՔԿՀ-ներում, հետևյալներն են.

- Տեղաբաշխման և տեղավորման բաժնի 18.1-րդ, 18.2-րդ կետի գ. ենթակետի, 18.3-րդ, 18.4-րդ կետերի խախտումներ՝ համաձայն որոնց քնելու բոլոր պայմաններն ու պարագաները պետք է ապահովեն հարգանք մարդու արժանապատվության և անձնական կյանքի գաղտնիության նկատմամբ, ինչպես նաև համապատասխանեն առողջության և հիգիենայի պահանջներին: Պետք է տեղադրված լինի ազդանշանային համակարգ, որը բանտարկյալներին հնարավորություն կտա անհապաղ կապ հաստատել աշխատակիցների հետ:

- Հիգիենայի բաժնի 19.1-րդ, 19.4-րդ և 21-րդ կետերի խախտումներ, որոնք վերաբերում են մաքրությանն ու դատապարտյալների անձնական հիգիենայի պայմաններին և որոնց համաձայն բանտերի բոլոր հատվածները պետք է մշտապես պահվեն մաքուր վիճակում, յուրաքանչյուր բանտարկյալ պետք է կարողանա լոգանք ընդունել շաբաթական առնվազն երկու անգամ համապատասխան ջերմաստիճանի պայմաններում, ինչպես նաև բանտարկյալներին պետք է տրամադրվեն առանձին մահճակալներ և առանձին անկողնային պարագաներ:

- Սննդի բաժնի 22.3-րդ կետի խախտումներ, որի համաձայն սննունդը պետք է պատրաստվի և մատուցվի հիգիենիկ պայմաններում:

- Աշխատանքի բաժնի 26.2-րդ, 26.3-րդ, 26.6-րդ, 26.7-րդ կետերի խախտումներ, որոնք վերաբերում են աշխատանքի պայմաններին և որոնց համաձայն քրեակատարողական մարմինները պարտավոր են ջանքեր գործադրել, որպեսզի բանտարկյալներին ապահովեն օգտակար բնույթի բավարար աշխատանքով:

- Զբոսանքի բաժնի 27.1-րդ. 27.2-րդ, 27.3-րդ. 27.4-րդ. 27.6-րդ կետերի խախտումներ, որոնցում նշվում է, որ յուրաքանչյուր բանտարկյալի պետք է ընձեռել օրական առնվազն մեկ ժամ տևողությամբ բացօթյա զբոսանքի հնարավորություն, իսկ անբարենպաստ եղանակի դեպքում, ստեղծել պայմաններ՝ բանտարկյալների զբոսանքն ապահովելու համար: Բացի այդ պետք է ապահովվեն ժամանցի հնարավորություններ, որոնք ներառում են սպորտը, խաղերը, մշակութային միջոցառումները:

- 51.2-րդ կետի խախտումներ, որը վերաբերում է այն բանին, որ անվտանգությունն ապահովող ֆիզիկական խոչընդոտները և տեխնիկական այլ միջոցները պետք է լրացվեն շարժական հսկիչ աշխատողներով, ովքեր ճանաչում են իրենց վերահսկողության տակ գտնվող բանտարկյալներին:

- Առողջության պահպանման բաժնի 40.4-րդ, 40.5-րդ կետերի խախտումներ, որոնք վերաբերում են առաջնահերթ համապատասխան միջոցների առկայությանը, որոնց միջոցով հնարավոր կլինի իրականացնել հիվանդի բուժումը: Բացի այդ յուրաքանչյուր բանտարկյալի պետք է հասանելի լինեն որակավորված ատամնաբույժի և ակնաբույժի ծառայությունները:

- Մասնագիտացված աշխատողների բաժնի 89.1-րդ կետի խախտումներ, որը վերաբերում է մասնագիտացված աշխատողների հաստիքների առկայությանը:

- 79.1 կետի խախտումներ, որը վերաբերում է բանտերի աշխատակիցների աշխատավարձին, որը պետք է բավարար լինի համապատասխան աշխատակիցներ ներգրավելու և պահպանելու համար:

Առաջարկություններ

Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը գտնում է, որ ՀՀ ՔՀԿ-ներում պահվող կալանավորներն ու դատապարտյալներն ունեն բազմաթիվ խնդիրներ՝ կապված իրենց պահման և հետագայում ազատման հետ: Այս խնդիրները մատնանշեցինք ներածության մեջ և հետագայում ամբողջ զեկույցում: Սակայն, մոնիտորինգի միակ նպատակը համակարգում առկա բացթողումներն ու խախտումներն արձանագրելը չէ, այլ նաև դրանց լուծման տարբերակներ առաջարկելը: Այսպիսով, ստորև կետ առ կետ կներկայացնենք մեր առաջարկները.

1. ՔԿՀ-ների համար առաջնային խնդիրը, որն այսօր կանգնած է ամբողջ համակարգի և դատապարտվածների առջև, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատ արձակվելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժաչափով փոխարինելու հարցերով զբաղվող անկախ հանձնաժողովի աշխատանքն է: Այս հանձնաժողովը ստեղծվել է 2006թ.-ին ՀՀ նախագահի կողմից և վերջին 2 տարիների ընթացքում իր աշխատանքում ավելի անարդյունավետ է եղել: Այցելելով բոլոր ՔԿՀ-ները (բացառությամբ “Հրազդան” և “Մեղրի” ՔԿՀ-ների, որտեղ չայցելելու պատճառները ներկայացրել ենք

ներածության մեջ), որտեղ կային դատապարտյալներ՝ արձանագրեցինք, որ նրանց մեծ մասը, երբեմն բավականին վրդովված վիճակում, իրենց դժգոհությունն էին հայտնում պայմանական վաղաժամկետ ազատման անկախ հանձնաժողովի աշխատանքի և գործունեության վերաբերյալ: Դատապարտյալները նշում էին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածով իրենց կատարած հանցանքի հոդվածը նախատեսում է պայմանական վաղաժամկետ ազատում: Սակայն այդ մեխանիզմը չի կիրառվում տարբեր պատճառաբանություններով: Կային դատապարտյալներ, ովքեր ՔԿՀ-ի ադմինիստրացիայի աշխատակիցների ներկայությամբ մեզ հայտնեցին, որ կրել են իրենց պատժի կեսից ավելին, այդ ընթացքում չեն ենթարկվել կարգապահական որևէ տույժի, կատարել են հանրօգուտ աշխատանքներ՝ աշխատելով տնտեսմասի տարբեր բնագավառներում, նույնիսկ ղեկավարության կողմից խրախուսանքների են արժանացել, գնահատվել են որպես դրական և կարգապահ դատապարտյալ, ինչի շնորհիվ ՔԿՀ-ի պետի կողմից ներկայացվել են անկախ հանձնաժողովին, որը, սակայն, անհայտ պատճառներով, առանց որևէ հիմնավոր մեկնաբանության, մերժել է նրանց խնդրանքը: Քանի որ այդ նույն հանձնաժողովի մասին հրամանագրում հստակ նշվում է, որ կայացված որոշումը բողոքարկման ենթակա չէ, դատապարտյալներն արդյունքում հայտնվում են անելանելի վիճակում և, չունենալով բողոքարկման իրավունք, շարունակում են կրել իրենց կալանքը: Այս հարցի շուրջ դիտորդական խումբը բազմաթիվ զրույցներ ունեցավ ինչպես տարբեր ՔԿՀ-ների դատապարտյալների, այնպես էլ ադմինիստրացիայի աշխատակիցների հետ: Հանձնաժողովի անհիմն մերժումների պատճառով ՔԿՀ-ներում առաջացել է գերծանրաբեռնվածություն, ինչը դժգոհություն է առաջացնում դատապարտյալների և ՔԿՀ-ների ղեկավարության մոտ: Որոշ ՔԿՀ-ների ադմինիստրացիայի աշխատակիցները նշում էին, որ անկախ հանձնաժողովի ստեղծումը, առաջին հերթին, անվստահության դրսևորում է իրենց և իրենց կատարած աշխատանքի նկատմամբ: Բացի այդ, եթե պետությունն իր վրա է ստանձնել դատապարտյալներին պահելու և նրանց հետ ուղղիչ աշխատանքներ տանելու պարտականությունները, ապա նրանք՝

որպես այդ գործառույթների անմիջական իրականացնողներ, ավելի լավ գիտեն, թե դատապարտյալներից յուրաքանչյուրն ինչպիսի վարք է դրսևորում, ուղղման ճանապարհին է, թե ոչ, և ավելի լավ գնահատական կարող են տալ՝ հետագա կալանքը կրելու կամ պայմանական վաղաժամկետ ազատ արձակվելու առումով: Մինչդեռ անկախ հանձնաժողովի անդամները, ովքեր տվյալ դատապարտյալին տեսնում են մի քանի րոպե, չեն կարող այս հարցով ճշգրիտ որոշում կայացնել: Եթե ենթադրենք, որ հանձնաժողովի գոյությունը պայմանավորված է այն նկատառումներով, որ տեղի ադմինիստրացիան կարող է լինել ոչ կոմպետենտ կամ կոռումպացված, ապա որտե՞ղ է ապացույցը, որ նույն կոռուպցիան չի կարող գործել հանձնաժողովի ներսում, որը բաղկացած է չփոփոխվող և հաստատված անդամներից: Հակառակ դեպքում, ազատ հանձնաժողովը պետք է պարտավորվի պատճառաբանված և գրավոր բացատրություն տալ իր որոշման վերաբերյալ, որպեսզի մերժում ստանալուց հետո դատապարտյալը բողոքներով և վրդովմունքներով չդիմի ՔԿՀ-ի ադմինիստրացիային՝ ասելով. “տվե՛ք ինձ գրավոր մերժում, որպեսզի ես կարողանամ այն բողոքարկել”:

Այսպիսով, մոնիտորինգի արդյունքում դիտորդական խումբն արձանագրեց, որ անկախ հանձնաժողովը չի կարողանում լիարժեք կերպով կատարել իր պարտականությունները, ինչի մասին փաստում են հարյուրավոր դատապարտյալների բողոքները և վերջին տարիների ընթացքում ամենախոշոր գերծանրաբեռնվածությունը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում: Հետագա խնդիրներից(ինչպիսիք կարող են լինել անհանգստություններն ու մասսայական բողոքի ակցիաները ՔԿՀ-ներում) խուսափելու համար անհրաժեշտ է դիտարկել հանձնաժողովը լուծարելու հարցը կամ այն դարձնել ավելի թափանցիկ, համալրել ՀՀ-ում առավել հնչեղություն ունեցող իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների աշխատողներով, լրագրողներով և հասարակության վստահությունը վայելող անձանցով(արվեստագետներ, հրապարակախոսներ և այլն): Բացի այդ, կայացված որոշումները պետք է ներկայացվեն գրավոր տեսքով և լինեն հստակ պատճառաբանված, որպեսզի հետագայում հնարավոր

լինի դրանք բողոքարկել դատարանում, և որպեսզի չստեղծվի այնպիսի տպավորություն, որ հանձնաժողովն անձեռնամխելի է և դրա կայացրած որոշումներն այլ կառույցներում քննարկման ենթակա չեն:

2. Քանի որ մեր այցելած ՔԿՀ-ներում արձանագրեցինք, որ ճաշարաններում պատրաստվող ճաշի բավականին մեծ մասը (որոշ դեպքերում կեսից ավելին) ավելանում է, և հաշվի առնելով ՔԿՀ-ների սուղ ֆինանսավորումը, Հելսինկյան Ասոցիացիան, ուսումնասիրելով նաև այլ երկրների փորձը, առաջարկում է, որ ամեն երեկո մինչև քնի ժամը խցերի կամ կացարանների հերթապահների կողմից հաջորդ օրը ճաշարանից օգտվել նախատեսողների ցուցակ կազմվի՝ յուրաքանչյուր ցանկացողի կամ չցանկացողի անվան դիմաց ստորագրությամբ, որպեսզի հետագայում կալանավորվածների կամ դատապարտյալների կողմից բողոքներ չլինեն՝ կապված իրենց հասանելի ուտելիքը չտրամադրելու հետ: Այնուհետև, այդ ցուցակը տրամադրվի ճաշարանի աշխատակիցներին, որպեսզի նրանք հստակ իմանան, թե տվյալ օրը քանի կալանավորված կամ դատապարտված անձ է օգտվելու ճաշարանից: Դա ինչպես ժամանակի, այնպես էլ տեխնիկական առումով որևէ խնդիր կամ բարդություն չի առաջացնի: Ավելին, կստեղծի հնարավորություն ճիշտ և ռացիոնալ օգտագործել ստացված սննդամթերքը և, ինչու ոչ, տնտեսման շնորհիվ ձեռք բերել ավելի բազմազան ու որակյալ սննդամթերք և ընդլայնել ճաշացանկը, որը, ըստ մեր դիտարկումների և կալանավորների ու դատապարտյալների կողմից բազմաթիվ բողոքների, միանման է և չի փոփոխվում ամիսների ընթացքում:

   Ճաշարանի աշխատանքն ավելի գրագետ և արդյունավետ կազմակերպելու նկատառումներով ցանկալի կլիներ, որ այստեղ աշխատեին մասնագիտական հմտություններ ունեցող խոհարարներ, քանի որ մեր այցելած ՔԿՀ-ներում, որտեղ աշխատում էին արհեստավարժ խոհարարներ, նույն սննդամթերքի առկայության պայմաններում պատրաստված սնունդը էապես տարբերվում էր թե՛ համային և թե՛ որակական առումով այն ՔԿՀ-ների սնունդից, որտեղ այդ պարտականությունը դրված էր ինքնուս և ոչ արհեստավարժ խոհարարների վրա:

3. Բավականին լուրջ խնդիրներ և բարդություններ են առկա համակարգի բուժսպասարկման ոլորտում: Բուժաշխատողները, միաժամանակ գտնվելով երկու նախարարությունների(Առողջապահության և Արդարադատության) ենթակայության տակ, շատ դեպքերում ստիպված են լինում ետ կանգնել իրենց մասնագիտական պարտավորություններից, քանի որ երբեմն դրանք չեն համընկնում ՔԿՀ-ի ղեկավարության հրամանի հետ: Վառ օրինակ են այն իրավիճակները, երբ կարիք է լինում շտապ և օպերատիվ կերպով հիվանդին տեղափոխել “Դատապարտյալների հիվանդանոց” կամ այլ քաղաքացիական հիվանդանոց. մի կողմից գործողությունները պետք է կատարվեն արագ և սեղմ ժամանակահատվածում, մյուս կողմից գործում է մեծ բյուրոկրատական ապարատ՝ կապված թղթագրության և հերթականությամբ տարբեր վերադաս կառույցներին դիմելու հետ, որոնց դրական պատասխանը ստանալու դեպքում միայն հիվանդին տեղափոխելու հնարավորություն է ստեղծվում: Բժիշկը, կատարելով իր մասնագիտական պարտականությունները, հանդիպում է նաև խնդիրների՝ կապված տարբեր տեսակի քնաբեր և հոգեմետ դեղորայքի նշանակման հետ: Շատերը ստիպված խուսափում են այդ կարգի դեղորայք նշանակելուց՝ հետագայում ավելորդ գրագրությունից և խոսակցություններից խուսափելու համար: Կային բուժմասի պետեր և բժիշկներ, ովքեր բողոքում էին, որ բուն բժշկությունից զատ օրվա ընթացքում շատ ժամանակ է ծախսվում ավելորդ թղթագրության և մատյանների լրացման վրա: “Վանաձոր” ՔԿՀ-ի բուժմասի պետը տեղեկացրեց, որ գործում է հրաման, որով կատեգորիկ կերպով արգելվում է դեղորայք ընդունել կալանավորների կամ դատապարտյալների հարազատներից: Սակայն այդպես էլ պարզ չդարձավ, թե ինչպես են վարվում նույն հիմնարկում, երբ կարիք է լինում թանկարժեք նեղ մասնագիտական դեղորայքի, որը չկա “Դատապարտյալների հիվանդանոցի” կողմից տրամադրվող դեղորայքի ցուցակում: Կան հիվանդ դատապարտյալներ, ովքեր տարիներ շարունակ օգտագործում են բավականին թանկարժեք, սպեցիֆիկ դեղամիջոցներ, և դրանք արգելելը չի բխում բարոյական և մասնագիտական նորմերից: Ըստ մեզ՝ քրեակատարողական վարչությունը պետք է բժիշկներին հնարավորություն տա կատարել իրենց

պարտականություններն անարգել, իսկ եթե որևէ կասկած առաջանա կամ տվյալներ ստացվեն նրանց ոչ բարեխիղճ, անօրինական գործունեության վերաբերյալ, ապա առաջարկում ենք իրականացնել ստուգում մասնագիտական հանձնաժողովի միջոցով: Բացի այդ գտնում ենք, որ քրեակատարողական հիմնարկներում բուժաշխատողները պետք է ենթարկվեն միայն Առողջապահության նախարարությանը, և նրանց մասնագիտական գործունեությունը պետք է վերահսկվի անմիջապես նախարարության կողմից: Ցանկալի կլիներ, որ Առողջապահության նախարարությունն ավելի լուրջ ուշադրություն դարձներ մասնագետների պրոֆեսիոնալիզմին, վերապատրաստման և դեղորայքով ու տարրական բուժսարքավորումներով ապահովման հարցերին:

4. Ուղղիչ աշխատանքային հիմնարկների լուծարումից և ձևափոխումից հետո լուրջ խնդիր է շարունակում հանդիսանալ դատապարտյալների զբաղվածության և աշխատատեղերով ապահովման հարցը: Ինչպես դատապարտյալների, այնպես էլ ադմինիստրացիայի աշխատակիցների հետ ունեցած զրույցներից տեղեկացանք, որ աշխատատեղերի մեծ պահանջարկ կա, քանի որ դատապարտյալներից շատերը ցանկանում են աշխատել իրենց կալանքի ընթացքում և, ինչու չէ, որոշ չափով թեթևացնել իրենց հարազատների ֆինանսական հոգսը, ինչպես նաև որոշ չափով մարել քաղհայցը, եթե այդպիսին կա: Տարիներ առաջ բացված և ոչ արդյունավետ կերպով գործող “Աջակցություն դատապարտյալին” հիմնադրամը ՀՀ տարբեր ՔԿՀ-ներում ստեղծում է մեկ տասնյակը չգերազանցող աշխատատեղեր, ինչը շատ քիչ է: Մի փոքր ավելի լավ էր կազմակերպված աշխատատեղերի հարցը “Աբովյան” ՔԿՀ-ում, որտեղ կանայք զբաղվում են գորգագործությամբ և կար փոքր արտադրամաս, որտեղ կին դատապարտյալները զբաղված էին կար ու ձևով: Մյուս բոլոր ՔԿՀ-ներում հիմնական աշխատանքը փայտից, ոսկորից և այլ կարծր առարկաներից փոքրիկ դեկորատիվ հուշանվերներ պատրաստելն է (թզբեհ, ծխամորճ և այլն): ՔԿՀ-ների որոշ պետեր տեղեկացրեցին, որ, եթե վարչության կողմից լինի համապատասխան թույլտվություն, հաշվի առնելով բավականին մեծ չօգտագործվող տարածքները, դատապարտյալներին կարելի

է ընդգրկել գյուղատնտեսական և անասնապահական աշխատանքների մեջ՝ մի կողմից ստեղծելով նոր աշխատատեղեր, մյուս կողմից հոգալով հիմնարկի կարիքները թարմ և որակյալ սննդամթերքով ապահովման հարցում: Ավելին, եթե տարբեր ՔԿՀ-ների մեջ լինի հստակ աշխատանքի բաժանում (բանջարաբուծություն, անասնապահություն, այգեգործություն), ապա բավականին կթեթևանա պետության բեռը ՔԿՀ-ները սննդամթերքով ապահովելու հարցում:

5. Կոմունիստական ժամանակաշրջանից մինչ օրս պահպանվել են անբացատրելի և չհիմնավորված արգելքներ՝ կապված տարբեր տեսակի մրգեր և բանջարաբոստանային կուլտուրաներ՝ որպես հանձնուք ընդունելու հետ: Այս առումով մեկնաբանությունները տարբեր են. մի ՔՀԿ-ում բացատրում են, որ ամռան ամիսներին շուտ փչացող և թթվող մրգեր չեն ընդունվում տարբեր աղիքային հիվանդություններից խուսափելու համար, մեկ ուրիշում տեղեկացրեցին, որ կան մրգեր և պտուղներ, որոնցից կալանավորները ստանում են ոգելից խմիչք: Սակայն, մենք գտնում ենք, որ այս պատճառաբանություններն անհիմն են, քանի որ ներկայիս ՔԿՀ-ների, եթե ոչ բոլոր, ապա շատ խցեր ու կացարաններ ունեն սառնարան և կալանավորներն ու դատապարտյալները հնարավորություն ունեն շուտ փչացող և թթվող մրգերն ու պտուղները պահել սառը պայմաններում: Եվ վերջապես, կարելի է ոչ թե արգելել, այլ քաշային առումով սահմանափակում դնել որոշ մթերքների վրա: Երկրորդ պատճառաբանության վերաբերյալ շատ տեղին և գրագետ մեկնաբանություն արեց “Վանաձոր” ՔԿՀ-ի մի դատապարտյալ, ով ադմինիստրացիայի աշխատակիցների ներկայությամբ տեղեկացրեց, որ անհայտ պատճառներով ամռան ամիսներին թույլ չի տրվում հանձնուքի տեսքով փոխանցել խաղող, ծիրան, իսկ խաղողի չիրը, որից, ըստ այդ դատապարտյալի խոսքերի, ավելի հեշտ է ոգելից խմիչք ստանալը՝ թույլատրվում է: Ըստ դատապարտյալների՝ թվարկված մրգերի վրա դրված արգելքը ևս մի պատժի ձև է: Եվ վերջապես ամռան շոգ ամիսներին ձմերուկ, սեխ, ծիրան թույլ չտալը դիտվում է ոչ թե որպես խոչընդոտ ոգելից խմիչքներ ստանալու, այլ որպես ևս մի անիմաստ արգելք: Բացի այդ, այն

կալանավորները և դատապարտյալները, ովքեր կփորձեն նման եղանակով ոգելից խմիչք ստանալ, կարող են որպես հումք օգտագործել նաև հացը և այն մրգերը, որոնց մուտքն արգելված չէ: Իսկ ինչ վերաբերում է կարգազանց դատապարտյալների և նրանց պատրաստած խմիչքների հայտնաբերմանը, ապա ՔԿՀ-ներում գործում է համապատասխան բաժին, որի աչալուրջ աշխատանքի դեպքում վերջիններս կբացահայտվեն: Բացի այդ, “Վանաձոր” ՔԿՀ-ում մի մեծահասակ դատապարտյալ, դարձյալ ադմինիստրացիայի աշխատակիցների ներկայությամբ, մեզ հայտնեց, որ իրեն հանձնուքով եկել է հոն և խաղող, որոնց մուտքը արգելել են: Ավելին, երբ նա զրուցել է իր կնոջ հետ, տեղեկացել է, որ խաղողը նրան ետ չեն վերադարձրել: Այս հանգամանքի վերաբերյալ աշխատակիցները ասացին. “Դե լավ, էդ 1կգ խաղողի համար աղմուկ ես բարձրացնում”:

6. Մեր այցելությունների ընթացքում, զրուցելով ՔԿՀ-ների ղեկավարության հետ, տեղեկացանք, որ որոշ հիմնարկների ղեկավարները դեմ չէին լինի, եթե դատապարտվածներն իրենց մոտ ունենային բջջային հեռախոսներ: Եթե հնարավոր լիներ օրենքով սահմանված կարգով այդ հեռախոսները հաշվառել, արգելափակել բոլոր հեռախոսազանգերը, բացի մոտ հարազատներից ստացված ու նրանց արված զանգերից, և օգտագործել այնպիսի բջջային հեռախոսներ, որոնք չունեն լուսանկարելու և ինտերնետային ցանցին միանալու հնարավորություններ, ապա դա դրականորեն կանդրադառնա ինչպես դատապարտյալների, այնպես էլ նրանց հարազատների հոգեբանական վիճակի վրա և կնպաստի հետագա սոցիալական ադապտացիայի գործընթացին: Բացի այդ, բջջային հեռախոսից օգտվելու իրավունքը կարելի է օգտագործել որպես խրախուսանքի միջոց, այսինքն՝ դրական վարք ունեցող և օրինապահ դատապարտյալներն իրավունք կունենան օգտվել այդ ծառայությունից: Հակառակ դեպքում, առանց հիմնավոր պատճառների հեռախոսից օգտվելու արգելքները նպատակին չեն ծառայի, քանի որ ցանկացած դատապարտյալ միևնույն է հնարավորություն ունի օգտվելու ՔԿՀ-ների տարածքում գտնվող տաքսաֆոնից և եթե որևէ գաղտնի տեղեկություն ունենա հայտնելու, ապա դա կանի նույն տաքսաֆոնի միջոցով

կամ ոչ օրինական ճանապարհով աշխատակիցների կողմից ներս բերվող բջջային հեռախոսների միջոցով: Բջջային հեռախոսների օգտագործումը թույլատրելու գործընթացը նվազեցնում է նաև կոռուպցիոն ռիսկերը, քանի որ վերջին ժամանակաշրջանում նույնիսկ մամուլով և հեռուստատեսությամբ տեղեկանում ենք բազմաթիվ առգրավված բջջային հեռախոսների մասին, որոնք, իհարկե, ՔԿՀ-ներ են ներթափանցում անօրինական ճանապարհով՝ դատապարտյալների կողմից աշխատակիցներին տրվող համապատասխան գումարի դիմաց:

7. Եվս մեկ արգելք, որը գործում է ՔԿՀ-ներում, դա ինտերնետ ծառայությունից օգտվելու արգելքն է: Ըստ մեզ, այդ հարցը կարելի է կարգավորել որոշ ինտերնետային կայքեր մուտքը սահմանափակելու միջոցով. կալանավորներին ու դատապարտյալներին թույլ կտրվի օգտվել իրենց տեղեկացված լինելու իրավունքից՝ այցելելով տարբեր լրատվական և ինֆորմացիոն կայքեր: Այս խնդրի դրական լուծմամբ կթեթևանա քրեակատարողական վարչության՝ կալանավորվածներին և դատապարտյալներին թերթերով ապահովելու հոգսը:
8. Ազատազրկումից հետո հասարակության մեջ հեշտությամբ ինտեգրվելու, ընտանիքի հետ կապերը չկորցնելու, ինչպես նաև զուտ մարդասիրական նկատառումներով, ցանկալի կլիներ, որ քրեակատարողական վարչությունը միջնորդեր՝ կատարելու որոշ օրենսդրական փոփոխություններ երկարատև տեսակցությունների տրամադրման մասով: Այսպես, առանձնակի ծանր հանցագործություն կատարած անձինք երկարատև տեսակցությունից օգտվելու հնարավորություն ունեն տարին մեկ անգամ, որն ըստ մեզ, ինչպես նաև իրենց՝ դատապարտյալների և որոշ հիմնարկների ադմինիստրատիվ աշխատողների, բավարար չէ: Տեսակցությունների թիվը պետք է ավելացնել, առնվազն կրկնապատկել:
9. Բավականին լուրջ խնդիր է ՔԿՀ-ներում կալանավորների և դատապարտյալների լոգանքի կազմակերպման հարցը: Լոգանքի կազմակերպման կանոնները դարձյալ գալիս են խորհրդային ժամանակներից և առ այսօր, գլխացավանքներից ու ավելորդ աշխատանքից խուսափելու

նկատառումներով, չեն ենթարկվել փոփոխության: Գուցե հեռավոր Մագադանում շաբաթական մեկ անգամ լոգանք ընդունելը նորմա էր, սակայն ՀՀ-ում, որտեղ հատկապես ամռան ամիսներին սաստիկ շոգ է լինում, կալանավորներն ու դատապարտյալները առնվազն երկու օրը մեկ լոգանք ընդունելու հնարավորություն պետք է ունենան:

10. Անդրադառնալով և արձագանքելով ՔԿՀ-ներում կալանավորվածների և դատապարտյալների պահման պայմանների թերություններին և խնդիրներին՝ անթույլատրելի կլիներ չնշել այն պայմանները, որոնցում գտնվում և աշխատում են հիմնարկների աշխատակիցները: Այս առումով ամենախոցելի վիճակում է գտնվում տեսչական կազմի աշխատակիցները, ովքեր ամենամոտն են գտնվում կալանավորներին և դատապարտյալներին՝ ելնելով իրենց աշխատանքի բնույթից: Ինչպես նրանց անվտանգության հարցը, այնպես էլ մնացած բոլոր հարցերը՝ կապված աշխատանքային օրը ճիշտ կազմակերպելու հետ, լուծված են բավականին թերի կերպով: Տեսուչների աշխատանքի հերթափոխը 24 ժամը մեկ է: Այս ժամանակահատվածում նրանք պետք է հնարավորություն ունենա ոչ միայն կատարելու իրենց աշխատանքային պարտականությունները, այլև ճաշելու, հանգստանալու և հոգալու իրենց այլ կարիքները: Որքան էլ հոգեպես և ֆիզիկապես պատրաստված լինի տեսուչը, միևնույն է հնարավոր չէ 24 ժամվա ընթացքում նույն եռանդով և ուշադրությամբ հսկել կալանավորվածներին և դատապարտյալներին: Ուստի, առաջարկում ենք, որ հերթափոխը լինի գոնե 12 ժամը մեկ: Բացի այդ ՔՀԿ-ների տարածքում կազմակերպել փոքրիկ ճաշարաններ, որտեղ կսնվեն տվյալ հերթափոխի աշխատողները: Ենթադրում ենք, որ եթե պետությունը այդքան մեծ թվով կալանավորվածների ու դատապարտյալների ճաշով ապահովելու, ավելին ավելացած ճաշի զգալի մասը թափելու հնարավորություն ունի, ապա ամենայն հավանականությամբ կստեղծի նաև ՔԿՀ աշխատակիցներին ճաշով ապահովելու հնարավորություն: Սննդամթերքով ապահովված չլինելը հանգեցնում է ՔԿՀ-ներում կոռուպցիայի և անթույլատրելի կապերի ավելացմանը, երբ տարրական ծխախոտ հայթայթելու, թեյ կամ սուրճ խմելու նպատակով, տեսուչը դիմում է

կալանավորներին կամ դատապարտյալներին: Տեսչական կազմի հետ ունեցած անձնական զրույցներից տեղեկացանք, որ նրանք գիշերային ժամերին իրենց հանգիստը կազմակերպում են իրենց աշխատասեղանների և աթոռների վրա: Ինչ վերաբերվում է այն արտոնություններին, որոնցից օգտվում են զինծառայողները(անվճար բուժսպասարկում, քաղաքային տրանսպորտով անվճար երթևեկելու իրավունք, զեղչեր հանգիստն ապահովելու հարցում), ապա դրանցից ՔԿՀ-ների աշխատակիցները չեն օգտվում, մինչդեռ աշխատանքի վտանգավորության և բարդության տեսանկյունից քրեակատարողական վարչությունում աշխատանքը ամենաածանրերից մեկն է: Այդ պատճառով օրենսդրական դաշտում պետք է փոփոխություններ մտցվեն ինչպես արտոնությունների, այնպես էլ աշխատանքային պայմանների բարելավման մասով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԸ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ

Բովանդակությունը

Ներածություն

1. ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ-ի “Նորք” հոգեբուժական կլինիկա
2. ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ-ի “Նուբարաշեն” հոգեբուժական կլինիկա
3. ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ-ի “Նարկոլոգիական” կլինիկա
4. ՀՀ ԱՆ “Սևանի հոգեբուժական հիվանդանոց” ՓԲԸ

ՀՀ ԱՆ հոգեբուժական կենտրոններում և հիվանդանոցներում խախտումներն ու անհամապատասխանություններն ըստ հոգեբուժական օգնության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի

Ներածություն

“Հելսինկյան Ասոցիացիա” իրավապաշտպան կազմակերպության դիտորդական խումբը 2010թ.-ի սեպտեմբերի 3-ից դեկտեմբերի 14-ն ընկած ժամանակահատվածում մոնիտորինգ է անցկացրել Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության հոգեբուժական բժշկական կենտրոններում և հիվանդանոցներում, մասնավորապես, ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ-ի “Նորք”, “Նուբարաշեն”, “Նարկոլոգիական” կլինիկաներ և ՀՀ ԱՆ “Սևանի հոգեբուժական հիվանդանոց” ՓԲԸ: Քանի որ դիտարկումները դեռևս ավարտված չեն, խումբը զերծ է մնում վերջնական գնահատականներ տալուց, դիտողություններ և առաջարկություններ անելուց: Ստորև կներկայացնենք այն հոգեբուժական հաստատությունների ընդհանուր վիճակը, որտեղ իրականացվել է մոնիտորինգ:

1. ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ-ի “Նորք” հոգեբուժական կլինիկա

- **Ընդհանուր տեղեկատվություն**

“Հելսինկյան Ասոցիացիա” իրավապաշտպան կազմակերպության մոնիտորինգային խումբը 03.09.2010թ. այցելեց ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ-ի “Նորք” հոգեբուժական կլինիկա: Կլինիկայի հիմնական մասնաշենքը կառուցվել է 60-ական թվականներին:

Կլինիկան ղեկավարում է Անահիդա Գևորգյանը, ով միևնույն ժամանակ հանդիսանում է Հոգեբուժական բժշկական կենտրոնի փոխտնօրեն:

Նախկինում կլինիկան հնարավորություն է ունեցել ընդունել 125 հիվանդների: Այցելության պահին կլինիկայում գտնվում էին 78 հիվանդ՝ կար 75 մահճակալ:

Հիվանդներից երկուսը օտարերկրյա քաղաքացիներ էին, որոնք, ըստ կլինիկայի ղեկավարի, բերվել էին հիվանդանոց ոստիկանության աշխատակիցների կողմից սուր վիճակում:

Կլինիկան ունի 4 բաժանմունք՝ կանանց, տղամարդկանց, ռազմաբժշկական փորձաքննության բաժանմունք, ինչպես նաև՝ մեկ վճարովի բաժանմունք: Կլինիկայի տարածքում բարերարների միջոցներով կառուցվել էր նաև
“Վան Լինդա” մանկական ամբուլատոր վերականգնողական կենտրոնը: Այստեղ է գտնվում նաև Երևանի պետական բժշկական համալսարանի հոգեբուժության ամբիոնը:

Կլինիկայում գործում է գրադարան, վարսավիրանոց: Կլինիկայում բացակայում են աշխատանքային արհեստանոցները և օժանդակ տնտեսությունը:

Ըստ կլինիկայի ղեկավարի՝ հիմնական մասնաշենքի կապիտալ վերանորոգում չի կատարվել, սակայն հնարավորության սահմաններում իրականացվում է կոսմետիկ վերանորոգում:

Բաժանմունքների դռները բանալիով են, իսկ պալատները չունեն դռներ. դա արվում է հիվանդների անվտանգության նկատառումներով, որպեսզի անհրաժեշտության դեպքում բժիշկները կարողանան շտապ օգնություն ցույց տալ հիվանդներին:

Հիմնարկն ունի կենտրոնացված ջեռուցում:

Էներգիայի մատակարարումն անխափան է, սակայն առկա են խնդիրներ՝ կապված ցանցի խիստ մաշվածության հետ: Բացակայում է նաև գեներատոր՝ հոսանքազրկման դեպքերում միացնելու համար: Պալատներում արհեստական լուսավորվածությունը կարգավորվում է դրսից՝ հիվանդների անվտանգության նկատառումներով:

Ջրամատակարարումն անխափան է, սառը ջուրը՝ շուրջօրյա: Ջրահեռացման ցանցը շահագործման հանձնելուց հետո չի փոխվել, ինչն էլ իր հերթին առաջացնում է խցանումներ:

Ըստ կլինիկայի ղեկավարի հիմնարկը ստանում է բավարար քանակությամբ դեղորայք, այդ թվում նաև՝ նոր սերնդի հակադեպրեսանտներ: Կլինիկայում աշխատում են 15 բժիշկ և 39 բուժքույր ու բուժակ: Անհրաժեշտության դեպքում հրավիրվում են մասնագետներ՝ տեղում հիվանդին նեղ մասնագիտական օգնություն ցուցաբերելու համար, ինչի անհնարինության դեպքում, հիվանդը հիմնարկի աշխատակիցների ուղեկցությամբ

տեղափոխվում է այլ՝ նեղ մասնագիտացված քաղաքացիական հիվանդանոց՝ լրացուցիչ հետազոտման և բուժման, որն իրականացվում է պետ. պատվերի շրջանակներում:

Նկուղային հարկում գտնվում էր հոգեբանի աշխատասենյակը:

Կլինիկայում գործում է լաբորատորիա, որտեղ իրականացվում է արյան և մեզի հետազոտություն: Հարկ է նշել, որ սարքավորումները բավականին հին են, սակայն ըստ լաբորատորիայի բժշկի խոսքերի՝ ռեակտիվների խնդիր չի առաջանում, քանի որ դրանք հաճախակի թարմացվում են:

Բժշկի միջին աշխատավարձը կազմում է 75 000 ՀՀ դրամ, միջին բուժ անձնակազմինը՝ 90 000 ՀՀ դրամ, սանիտարներինը՝ 90 000 ՀՀ դրամ: Աշխատակիցների աշխատավարձի վրա չի ազդում որակավորման բարձրացումը: Ըստ հիմնարկի ղեկավարի՝ աշխատավարձի մասով պարտքերը բացակայում են:

Արտառոց ագրեսիայի դեպքեր չեն արձանագրվել: 2010թ. արձանագրվել է 1 մահվան և 1 փախուստի դեպք:

2010թ.-ի սկզբից մինչև մեր այցելության պահն իրականացվել էր 12 հարկադիր հոսպիտալացում, որոնց վերաբերյալ առկա էին դատարանի որոշումները: Ըստ հիմնարկի ղեկավարի՝ հարկադիր հոսպիտալացման դեպքերում հիմնարկի ղեկավարը պարտադիր կարգով դիմում է համապատասխան դատարանին՝ ներկայացնելով մասնագետների եզրակացությունը: Դատարանը արտագնա նիստ է անցկացնում՝ այդ նպատակով կլինիկայում հատկացված հատուկ տարածքում, որտեղ և որոշում է կայացնում յուրաքանչյուր առանձին անձի վերաբերյալ: Նիստին հիվանդանոցը ներկայացնում է բուժող բժիշկը, հիվանդի շահերը ներկայացնում է կամ փաստաբանը, կամ խնամակալը: Նիստերին ոչ միշտ է ներկա գտնվում հիվանդը. ներկայության հարցը լուծում է դատավորը: Ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից: Խնամքի կարիք ունեցող հիվանդների համար պետական բյուջեով նախատեսված է 3800 ՀՀ դրամ, իսկ սուր հիվանդների համար՝ 5000 ՀՀ դրամ, այսինքն՝ օրենքով սահմանված 24 օր բուժման համար նախատեսվում է 120000 ՀՀ դրամ:

- **Բաժանմունքների ընդհանուր վիճակը**

1. 1-ին բաժանմունքը վճարովի է: Համեմատաբար մյուս բաժանմունքների այն գտնվում էր ավելի բարվոք, մաքուր վիճակում: Այստեղ միևնույն բաժանմունքի տարածքում բուժում են ստանում և՛ տղամարդիկ և՛ կանայք: Այցելության պահին բաժանմունքում գտնվում էին 18 հիվանդ, պալատների քանակը 8-ն էր, իսկ մահճակալները թվով 20-ն էին:

Հիվանդասենյակներում լուսավորվածությունը թույլ էր, լուսամուտների վանդակաճաղերը սահմանափակում էին բնական լուսավորության ներթափանցումը: Նույնը կարելի է ասել արհեստական լուսավորության վերաբերյալ, որը խիստ անբավարար էր ընթերցելու համար:

Հիվանդին տրամադրվում է միայն մահճակալ, բացակայում են անձնական իրեր, առարկաներ պահելու համար նախատեսված կողասեղանները: Հիվանդների հսկողությունը բաժանմունքում հիմնականում իրականացնում էին բուժքույրերը: Ըստ բաժանմունքի աշխատակիցների՝ հիվանդների կողմից ագրեսիայի դրսևորման դեպքերում, եթե մեկ բաժանմունքի սանիտարների քանակը չի բավարարում, հրավիրվում են սանիտարներ այլ բաժանմունքներից: Բաժանմունքում գործում է խոհանոց՝ իր սրահով, որտեղ կա 6 սեղան՝ 4-ական աթոռներով: Սրահի լուսավորվածությունը թույլ է: Բաժանմունքում կա երկու սանհանգույց և բաղնիք՝ նախատեսված տղամարդկանց և կանանց համար: Տղամարդկանց սանհանգույցն ունի խնդիրներ. նստատեղերը կոտրված են, էլեկտրական լամպերը՝ այրված:

Այցելության պահին վճարովի բաժանմունքի սանհանգույցներում իրականացվում էին կապիտալ վերանորոգման աշխատանքներ:

Կար առանձին հիվանդասենյակ, որտեղ միաժամանակ բուժում էին ստանում մեկ կին և մեկ տղամարդ:

Բաժանմունքի հանգստի սրահը չափերով փոքր էր, առանձնացված չէր միջանցքից: Այնտեղ կար հեռուստացույց, 3 բազմոց, պատերին փակցված էին նկարներ:

2. 2-րդ բաժանմունքը, որը նախատեսված էր կանանց համար, գտնվում էր բավականին անմխիթար վիճակում: Այնտեղ բուժում էին ստանում 22 հիվանդ: Բաժանմունքում աշխատում էին 2 բժիշկ, 5 բուժքույր, 5 սանիտար, 1 ավագ քույր: Կրտսեր բուժանձնակազմը բաղկացած էր 12 հոգուց: Բաժանմունքում կա 7 պալատ՝

25 մահճակալներով: Ընդհանուր առմամբ թե՛ բաժանմունքի միջանցքում, թե՛ պալատներում բնական լուսավորությունն անբավարար էր, իսկ արհեստական լուսավորվածությունն իրականացվում է փոքր հզորությամբ էլեկտրական լամպերի միջոցով: Սանհանգույցը գտնվում էր անմխիթար վիճակում, գարշահոտով և ըստ աշխատակիցների՝ չի վերանորոգվել հիմնարկի բացման օրվանից: Բաղնիքը նույնպես կարիք ուներ կապիտալ վերանորոգման, այն նախատեսված էր 2 անձի լոգանք ընդունելու համար, սակայն առանձնացված չէր միջնապատով: Թերի ֆինանսավորման հետևանքով կլինիկան հնարավորություն չունի ձեռք բերելու նոր անկողնային պարագաներ և փոխել հնամաշ ու կոտրված կահույքը: Պալատների մակերեսը կազմում է 15–20քմ: Պալատների մահճակալները, դոշակները գտնվում էին անմխիթար վիճակում: Խոհանոցին կից սրահում կար 6 սեղան՝ յուրաքանչյուրը 4-ական աթոռներով: Միջանցքի մի հատվածը, որը նախատեսված է որպես հանգստի գոտի, կա հեռուստացույց, որն անվտանգության նկատառումներով պահվում է պահարանի մեջ և բացվում է միայն հիվանդների՝ հեռուստացույց դիտելիս: Բազմոցները թվով 2-ն են: Կահույքը բավական աղքատիկ է և հնամաշ: Հիվանդների հսկողությունը հիմնականում իրականացնում են բուժքույրերը: Միջանցքում ունեն նաև դաշնամուր:

3. 3-րդ բաժանմունքը նախատեսված է տղամարդկանց համար: Բաժանմունքում կա 11 հիվանդասենյակ, որոնցից 3-ը գտնվում էին վերանորոգման մեջ: 2 մահճակալ գտնվում էր միջանցքում: Հիվանդների թիվը հասնում է 38-ի: Սանհանգույցում կար 3 լվացարան, 2 ասիական տիպի զուգարան՝ մաքուր վիճակում: Բաղնիքը նախատեսված էր 2 հոգու լոգանք ընդունելու համար, սակայն չկար միջնապատ: Խոհանոցին կից սրահում, որտեղ հիվանդները սնունդ են ընդունում, կար 8 սեղան, որոնց շուրջ ընդհանուր թվով դրված էր միայն 9 աթոռ: Հիվանդների հսկողությունն իրականացնում են հիմնականում բուժքույրերը և մի քանի բուժակ: Միջանցքի մի հատվածում, որը նախատեսված է որպես հանգստի գոտի, կար մեկ փոքր հեռուստացույց, DVD նվագարկիչ, իսկ սեղանի խաղերից՝ նարդի:

4. Ռազմաբժշկական փորձաքննության բաժանմունքը գործում է զորահավաքների ժամանակ. մեր այցելության պահին այն չէր գործում:

5. “Վան Լինդա” մանկական բաժանմունքն առանձին շինություն է, որը գտնվում է “Նորք” հոգեբուժական կլինիկայի տարածքում: Դա ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ-ում գործող միակ մասնագիտացված բաժանմունքն է, որտեղ հոգեկան խնդիրներ ունեցող երեխաները ստանում են ամբուլատոր բուժում: Շենքը կառուցվել է արտերկրի բարերարների ֆինանսական աջակցությամբ: Այն նորակառույց է, սակայն անբարեխիղճ շինարարական աշխատանքի կատարման հետևանքով, այժմ շինության հատակից մոտ 10սմ բարձրության վրա առկա են խոնավության և բորբոսի հետքեր: Ընդհանուր առմամբ շինությունը գտնվում է բարվոք վիճակում: Երեխաների հետ հոգեթերապիա և դասընթացներ անցկացնում են հմուտ հոգեբաններ և հոգեբույժներ: Շինությունում կար առանձին հոգեբանի սենյակ, երեխաների խաղասենյակ, բժիշների համար հանգստի սենյակ, խոհանոց՝ իր համապատասխան սարքավորումներով: Բաժանմունքը համալրված էր անհրաժեշտ աշխատանքային պարագաներով՝ արդյունավետ գործունեություն իրականացնելու համար:

Բաժանմունքի տարածքում էր գտնվում սանհանգույցը, որը ևս գտնվում էր մաքուր, վերանորոգված և սանիտարահիգիենիկ առումով բարվոք վիճակում:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

Բոլոր բաժանմունքներում անկողնային պարագաները գտնվում էին հնամաշ, քայքայված վիճակում: Եթե կային քիչ թե շատ բարվոք վիճակում գտնվող անկողնային պարագաներ, ապա դրանք հիմնականում բերված էին հիվանդի հարազատների կողմից: Բաժանմունքի մաքրությունն իրականացնող սանիտարները ներկայացրեցին, որ չկան համապատասխան քանակությամբ անկողնային պարագաներ՝ վերջիններս հաճախակի փոխելու համար, իսկ եղածն էլ արդեն անպիտան է դարձել: Հիվանդների մահճակալները և բաժանմունքներում առկա կահույքը ևս հնամաշ են և կարիք ունեն փոխման: Սանհանգույցներում և բաղնիքներում պատերը և հատակը կաֆելապատ էին, սակայն քանի որ “Նորք” հոգեբուժական կլինիկան 1960 թվականի շինություն է և երբևէ կապիտալ վերանորոգման չի ենթարկվել, սալիկները տեղ-տեղ թափված էին, խողովակները ժանգոտված, պատերը և առաստաղը քայքայված, պատուհանները կոտրած, որոշ

ծորակներ անսարք, ընդհանուր սանհանգույցը գարշահոտով, ինչն առավել ցայտուն էր տղամարդկանց բաժանմունքի սանհանգույցում, որը նաև հանդիսանում էր որպես ծխելու վայր: Բաժանմունքների սանհանգույցներում բաղնիքների անբավարար սանիտարահիգիենիկ վիճակը, ոչ թե կլինիկայի մաքրությունն ապահովող թերի աշխատանքի հետևանք է, այլ ոչ բավարար ֆինանսավորման խնդիր:

- **Սնունդը**

Սնունդը պատրաստվում էր ճաշարանում, որը գտնվում էր հիմնական մասնաշենքի կիսանկուղային հարկում: Մաքրությունը կարելի էր գնահատել բավարար: Ունեին 2 մեծ չափի էլեկտրական սալօջախ և 4 հնամաշ, փոքր չափի էլեկտրական սալօջախ, որոնցից մեկը գտնվում էր ոչ սարքին վիճակում: Պատուհաններն ապակեպատ էին՝ ամրացված հակամիջատային ցանցով: Ճաշարանում գործում էր օդափոխման համակարգ: Կար լվացարան: Պատերը ծածկված էին ներկով, սակայն ընդհանուր առմամբ ճաշարանը կարիք ուներ կապիտալ վերանորոգման:

Ճաշարանի հետնամասում կա պահեստ, որտեղ պահվում է սննդամթերքը, 2-ական մեծ և փոքր սառնարաններ, որոնցից մեկը չի աշխատում:

Սնունդը ստանում են ամիսը մեկ անգամ, իսկ շուտ փչացող սննդամթերքն՝ ավելի հաճախակի: Հացաբուլկեղենը ստանում են ամեն օր: Այն պահվում էր հատուկ պահարանի մեջ:

Խոհանոցի աշխատակիցների ճերմակ խալաթները գտնվում էին մաքուր վիճակում:

- **Տեսակցություններ և հեռախոսակապ**

Տեսակցություններն աշխատանքային ժամերի ընթացքում ազատ են, եթե դա չի խանգարում բուժման բնականոն ընթացքին: Հիվանդների անվտանգության նկատառումներով հարազատների կողմից բերված սննդամթերքը և իրերը ենթարկվում են մանրակրկիտ զննության: Մատյան չի վարվում, քանի որ դա հետագայում կարող է առաջացնել որոշ դժվարություններ՝ կապված այցելուների անձնագիր չներկայացնելու հետ: Բարենպաստ եղանակի դեպքում՝ տեսակցությունն իրականացվում էր նաև զբոսայգում:

Կլինիկայում չկար տաքսաֆոն: Հիվանդներին չի թույլատրվում օգտվել բջջային հեռախոսներից, սակայն վճարովի բաժանմունքում կատարվելիք մոնիտորինգի ընթացքում դիտորդական խումբը նկատեց 2 հիվանդի, որոնք օգտվում էին բջջային հեռախոսից: Ըստ բժիշկների հիվանդները կարող են օգտվել իրենց աշխատասենյակի հեռախոսներից երբ ցանկանան, եթե, իհարկե, տվյալ հիվանդն ադեկվատ է և գիտի, թե ուր է զանգահարում:

- **Զբոսանք և զբաղվածություն**

Հիվանդների զբոսանքն իրականացվում է կլինիկայի տարածքում գտնվող այգում, որտեղ կային տաղավարներ, և, ինչպես վերը նշվեց, լավ եղանակի դեպքում տեսակցությունն իրականացվում է ոչ միայն կլինիկայի ներսում, այլև զբոսանքի համար նախատեսված տարածքում:

Չնայած այն բանի, որ կլինիկայում բացակայում են աշխատանքային արհեստանոցները և օժանդակ տնտեսությունը, կան հիվանդներ, որոնք երկար ժամանակ գտնվելով կլինիկայում և կորցնելով կապն արտաքին աշխարհի հետ, զբաղվում են հանրօգուտ աշխատանքով, մշակում են այգին, մաքրում են տարածքը, ծաղիկներ խնամում և այլն: Կլինիկայի կիսանկուղային հարկում կար սենյակ, որտեղ հիվանդներին հնարավորություն էր տրվում դաշնամուր նվագել, զբաղվել նկարչությամբ, ասեղնագործությամբ: Այդ սենյակը ձևավորված էր կլինիկայի նախկին և ներկայիս հիվանդների աշխատանքներով և օգտագործվում էր նաև կրոնական ծեսեր իրականացնելու համար: Սակայն հարկ է նշել, որ այդ սենյակը գտնվում էր խոնավ, անբարեկարգ վիճակում և առանց բնական լուսավորության:

2. ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ-ի “Նուբարաշեն” հոգեբուժական կլինիկա

- **Ընդհանուր տեղեկատվություն**

2010թ.-ի նոյեմբերի 12-15-ն ընկած ժամանակահատվածում Հելսինկյան ասոցիացիայի դիտորդական խումբն այցելեց ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական

կենտրոն” ՓԲԸ-ի “Նուբարաշեն” հոգեբուժական կլինիկա: “Նուբարաշեն” հոգեբուժական կլինիկան շահագործման է հանձնվել 1979թ.-ին և ի սկզբանե նախատեսված է եղել որպես այդպիսին: Այն ղեկավարում է Ա.Անանյանը, որն այդ պաշտոնը զբաղեցնում է արդեն երրորդ տարին: Կլինիկան զբաղեցնում է շուրջ 7 հեկտար տարածք և բաղկացած է հետևյալ մասնաշենքերից.

- դատահոգեբուժական փորձաքննությունների և հատուկ տիպի հարկադիր բուժման բաժանմունքների մասնաշենք
- ադմինիստրատիվ մասնաշենք
- ճաշարանի մասնաշենք
- 4 երկու հարկանի ընդհանուր տիպի բաժանմունքների մասնաշենքեր

Սույն կլինիկան հանրապետական տիպի է և այստեղ հիվանդներ են բերվում ՀՀ ողջ տարածքից: Կլինիկան նախատեսված է 350 մահճակալի համար և դիտորդական խմբի այցելության ժամանակ կլինիկայում կային 269 հիվանդներ: Մահճակալներից 10-ը նախատեսված է դատահոգեբուժական փորձաքննությունների բաժանմունքի համար, 60-ը՝ հատուկ տիպի հարկադիր բուժման բաժանմունքի համար, մնացածը՝ 40 մահճակալներից բաղկացած բաժանմունքներ են, որոնցից երկուսը նախատեսված են կանանց համար: Այս կլինիկայում բուժում ստանում են միայն չափահաս անձինք: Արտերկրի քաղաքացիներից դիտորդական խմբի այցելության պահին կլինիկայում բուժում էր ստանում ազգությամբ հայ, սակայն Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, որի առնչությամբ առկա էր հետևյալ խնդիրը. նա կլինիկա է բերվել շտապ օգնությամբ՝ սուր վիճակում և ելնելով այդ վիճակից՝ նրան ընդունել են, սակայն միևնույն ժամանակ դիմել են Առողջապահության նախարարություն, որպեսզի թույլտվություն ստանան նրան պետպատվերի շրջանակներում բուժելու համար:

Կլինիկայի ֆունկցիաների մեջ են մտնում.

- Սուր անհետաձգելի հիվանդների բուժում
- Խրոնիկ հիվանդների բուժում՝հիվանդության սրացման դեպքում
- Խրոնիկ հիվանդների խնամք
- Դատահոգեբուժական ստացիոնար փորձաքննություն

- Զինակոչիկների ռազմաբժշկական փորձաքննություն
- Հոգեկան հիվանդների հարկադիր բուժում՝ ընդհանուր կամ հատուկ տիպի բաժանմունքներում

Սույն կլինիկայում վճարովի բաժանմունք չկա և հիվանդների բուժումն իրականացվում է պետպատվերի շրջանակներում: Ընդ որում՝ սուր հիվանդի համար նախատեսված է օրական 5350 դրամ (ներառյալ ինչպես սնունդը, դեղորայքը, այնպես էլ գազի, ջրի և այլնի վարձավճարները), իսկ խնամքի կարիք ունեցող հիվանդի համար՝ 3150 դրամ:

Կլինիկայի ղեկավարի խոսքերով՝ իր պաշտոնավարման ժամանակ այնտեղ կապիտալ վերանորոգում չի իրականացվել, սակայն կատարվել են մանր կոսմետիկ վերանորոգումներ:

Կլինիկան ջեռուցման խնդիրներ չունի, սակայն դիտորդական խմբի այցելության ժամանակ՝ նոյեմբերի 12-15-ն ընկած ժամանակահատվածում, կենտրոնական ջեռուցումը դեռ միացված չէր այն պատճառաբանությամբ, որ դեռևս տաք է, և ջեռուցման կարիք չկա, ինչպես նաև պետք է համապատասխան հրահանգ և թույլտվություն լինի քաղաքապետարանի կողմից:

Ջրամատակարարման հետ կապված խնդիրը հետևյալն է. շուրջօրյա ջրամատակարարում իրականացվում է ոչ բոլոր մասնաշենքերում: Ինչպես նշում են կլինիկայի աշխատակիցները՝ ջրի շուրջօրյա մատակարարման հետ կապված խնդիր չի առաջանում միայն այն ժամանակ, երբ կլինիկան սպասարկող ավազանում ջուր է լինում:

Սույն հիմնարկն ունի ջրահեռացման հետ կապված լուրջ խնդիրներ: Կոյուղագծերում պարբերաբար խցանումներ են առաջանում դրանց հնամաշ լինելու պատճառով: Սակայն ինչպես նշում է կլինիկայի ղեկավարը, կլինիկան գտնվում է սողանքի գոտում և կոյուղագծերի մասնակի վերանորոգումները չեն կարող վերջնականապես լուծել այդ խնդիրը, այդ իսկ պատճառով դրանց կապիտալ վերանորոգման անհրաժեշտություն է ծագում, որը սակայն կապված է բավականին մեծ գումարների հետ: Դրանից ելնելով՝ կլինիկայի ղեկավարը նշում է, որ կլինիկան

ունի հովանավորների կարիք, քանզի միայն պետական միջոցներով հնարավոր չէ լուծել ինչպես կլինիկայի վերանորոգման, այնպես էլ հիվանդների խնամքի հարցերը:
Կլինիկան էլեկտրամատակարարման խնդիր չունի. այն սնուցվում է երկու գծով և մեկի անջատման դեպքում միանում է մյուսը: Ինչպես տեղեկացրեց կլինիկայի ղեկավարը՝ հոգեբուժական կլինիկան չունի էլեկտրական գեներատոր:
Կլինիկայի ղեկավարի խոսքերով՝ իր պաշտոնավարման ընթացքում վարչակազմի և հիվանդների միջև բախումներ, սպանության, ինքնասպանության և փախուստի դեպքեր չեն արձանագրվել:

- **Բաժանմունքների ընդհանուր վիճակը**

Ընդհանուր տիպի բաժանմունքները նախատեսված են 40 մահճակալի համար և հիմնականում ծանրաբեռնված չեն: Սակայն լինում են դեպքեր, երբ բաժանմունքում հիվանդների թիվը հասնում է մինչև 45: Դիտորդական խմբի կողմից այցելված բոլոր բաժանմունքները չէին ենթարկվել կապիտալ վերանորոգման կլինիկայի բացման օրվանից: Կոսմետիկ վերանորոգումները, որոնք կատարվել էին բաժանմունքներում, բավարար չեն: Բաժանմունքում պատերը ներկված էին դեղին գույնի ներկով, սակայն քանի որ երկար տարիներ վերանորոգում չի իրականացվել, պատերի ներկերը թափված էին և ըստ սանիտարների՝ որքան էլ պատերը մաքրվեն, միևնույն է հիվանդասենյակները մաքուր տեսք չեն ստանա: Բաժանմունքները չունեին նաև որևէ ազդանշանային համակարգ, որի միջոցով հիվանդները հնարավորություն կունենային կապ հաստատել բուժանձնակազմի կամ, եթե անկողնային հիվանդ է, խնամողի հետ: Դրա փոխարեն բաժանմունքում հսկողությունը սահմանում են երկուական սանիտար: Հարկ է նշել, որ թե՛ հիգիենայի, թե՛ ընդհանուր առմամբ կանանց բաժանմունքները տարբերվում էին մնացած բաժանմունքներից՝ գտնվում էին ավելի բարվոք վիճակում:
Բաժանմունքներում հիվանդասենյակների մակերեսը կազմում էր շուրջ 35քմ տարածք: Հիվանդասենյակները միջանցքից առանձնացնող դռներ չկան և հիվանդներն ազատ տեղաշարժվում են բաժանմունքում: Հիվանդասենյակներում հատակը լինոլեումապատ էր, սակայն որոշ սենյակներում այն բավականին հնամաշ էր, պատառոտված և խանգարում էր հիվանդների շարժին: Հիվանդասենյակներն

ունեին երեքական պատուհաններ, որոնք պատված էին ճաղավանդակներով: Սենյակներում, ինչպես նաև բաժանմունքներում ընդհանրապես, կային մեծ թվով ծաղիկներ, որոնք խնամվում էին ինչպես հիվանդների, այնպես էլ աշխատակիցների կողմից: Բնական լուսավորությունը սենյակներում ապահովված էր, սակայն, ինչպես արձանագրեց դիտորդական խումբը, արհեստական լուսավորումը սենյակներում անհրաժեշտ չափով ապահովված չէր, քանի որ այդ սենյակներում կային ընդհամենը երկուական լամպեր. դրանց անջատիչները գտնվում էին հիվանդասենյակներից դուրս: Հիվանդասենյակներից մեկը նախատեսված էր ինֆեկցիոն և այլ մաշկային հիվանդների մեկուսացման համար: Հիվանդասենյակներում տեղադրված էին 5-10 փայտե կամ երկաթե մահճակալներ, որոնցից ոչ բոլորն ունեին կողապահարաններ: Կային սենյակներ, որտեղ հիվանդներն իրենց անձնական իրերը պահում էին ստվարաթղթե արկղերի մեջ:

Դատահոգեբուժական փորձաքննությունների բաժանմունք

Այս բաժանմունքում մինչև 24 օր ժամկետով պահվում են այն անձինք, որոնց նկատմամբ դատարանի որոշմամբ նշանակվել է դատահոգեբուժական փորձաքննություն: Այս բաժանմունքն ու հատուկ տիպի հարկադիր բուժման բաժանմունքը առանձնացված էին մյուս բաժանմունքներից, և այդտեղ մուտքը սահմանափակ էր: Այն հսկվում էր ներքին գործերի պահպանության գնդի ոստիկանների կողմից: Հարկ է նշել, որ ոստիկանները հրավիրեցին դիտորդական խմբի ուշադրությունն այն բանի վրա, որ ամառ թե ձմեռ որևէ պատսպարվելու տեղ չունեն՝ բացառությամբ մի փոքրիկ անցագրային կետի և նույնիսկ սնունդը պատրաստում և ուտում են մասնաշենքի բակում: Բաժանմունքը նախատեսված է 10 անձանց համար, և դիտորդական խմբի այցելության ժամանակ հենց 10 անձ էլ գտնվում էին բաժանմունքում: Բաժանմունքը բաղկացած էր երեք խցերից, որոնք ունեին երկաթյա վանդակաճաղ դռներ, որոնք փակվում էին բանտային բանալիով: Խցերից առաջինում գտնվում էր 4, երկրորդում՝ 5, իսկ երրորդում՝ 1 փորձաքննվող: Խցերը վաղուց չէին ենթարկվել վերանորոգման, արհեստական լուսավորվածությունն անբավարար էր, անկողնային պարագաները հնամաշ և քրքրված էին: Վերջին խցում գտնվում էր 1 փորձաքննվող, որն ըստ

բուժանձնակազմի՝ համասեռամոլ էր և այդ իսկ պատճառով մեկուսացվել էր մյուսներից: Այդ խցում լիովին բացակայում էին պայմանները բնակվելու համար. հատակը բետոնապատ էր, ոչ մի կահավորում չկար:

Հատուկ տիպի հարկադիր բուժման բաժանմունք

Այս բաժանմունքը նախատեսված է 60 մահճակալի համար, և դիտորդական խմբի այցելության ժամանակ 54 հիվանդ էր բուժվում այդտեղ: Բաժանմունքը սպասարկում է ինչպես ողջ ՀՀ տարածքը, այնպես էլ ԼՂՀ-ն: Այս բաժանմունքը ևս ունի բանտային բանալիով փակվող վանդակաճաղ դռներ: Սենյակների լուսավորվածությունը բավարար էր, դրանցում առանձնացված մահճակալների թիվը տատանվում էր 5-11-ի սահմաններում: Սանհանգույցը համեմատաբար մաքուր վիճակում էր, բաղկացած 2 ասիական տիպի զուգարանից, որոնք առանձնացված էին միջնապատով և լվացարանից: Լոգարանում կար 2 էլեկտրական ջրատաքացուցիչ, ցնցուղները 2-ն էին, որոնք առանձնացված չէին միջնապատով: Բացի բուժանձնակազմից հիվանդների հսկողությունն իրականացվում է նույն պահպանական գնդի ոստիկանների կողմից:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

“Նուբարաշեն” հոգեբուժական կլինիկան գտնվում էր բավականին վատ սանիտարահիգիենիկ վիճակում: Ցանկացած ընդհանուր տիպի բաժանմունք ուներ 2 սանհանգույց՝ մեկը աշխատակիցների, մյուսը հիվանդների համար: Վերջիններիս սանհանգույցը գտնվում էր անմխիթար վիճակում՝ առաստաղը և պատերը քայքայված, խողովակները ժանգոտած, ծորակները անսարք: Սանհանգույցում կային երեքական լվացարան և երեքական ասիական տիպի զուգարաններ, որոնք միջնորմով առանձնացված չէին: Կանանց բաժանմունքներում սանհանգույցը գտնվում էր համեմատաբար բարվոք վիճակում, սակայն դիտորդական խումբն ականատես եղավ նրան, որ այդ բաժանմունքներից մեկում լվացարանի ծորակներից մեկն անսարք էր, և վթարի պատճառով ջուրը հոսում էր ու տարածվում ողջ սանհանգույցով: Լոգարաններում կային երկուական էլեկտրական ջրատաքացուցիչ,

երկուական ցնցուղ, որոնք բաժանված չէին միջնապատով: Այնտեղ էր տեղադրված նաև լվացքի կիսաավտոմատ մեքենան:

Ընդհանուր առմամբ, բաժանմունքներում բավականին ցուրտ էր: Կային հիվանդասենյակներ, որտեղ ծանր և խրոնիկ հիվանդների ոչ բավարար խնամքի պատճառով գարշահոտ էր տիրում: Նույն հիվանդասենյակում գտնվող հիվանդներն այդ ծանր հոտի պատճառով ստիպված բացել էին պատուհանները և անկողիններում պառկած էին ձմեռային վերարկուներով և այլ տաք հագուստներով: Պետք է նշել նաև այն փաստը, որ ապահովված չէին հիվանդների հիգիենայի պատշաճ պայմանները, քանզի դիտորդական խումբը ականատես եղավ նաև, որ հիվանդները կրում էին բավականին կեղտոտ և հնամաշ հագուստ, անկողնային պարագաները ևս հնամաշ էին, պատառոտված: Ըստ սանիտարների՝ անկողնային պարագաները քիչ են և չեն բավականացնում դրանք հաճախակի փոխելու համար:

- **Սնունդը**

Կլինիկայում սնունդը պատրաստվում է առանձին մասնաշենքում գտնվող ճաշարանում, որը գտնվում էր բավականին մաքուր վիճակում. հատակը սալիկապատ էր, պատերը կաֆելապատ: Ներսում տեղադրված էին 5 մեծ էլեկտրական կաթսաներ, 4 սալօջախ, 8 լվացարան և այլ խոհարարական պարագաներ: Ճաշարանում գործում էր օդափոխման համակարգ: Սնունդը պատրաստվելուց հետո այն տեղափոխվում և բաշխվում է բաժանմունքներով, որտեղ և սկզբում տեղավորվում է բաժանմունքներում գտնվող փոքր խոհանոցներում, անհրաժեշտության դեպքում տաքացվում, այնուհետև բաժանվում հիվանդներին: Խոհանոցները բաժանմունքներում գտնվում էին ոչ բարվոք վիճակում: Խոհանոցներում կար էլեկտրական սալիկ, սառնարան(որոշ բաժանմունքներում սառնարանը գտնվում էր տեսակցության սրահում), կահավորված էին պահարաններով, որտեղ պահվում էր սպասքը, 2 սեղանով և 3 լվացարանով: Որոշ խոհանոցների պատերը խոնավ էին, ներկը և ծեփանյութը թափված, ինչը պատճառ էր կոյուղագծերի անսարքության: Ճաշարաններից կերակուրը փոքրիկ պատուհանի միջով փոխանցվում է միջանցքում գտնվող սրահ, որը հանդիսանում է հիվանդների սնունդն ընդունելու վայր, որը դռնով չի առանձնացվում միջանցքից:

Բաժանմունքի ճաշարաններում դիտորդական խումբը նկատեց, որ անհամապատասխանություն կար սեղանների և աթոռների քանակի միջև. վերջիններս բավարար չէին ողջ բաժանմունքի հիվանդներին միաժամանակ այդ ճաշարանում սնելու համար: Առկա գույքը գտնվում էր հնամաշ, կոտրտված վիճակում և խոհանոցի աշխատողները ստիպված սնունդը բաժանում էին մի քանի հերթով, որպեսզի կարողանան կերակրով ապահովել ողջ բաժանմունքի հիվանդներին:

- **Տեսակցություններ և հեռախոսակապ**

Յուրաքանչյուր բաժանմունք ունի իր առանձին տեսակցության սենյակը, որտեղ տեղադրված էին մեծ քանակությամբ պահարաններ՝ հիվանդների անձնական և տեսակցության ժամանակ բերված իրերի համար: Սենյակում կային 2-3 սեղաններ՝ իրենց աթոռներով: Սանիտարներից մեկն անպայման ներկա է գտնվում տեսակցության ժամանակ: Տեսակցությունների համար սահմանափակումներ չկան, աշխատակիցները նշում են, որ հիվանդների հարազատները բավականին քիչ են այցելում հիվանդներին:

Կլինիկայի տարածքում տաքսաֆոններ չկան և հիվանդները կարողանում են զանգահարել բժիշկների առանձնասենյակներում գտնվող հեռախոսներից:

- **Զբոսանք և զբաղվածություն**

Զբոսանքը նախատեսված է օրական մեկ ժամ, որն իրականացվում էր բաժանմունքի բակում գտնվող շուրջ 10քմ մակերես ունեցող ճաղապատ տարածքում: Կլինիկայում բացակայում են աշխատանքային արհեստանոցները և օժանդակ տնտեսությունը: Հիվանդներից մի քանիսը զբաղվում են հանրօգուտ աշխատանքով, մաքրում են տարածքը, ծաղիկներ են խնամում և այլն:

3. ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ-ի “Նարկոլոգիական” կլինիկա

“Հելսինկյան Ասոցիացիա” իրավապաշտպան կազմակերպությունը 14.12.2010թ. այցելեց ՀՀ ԱՆ “Հոգեբուժական բժշկական կենտրոն” ՓԲԸ-ի “Նարկոլոգիական” կլինիկա: Ավանի նարկոլոգիական կլինիկայի առաքելությունների մեջ մտնում է ալկոհոլիզմով և նարկոմանիայով տառապող հիվանդների առաջնակի այցը, խորհրդատվությունը, ստացիոնար բուժումը, որի համար նախատեսված է նույն կլինիկայում 3 բաժանմունք և ստացիոնարից դուրս գրվելուց հետո դիսպանսերային դիտարկում, հաշվառում և, հարկ եղած դեպքում, արտահիվանդանոցային բուժում, որը տևում է 7-10 օր: Մինչ դիտորդական խումբը սպասում էր կլինիկայի ղեկավարին, դիտորդներին հնարավորություն ընձեռվեց ոչ պաշտոնական զրույց ունենալ բաժանմունքներից մեկի բաժնի վարիչի հետ, ով մեզ տեղեկացրեց, որ հիվանդները, ովքեր ցանկություն ունեն բուժվելու, բուժումը ստանում են պետպատվերով կամ անանուն, այսինքն՝ հիվանդի կողմից չի ներկայացվում անձնագիր. հիմնարկությունը նման հիվանդներին չի կարող դիտել որպես ՀՀ քաղաքացի, և հիվանդը պետք է վճարի այնքան գումար, որը մեր պետությունը նախատեսում է իր քաղաքացու ամբուլատոր 10 օրվա բուժման կուրսի համար, այսինքն՝ 30.000 դր.:

Նարկոլոգիական կլինիկան տարեկան կտրվածքով ամբուլատոր բուժում տրամադրում է 150-200 հիվանդի, իսկ ստացիոնար բուժումից օգտվում են մոտ 1000 հոգի: Ներկայացնելով ամբուլատոր բուժման մեխանիզմները՝ բժիշկը նշեց, որ քանի որ հոգեմետ դեղորայքներն առաջացնում են թուլություն, շշմածություն, ճնշման տատանում, նման դեղորայք հիվանդներին տրամադրվում է միայն այն դեպքում, երբ նրանց հետ կլինիկա են գալիս հիվանդի խնամողները կամ հարազատները, հակառակ դեպքում՝ դեղորայք չի տրամադրվում հիվանդներին: Երբ հիվանդը ներկայանում է կլինիկա և տալիս իր համաձայնությունը՝ արտահիվանդանոցային պայմաններում բուժվելու, բժիշկները պարտադրում են, որ հիվանդի հետ ներկայանա իր հարազատներից մեկը, ով հետագայում իրականացնելու է նրա խնամքը և կատարելու է հսկողություն: Քանի որ նարկոմանիայով և ալկոհոլիզմով տառապող հիվանդների մոտ առաջանում է անձի փոփոխություն, նրանք լինում են ոչ ադեկվատ, հաճախակի խուսափում են տալ ճիշտ պատասխաններ, օրինակ, թե ինչպես են անցկացրել օրը, քնել են, թե ոչ: Հիվանդների

հիմնական պահանջն ու խնդրանքներն ուղղված են այն բանին, որ անհանգիստ են, գիշերները լավ չեն քնում, ընդհանուր առմամբ իրենց վատ են զգում. այդպիսով փորձում են խնդրանքներով և բոլոր հնարավոր միջոցներով ավելացնել հոգեմետ դեղորայքի քանակը: Այդ հարցերը հնարավոր է լինում կարգավորել միայն խնամողների և հարազատների միջոցով, որոնց շնորհիվ շատ դեպքերում հաջողվում է ճշգրիտ տեղեկատվություն ունենալ հիվանդի վիճակի մասին: Կլինիկայում գործում է այսպես կոչված՝ "մետադոնային" ծրագիրը, որն իրենից ներկայացնում է թմրամոլներին, որոնք հաշվառվել են և տվել են իրենց համաձայնությունը բուժվելու, ամեն օր ներկայանալ կլինիկա և ստանալ մետադոն, որը հանդիսանում է սինթետիկ նարկոտիկ դեղամիջոց: Ներկայումս այդ ծրագիրը նախատեսված է 300 հիվանդի համար, սակայն մեր այցելության պահի դրությամբ դրանից օգտվում էին մոտ 110-ը: Մեր հարցին, թե ինչու է հիվանդերի քանակը այդ ծրագրի համար նախատեսվածից քիչ, հաշվի առնելով, որ ՀՀ ՔԿՀ-ներում բավականին մեծ թիվ են կազմում թմրամիջոց օգտագործողները և նկատվում է բավականին մեծ աճ թմրամոլությամբ տառապողների, հստակ պատասխան չհնչեց:

Կլինիկայի ղեկավար Պետրոս Սեմերջյանի գալուց հետո իրավիճակը կտրուկ փոխվեց. նախ նա տեղեկացավ մեր այցելության նպատակի մասին, ճշտելով, որ ունենք համապատասխան գրություն և թույլատվություն, բավականին ագրեսիվ տոնով մեզ հայտնեց, որ նարկոլոգիական կլինիկան խիստ տարբերվում է հոգեբուժական հիվանդանոցներից, այն սովորական քաղաքացիական հիվանդանոց է, որտեղ հիվանդները գալիս և գնում են, և մարդու իրավունքների առումով՝ մեր կազմակերպությունը որևէ գործ չունի այնտեղ անելու, նրանք չեն առաջնորդվում հոգեբուժության մասին օրենքով և որևէ կապ չունեն հոգեբուժության հետ: Պրն. Սեմերջյանը նշեց, որ ինքը քաջ տեղյակ է մեր կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքներին և չնայած, որ մարդու իրավունքների առումով մեր կազմակերպությունն այնտեղ գործ չունի անելու, նա պատրաստ է պատասխանել մեր հարցերին: Ներկայացնելով մեր ծրագրի հիմնախնդիրները՝ դիտորդական խումբը փորձեց նորից տեղեկանալ մետադոնային ծրագրով բուժում ստացող հիվանդերի քանակի և ծրագրում ընդգրկվելու ու բուժում ստանալու մասին: Պատասխանը հնչեց շատ կոպիտ. "ցանկացած հիվանդ կարող է օգտվել այդ ծրագրից, եթե կա համապատասխան ցուցում, և այս քանակն անսահմանափակ է": Հասկանալով, որ կլինիկայի ղեկավարը խուսափում է որևէ

ինֆորմացիա տալուց և ավելին, բավականին կոպիտ և ագրեսիվ ձևով փորձում է ստեղծել կոնֆլիկտային իրավիճակ, դիտորդական խումբը դուրս եկավ կլինիկայից:

4. ՀՀ ԱՆ “Սևանի հոգեբուժական հիվանդանոց” ՓԲԸ

- **Ընդհանուր տեղեկատվություն**

Սևանի կլինիկան շահագործման է հանձնվել 1947-1948թթ.-ին և սկզբնական շրջանում հանդիսացել է գերմանացի ռազմագերիների ճամբար: Այս կլինիկան սպասարկում է հանրապետության ողջ տարածքը: 1996թ.-ից հոգեբուժական կլինիկան ղեկավարում է Գագիկ Կարապետյանը: Կլինիկան բաղկացած է 9 բաժանմունքներից, որոնցից 4-ը նախատեսված է կանանց համար, 5-ը՝ տղամարդկանց: Կլինիկան զբաղեցնում է շուրջ 4 հեկտար տարածք: Հոգեբուժարանում իրականացնում են նաև դատական հարկադիր բուժում՝ ընդհանուր հիմունքներով:

Կլինիկան նախատեսված է 420 մահճակալների համար, իսկ դիտորդական խմբի այցելության պահին՝ 25.11.2010թ., այնտեղ գտնվում էին 413 հիվանդներ: Յուրաքանչյուր բաժանմունքում կա 40-55 մահճակալ: Կլինիկայում նախատեսված չէ նաև վճարովի բաժանմունք:

Կլինիկայում բուժանձնակազմի քանակը բավականին քիչ է և ամբողջ հիվանդանոցում աշխատում է ընդհամենը 5 բժիշկ, 8 ավագ քույր, 8 տնտեսուհի քույր: Կլինիկայում աշխատում է նաև հոգեբան, թերապևտ, ատամնաբույժ, սոնոգրաֆիստ, որոնք կլինիկա գալիս են համապատասխան գրաֆիկով կամ անհրաժեշտության դեպքում: Վերջիններս ունեն իրենց աշխատասենյակները, որոնք գտնվում են առանձին մասնաշենքում:

Կլինիկայում, բացի ՀՀ քաղաքացիներից, իրենց բուժումն են ստանում նաև 4-5 հիվանդ ԼՂՀ-ից:

Սույն կլինիկայի բժիշկների խոսքերով՝ կլինիկայում ինքնասպանությունների կամ սպանությունների դեպքեր չեն արձանագրվել:

Հիվանդանոցը ֆինանսավորում ստանում է պետությունից, սակայն, ինչպես նշում են աշխատակիցները, ժամանակ առ ժամանակ հովանավորներ են գտնվում, որոնք հոգում են հիվանդանոցի կոնկրետ կարիքները: Սակայն դիտորդական խմբի այցելության ժամանակ միայն երկու բաժանմունք կար, որ լիովին վերանորոգված էր, իսկ մնացած բաժանմունքները, ինչպես նաև որոշ մասնաշենքեր գտնվում էին բավականին հին վիճակում և կարիք ունեին կապիտալ վերանորոգման:

Աշխատակիցները նշում են, որ կլինիկայում խնդիրներ չեն առաջանում ջրամատակարարման հետ կապված, ջուրը մշտական է. դա ապահովվում է նրա հաշվին, որ կլինիկայի բոլոր բաժանմունքներն ու մնացած մասնաշենքերը միհարկանի կառույցներ են, և ջուրն ինքնահոս հասնում է բաժանմունքներ:

Հիմնարկում ջեռուցումը մշտական է և դիտորդական խմբի այցելության ժամանակ, որը իրականացվել է 25.11.2010թ.-ին, այն ջեռուցվում էր: Սակայն, ինչպես նկատեցինք, աշխատանքային արհեստանոցում ջեռուցում չկար և բավականին սառն էր այնտեղ, որը և կլինիկայի ղեկավարի տեղակալի խոսքերով պատճառ է անսարքությունների, որոնք և աշխատում են վերացնել:

Բժիշկները նշում են նաև, որ էկեկտրամատակարարման հետ կապված նույնպես խնդիրներ չկան. Կլինիկան ունի էլեկտրականության երկու գիծ և գեներատոր, սակայն վերջինս, անխափան էլեկտրականության մատակարարման հետևանքով, դեռևս չի օգտագործվել: Ջրահեռացման հետ կապված խնդիրներ ևս կլինիկան դեռ չի ունեցել:

Կլինիկայի աշխատակիցները նույնպես ունեն աշխատավարձի հետ կապված խնդիրներ, և ինչպես նշում են, այն բավականին ցածր է իրենց կատարած աշխատանքի համեմատ:

Կլինիկան գտնվում է Սևան քաղաքից որոշակի հեռավորության վրա և աշխատակազմի մեծ մասը բնակվում է հենց այդ քաղաքում և մեր այն հարցին, թե ինչպես են աշխատանքի ժամանում, պատասխանեցին, որ գոյություն ունի ծառայողական ավտոբուս, որը և ամեն օր նրանց բերում է աշխատանքի:

Ինչպես նշում են կլինիկայի աշխատակիցները՝ կլինիկայում թմրամոլներ չեն բուժվում:

Շատ լուրջ խնդիր է հանդիսանում, այսպես կոչված “խնամքի հիվանդներին” անաշխատունակության հետևանքով Սոցապ նախարարության կողմից նշանակված թոշակը ստանալու խնդիրը: Մի կողմից հիվանդների հարազատները տեղավորում են իրենց հիվանդներին հոգեբուժական հիվանդանոցներ, և այդ հիվանդների ողջ խնամքի ու հսկողության բեռն ընկնում է հիվանդանոցի աշխատակիցների ուսերին, մյուս կողմից այդ նույն հարազատները ստանում են իրենց հիվանդի հասանելիք թոշակը, և շատ դեպքերում որևէ գումար չի հասնում այդ նույն հիվանդին՝ նույնիսկ տարրական ծխախոտի և այլ անհրաժեշտ առարկաների ձեռքբերման հոգսն ընկնում է կլինիկայի աշխատակիցների ուսերին: Դիտորդական խումբն ականատես եղավ, թե ինչպես գլխավոր բժշկի տեղակալն իր անձնական ծխախոտից բաժանում է հիվանդներին: Ըստ բուժաշխատողների՝ այդ ֆինանսական խնդրի վրա կառավարությունը պետք է շատ լուրջ ուշադրություն դարձնի և այն կարգավորի օրենքներով:

Շատ ավելի լուրջ խնդիր է հիվանդների ամբուլատոր բուժումը և արտահիվանդանոցային հսկողության խնդիրները: Սուր Հոգեկան խանգարումներով հիվանդները, ընդունվելով ստացիոնար բուժման, ստանում են լիարժեք համապատասխան բուժում, վիճակը բարելավվում է, որից հետո նրանք դուրս են գրվում և պետք է գտնվեն ամբուլատոր հսկողության տակ: սակայն ամբուլատոր բաժանմունքների հեռու գտնվելու և այլ պատճառներով հիվանդները հնարավորություն չեն ունենում այցելել ամբուլատորիաներ, ստանալ համապատասխան դեղամիջոցներ, նրանց վիճակը նորից սրվում է և նորից տեղափոխվում են ստացիոնար բուժման: Վերը նշվածի վառ օրինակն է 2010թ.-ի նոյեմբերի 8-ին Սևան քաղաքում տեղի ունեցած սպանությունները, երբ ՀՀ ԱՆ “Սևանի հոգեբուժական հիվանդանոց” ՓԲԸ-ում ժամանակին ստացիոնար բուժում ստացած և ըստ բժիշկների՝ բուժման արդյունքում բավականին դրական արդյունք ստացած և բարվոք վիճակում դուրս գրված Արման Թորոսյանը, արտահիվանդանոցային հսկողությունից դուրս մնալով և ժամանակին դեղորայք չընդունելու հետևանքով, հիվանդության հերթական սրացման ժամանակ սպանեց իր ծնողներին:

- **Բաժանմունքների ընդհանուր վիճակը**

Ինչպես վերը արդեն նշվել է, բաժանմունքները նախատեսված են 40-55 մահճակալի համար, և դիտորդական խմբի այցելության ժամանակ կլինիկայի բաժանմունքներում ծանրաբեռնվածություն չկար: Յուրաքանչյուր բաժանմունք բաղկացած էր շուրջ 10 հիվանդասենյակներից՝ ամեն մեկը 25-35քմ մակերեսով և որոնցում կային 3-5 մահճակալներ: Առաջին և երկրորդ բաժանմունքերը լիովին վերանորոգված էին, մնացած բաժանմունքները գտնվում էին բավարար վիճակում. բավականին հին վերանորոգում էր, տեղ-տեղ պատերը հնամաշ էին: Առաջին և երկրորդ բաժանմունքներում հիվանդասենյակները առանց դռների էին, բավականին լուսավոր: Սենյակներում հատակը փայտե էր, իսկ միջանցքում՝ սալիկապատ, ընդ որում՝ գրեթե բոլոր սենյակներում հատակին գորգեր էին փռված, իսկ պատերը ներկված էին բաց մոխրագույն գույնով: Այս բաժանմունքներում պատուհանները մետաղապլաստից էին և առանց ճաղավանդակների: Սակայն ինչ վերաբերում է մյուս բաժանմունքներին, ապա այստեղ միջանցքների հատակը բետոնապատ էր, սենյակներում հատակը փայտեպատ, սակայն պատերը հնամաշ էին, տեղ-տեղ՝ վնասված:

Բաժանմունքում մեկ սենյակ նախատեսված էր նաև որպես աշխատանքային արհեստանոց հիվանդների համար: Դիտորդական խումբն ականատես եղավ նաև այն փաստին, որ հիվանդներն իրենք էին լվացքատնից տեղափոխում արդեն իսկ լվացված հագուստը:

Բաժանմունքներում չկային նաև ազդանշանային համակարգեր, որոնց օգնությամբ հիվանդները կարող են կանչել սանիտարներին. այս փաստը բժիշկները մեկնաբանում են այն բանով, որ դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ ամեն բաժանմունքում հերթապահում է մեկ սանիտար, որը և շրջում է բաժանմունքով և հարկ եղած դեպքում մոտենում հիվանդին:

- **Սանիտարահիգիենիկ վիճակը**

Այս առումով Սևանի կլինիկայում իրենց սանիտարահիգիենիկ լավ վիճակով առանձնանում էին առաջին և երկրորդ մասնաշենքերը: Քանի որ այստեղ կատարվել է կապիտալ վերանորոգում, ապա այս բաժանմունքներում բավականին մաքուր էր:

Սանհանգույցը գտնվում էր բավականին լավ վիճակում: Այն բաղկացած էր երեքական ասիական տիպի զուգարաններից, որոնք առանձնացված էին միջնապատով և երեքական լվացարաններից: Մյուս բաժանմունքներում զուգարանները գտնվում էին ոչ այնքան մաքուր և սանիտարահիգիենիկ վիճակում: Ողջ կլինիկայի համար լոգարանը մեկն էր, որի համար նախատեսված էր առանձին մասնաշենք: Լոգարանը բաղկացած էր երկու հատվածից. առաջինում հիվանդները հանդերձափոխվում էին, ընդ որում՝ այստեղ չկային առանձնացված սենյակներ, այլ երկու նստարաններ էին, և հիվանդները իրենց հագուստը թողնում էին հենց այդտեղ: Մյուս հատվածում հիվանդները լողանում են, սակայն որը նույնպես ընդհանուր է՝ բաղկացած 6 ցնցուղից և որոնք ո՛չ առանձնացված են միջնապատով և ո՛չ էլ ունեն ինքնուրույն կառավարման հնարավորություն, այսինքն՝ ջրի տաքությունը կառավարվում է դրսից: Լոգարանը սալիկապատ էր, սակայն առաստաղը բավականին հնամաշ էր և վերանորոգման կարիք ուներ: Լոգանքը կատարվում է ամեն 8 օրը մեկ:

Հարկ է նշել նաև, որ դիտորդական խումբը չկարողացավ այցելել լվացքատուն, որը և կլինիկայի պետի տեղակալի խոսքերով անհրաժեշտ չէ, քանի որ “այնտեղ ամբողջությամբ ջուր է և հարկ չկա այնտեղ մտնել”:

Հարկ է նշել նաև, որ շատ հիվանդներ կրում էին բավականին հնամաշ հագուստ, անգամ դիտորդական խումբը ականատես եղավ, որ հիվանդներից մեկի կոշիկը ամբողջովին պատռված է և նա դժվարությամբ կարողանում էր շարժվել:

Հիվանդների սպիտակեղենը շաբաթը մեկ անգամ փոխվում է:

Կլինիկայում աշխատում է նաև վարսավիր, սափրիչ:

- **Սնունդը**

Այս կլինիկայում սնունդը պատրաստվում է առանձին մասնաշենքում տեղակայված ճաշարանում և ապա մատակարարվում բաժանմունքներ: Ճաշարանը բաղկացած էր երկու մասից՝ առաջինում պատրաստվում էր ճաշը, մյուսում՝ պահվում որոշ սննդամթերք: Ճաշարանի երկու մասերն ել գտնվում էին շատ վատ վիճակում, վերանորոգում չկար, պատերը, առաստաղը լիովին քայքայված էին, գետինը բետոնապատ էր, իսկ դիտորդական խմբի այցելության պահին ճաշարանի այն

հատվածում, որտեղ կերակուր էր պատրաստվում, պատուհանների բաց լինելու հետևանքով՝ մի քանի ճնճղուկներ էին ներթափանցել ճաշարան: Սնունդի պատրաստման համար նախատեսված էին 5 էլեկտրական կաթսաներ:

Պատրաստի սնունդը այնուհետև տեղափոխվում էր բաժանմունքներ, որտեղ և սկզբում տեղավորվում է խոհանոցներում, այնուհետև մատուցվում բաժանմունքի ճաշարան, որոնք և բաղկացած էին 10-ական սեղաններից՝ 4-ական աթոռներով: Ինչ վերաբերում է բուն խոհանոցներին, ապա դրանք գտնվում էին բարվոք վիճակում:

- **Տեսակցություններ և հեռախոսակապ**

Տեսակցության սենյակը ողջ կլինիկայի համար մեկն էր, որը տեղակայված էր առանձին մասնաշենքում: Բուն տեսակցության բաժինը բաղկացած էր երկու սենյակներից՝ երեքական սեղաններով՝ իրենց աթոռներով: Սենյակները բավականին կոկիկ էին, լավ կահավորված և լուսավոր: Մյուս սենյակը նախատեսված էր աշխատակիցների համար, որտեղ և պահվում էին գրանցամատյանները, որտեղ նշվում էր յուրաքանչյուր տեղեկատվություն՝ կապված տեսակցության և հեռախոսազանգերի հետ: Հենց այս սենյակում էլ պահվում էր հեռախոսը, որից էլ կարող են օգտվել հիվանդները, որոնք հիվանդանոց ընդունվելուց հետո իրավունք ունեն կատարել մեկ անվճար հեռախոսազանգ, իսկ այնուհետև՝ բոլոր զանգերը իրենց հաշվին, կամ շատ մեծ անհրաժեշտության դեպքում՝ աշխատակիցների թույլտվությամբ կարող են կատարվել զանգեր առանց վճարի:

- **Զբոսանք և զբաղվածություն**

Ինչպես վերը նշվեց՝ հիվանդների համար նախատեսված էր առանձին աշխատանքային արհեստանոց, որտեղ հիվանդները զբաղվում էին ասեղնագործությամբ, նկարչությամբ, սովորում էին կոշկակարություն, երգարվեստ և այլն: Սակայն դիտորդական խումբն այցելության ժամանակ ականատես եղավ այն փաստին, որ այդ արհեստանոցը չի ջեռուցվում և բավականին սառը վիճակում է գտնվում, որը և պատճառաբանվում էր ջեռուցման համակարգի վերանորոգմամբ:

Բոլոր բաժանմունքներում հիվանդների զբոսանքը իրականացվում է առանց սահմանված ժամանակացույցի՝ հենց բաժանմունքի բակում: Որոշ հիվանդներ ազատորեն շրջում են նաև կլինիկայի վարչական տարածքում:

ՀՀ ԱՆ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

“Հելսինկյան Ասոցիացիա” իրավապաշտպան կազմակերպության մոնիտորինգային խումբը սեպտեմբեր ամսից մինչև դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում այցելություններ է կատարել Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության հոգեբուժական բժշկական կենտրոններ ու հիվանդանոցներ և արձանագրել է, որ հոգեբուժական օգնության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում առավել հաճախ խախտվում են հետևյալ կետերը.

Հոդված 5-ի 2-րդ և 3-րդ կետերը, որոնք, մասնավորապես, վերաբերում են հոգեկան խանգարումներով տառապող անձանց անհրաժեշտ բազմակողմանի և մատչելի բժշկական օգնության, խնամքի ու օգնության այլ ձևերի ապահովմանը, նրանց նկատմամբ հասարակության կողմից համապատասխան վերաբերմունքի, առաջին հերթին՝ հանդուրժողականության, բարյացակամության ձևավորմանը:

Հոդված 6-ի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերը, որոնք, մասնավորապես, վերաբերում են՝ նամակագրական կապ հաստատելուն, հեռախոսակապից օգտվելուն, առաջին անհրաժեշտության իրեր ու պարագաներ ունենալուն և ձեռք բերելուն, անձնական հագուստից օգտվելուն, թերթերի և լրագրերի միջոցով հաղորդակցվելուն:

Հոդված 7-ի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ ենթակետերը, որոնք, մասնավորապես, վերաբերում են՝ անհետաձգելի հոգեբուժական օգնությանը, հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում խորհրդատվական, ախտորոշման, բուժման ու սոցիալական վերականգնման հետ կապված օգնությանը, հոգեկան խանգարումներով տառապող անձանց սոցիալ-կենցաղային վիճակին

օժանդակությանը, խնամակալությանը, հոգեկան խանգարումներով տառապող հաշմանդամների սոցիալ-կենցաղային վիճակին օժանդակությանը, ուսուցմանը և խնամքին:

Հոդված 8-ի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, կետերը, ըստ որոնց հոգեկան խանգարումներով տառապող անձանց հոգեբուժական օգնությունը և սոցիալական պաշտպանությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստեղծում է հիվանդանոցային և արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն իրականացնող կազմակերպություններ ծերունիների, մեծահասակների, դեռահասների և մանուկների համար, կազմակերպում է հոգեկան խանգարումներով տառապող անչափահասների հանրակրթական և մասնագիտական հատուկ ուսուցում, ստեղծում է հոգեկան խանգարումներով տառապող անձանց բուժական-արտադրական ուղղվածության կազմակերպություններ, ներառյալ՝ հաշմանդամների, աշխատանքային բուժման, նոր մասնագիտությունների տիրապետման և զբաղվածության ապահովման համար, միջոցներ է ձեռնարկում աշխատանքի հեշտացված պայմաններով աշխատատեղեր կամ հատուկ արտադրամասեր ստեղծելու ուղղությամբ, ստեղծում է կացարաններ սոցիալական կապերը կորցրած հոգեկան խանգարումներով տառապող անձանց համար:

Հոդված 9-ի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերը, որոնք վերաբերում են արտահիվանդանոցային հոգեբուժական օգնությանը:

Հոդված 12-ը, ըստ որի հոգեբուժական օգնություն իրականացնելիս հոգեբույժն անկախ է իր կայացրած որոշումներում և ղեկավարվում է բժշկական պարտքի զգացումով ու սույն օրենքով:

Հոդված 25-ը, որի համաձայն սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Խախտվում են հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների իրականացման ընթացակարգի հոդված 80-ի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերը, ըստ որոնց՝ հոգեբուժական կազմակերպություններն իրենց տարածքում տեղադրում են առնվազն մեկ տաքսաֆոն հոգեկան խանգարումներով տառապող անձանց համար հասանելի վայրում: Հեռախոսային խոսակցության վճարումները, գործող սակագներին համապատասխան, կատարվում են տվյալ անձի

հաշվին: Հոգեբուժական հաստատության ադմինիստրացիան հոգեկան հիվանդների համար հասանելի վայրում պետք է փակցնի հեռախոսային խոսակցությունների սակագները: Հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի կատարելու առնվազն մեկ անվճար հեռախոսազանգ հանրապետության տարածքում: Հոգեբուժական կազմակերպություններն իրենց տարածքում տեղադրում են առնվազն մեկ փոստարկղ: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան խանգարումներով տառապող անձին պետք է հասանելի լինի փոստարկղից օգտվելը: Հոգեբուժական կազմակերպության ադմինիստրացիան հոգեկան հիվանդների համար հասանելի վայրում պետք է փակցնի փոստային ծառայությունների սակագները: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձն իրավունք ունի իր միջոցների հաշվին նամակագրական(փոստային) կապ հաստատելու ցանկացած անձի հետ: Հոգեբուժական կազմակերպությունն ապահովում է նամակագրական կապի միջոցով հաղորդակցվելու հասանելիությունը հոգեկան խանգարումներով տառապող անձի համար: Հոգեբուժական կազմակերպության ադմինիստրացիան ապահովում է հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձի գրած նամակների փոխանցումը փոստային ծառայությանը և փոստային առաքման անդորրագրի հանձնումը հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձին, ինչպես նաև փոստով ստացված, չբացված նամակների հանձնումը հոգեկան խանգարումներով տառապող անձին:

Հոդված 80-ի 3-րդ կետը, ըստ որի՝ յուրաքանչյուր հոգեբուժական կազմակերպությունում պետք է առկա լինի թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն իրականացնող կազմակերպության բաժանորդագրության անվանացանկ, որը պետք է հասանելի լինի հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան խանգարումներով տառապող անձանց: Հոգեբուժական հաստատության ադմինիստրացիան պարտավոր է ապահովել հիվանդի կողմից թերթերի բաժանորդագրությունը և բաժանորդագրված թերթերի և ամսագրերի հանձնումը հիվանդին:

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Սույն զեկույցը կազմվել է “Հելսինկյան Ասոցիացիա” իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից ՀՀ դատարաններում իրականացված մոնիտորինգի արդյունքում: Նշված մոնիտորինգը անց է կացվել 2009թ. սեպտեմբերից 2010թ. դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում:
ՀՀ դատարաններում “Հելսինկյան ասոցիացիա” իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից դիտարկումներ են կատարվել, մասնավորապես, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ, Մալաթիա-Սեբաստիա, Աջափնյակ և Դավիթաշեն, Շենգավիթ, Էրեբունի և Նուբարաշեն, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարաններում, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանում, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում, ինչպես նաև ՀՀ Վերաքննիչ դատարանում և ՀՀ Վճռաբեկ դատարանում: Ընդհանուր առմամբ “Հելսինկյան ասոցիացիա” իրավապաշտպան հասարակական կազմակերպության մոնիտորինգային խմբի կողմից դիտարկման են ենթարկվել ավելի քան 130 նիստեր:
Արդար դատավարության և արդյունավետ պաշտպանական միջոցների իրավունքի վերաբերյալ մոնիտորինգի արդյունքում հստակ կարելի է նշել, որ դիտարկված դատաքննությունների ընթացքում ՀՀ դատարանները շարունակում են կոպտորեն և բացահայտ խախտել մի շարք ներպետական և միջազգային նորմեր, մասնավորապես՝

1. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը.

”Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:
Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:”

17-րդ հոդվածը.

”Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի:”

18-րդ հոդվածը.

”Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:
Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:
Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:"

21-րդ հոդվածը.

"Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:"

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված սկզբունքները, այն են՝

7-րդ հոդվածով սահմանված օրինականության սկզբունքը.

"1. Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները:
2. Ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով:"

9-րդ հոդվածով սահմանված Անձի, իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը.

"1. Անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը պարտադիր է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր մարմինների և անձանց համար:
2. Դատարանը թույլատրում է անձանց իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակում: Նրանց նկատմամբ դատավարական

հարկադրանքի միջոցներ կիրառվում են միայն այն դեպքում, երբ այդպիսի որոշման անհրաժեշտությունը հիմնավորված է պատշաճ իրավական ընթացակարգով:
3. Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պահվի ստորացուցիչ պայմաններում:....."

11-րդ հոդվածով սահմանված անձի անձեռնմխելիությունը.

"1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:
2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:.....
7. Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով: ....
9. Քրեական դատավարության ընթացքում արգելվում է մարդու կյանքին և առողջությանը, շրջակա միջավայրին վտանգ ներկայացնող միջոցներ կիրառելը:"

17-րդ հոդվածով սահմանված գործի արդարացի քննություն.

"1. Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:
2. Դատավորը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը չեն կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե նրանք ուղղակի կամ անուղղակի շահագրգռված են գործի ելքով:
3. Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:
4. Կասկածյալի, մեղադրյալի և նրանց պաշտպանի հայտարարություններն իրենց անմեղության, կասկածյալին կամ մեղադրյալին արդարացնող, իրենց պատասխանատվությունը մեղմացնող ապացույցների առկայության մասին, ինչպես

նաև քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը:”

18 -րդ հոդվածով սահմանված անմեղության կանխավարկածը.

”1. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:
2. Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:
3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:
4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:…”

23-րդ հոդվածով սահմանված մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում.

”1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:…
3. Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:
4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ: Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար:
5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն

ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ:
6. Քրեական դատավարության ընթացքում կողմերն իրենց դիրքորոշումը, այն պաշտպանելու եղանակները և միջոցներն օրենքի շրջանակներում ընտրում են ինքնուրույն՝ անկախ դատարանից, այլ մարմիններից և անձանցից: …
7. Դատարանն ապահովում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը: ….
8. Դատարանում քրեական գործի քննությանը կողմերի մասնակցությունը պարտադիր է: Դատարանում քրեական գործի քննությանը մեղադրանքի կողմը ներկայացնում է մեղադրողը:”]

3.Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3 և 6 հոդվածները:

Մուտքը դատարանի դահլիճ
Համաձայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի.

”1. Քրեական գործերի դատական քննությունը բոլոր դատարաններում դռնբաց է, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերի:

1. Դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել պետական և ծառայողական գաղտնիքների հետ առնչվող հանցագործությունների գործերով:.....”

Օրենսդիրը նախատեսել է նաև այն բոլոր դեպքերը, երբ թույլատրվում է անցկացնել դռնփակ դատական քննություն: Այն կարող է իրականացվել դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդությամբ բացառիկ դեպքերում, եթե դա չի վնասի արդարադատության իրականացմանը կամ չի հանգեցնի դատավարության հրապարակայնության սկզբունքի չարդարացված սահմանափակմանը:
Դատարանների դատավճիռները և այլ վերջնական որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն: Դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանի որոշման հիման վրա կարող են հրապարակայնորեն հայտարարվել դատավճռի կամ այլ վերջնական որոշման միայն ներածական և եզրափակիչ մասերը, չեն հրապարակվում այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դռնփակ դատական քննություն անցկացնելու համար:

Նույնը նախատեսում է նաև ՀՀ Դատական օրենսգիրքը.
“1. Հայաստանի Հանրապետության դատարաններում գործերի քննությունը դռնբաց է:
2. Դատական քննությունը կամ դրա մի մասն անցկացվում է դռնփակ՝ միայն դատարանի որոշմամբ…”

Եվ չնայած այն հանգամանքի, որ օրենքը ուղակի և բառացի նշում է, որ քննությունը

բաց է (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի) ՀՀ դատարաններում շարունակվում են արձանագրվել դեպքեր, երբ դատարանի կարգադրիչները խոչընդոտում են թե՛ շարքային քաղաքացիների, թե՛ դիտորդի մուտքը դատարանի դահլիճ:

16.04.2010 թ. Մալաթիա – Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում((դատավոր Տիգրան Պետրոսյանի նախագահությամբ) մեղադրյալ Քաջիկ Դավթյան՝ մեղադրվում է ՀՀ Քրեական օրենսգրքի 268 հոդվածի 2-րդ մասով, պաշտպան Արամ Հովհաննիսյան, մեղադրող Սեդա Սարգսյան) ընթացող նիստի ավարտից հետո, կարգադրիչները, մոտենալով Հելսինկյան ասոցիացիայի դիտորդին, իրենց վրդովմունքն են հայտնել այն փաստի կապակցությամբ, թե ինչու է վերջինս առանց կարգադրիչներին զգուշացնելու մտել դատարանի դահլիճ: Դիտորդի հարցին, թե ինչու՞ ինքը բաց նիստին ներկա գտնվելու համար պետք է որևէ մեկին զգուշացնի, կարգադրիչները պատասխանել են, որ նման միջադեպերի համար "նրանց վրա խոսակցություն է լինելու":

Մալաթիա–Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում կարգադրիչները, իմանալով որ "Հելսինկյան ասոցիացիա" իրավապաշտպան ՀԿ-ի դիտորդը դիտարկում է կատարելու դատարանի՝ նախագահ Պետրոսյանի կողմից նախագահվող նիստը, արգելել են մուտք գործել դատարանի դահլիճ՝ պատճառաբանելով , որ չեն թողնի ներս մինչև դատավորից չստանան թույլտվություն: Դիտորդի պահանջին տրամադրել ներքին հեռախոս՝ դատավորի կամ նրա օգնականի հետ խոսելու, նշված խնդիրը հարթելու համար, կարգադրիչները հայտնել են, որ ներքին հեռախոսը գտնվում է իրենց համար նախատեսված սենյակում, և թույլ չեն տվել զանգահարել: Որոշ ժամանակ անց կարգադրիչներից մեկը, վերադառնալով, հայտնել է, որ ստացվել է դատավորի թույլտվությունը, և դիտորդը կարող է մասնակցել նիստին:

Բոլոր դատարանների մուտքերի մոտ փակցված են հայտարարություններ՝ համաձայն որոնց արգելվում է մուտքը դատարան մարզական հագուստով: Չափազանց կարևոր երևույթին են անդրադարձել այս նախաձեռնությամբ, քանի որ վստահաբար կարելի է ասել, որ Հայաստանում դեռ բացակայում է նման վայրեր այցելության համար համապատասխան հագուստ կրելու կուլտուրան, սակայն հագուստի մարզական լինել-չլինելը նույնպես թողնված է կարգադրիչների հայեցողությանը, ինչը ստեղծում է ավելորդ լարվածություն և մի այնպիսի իրավիճակ, երբ կարգադրիչը մի դեպքում կարող է ներս չթողնել ջինսերով և սպորտային ազատ ոճի ոտնամաններով, սակայն մեկ այլ դեպքում դատարանի դահլիճ անարգել ներս թողնել հենց սպորտային համազգեստով և հողաթափերով:

31 .08. 2010թ. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի մուտքի մոտ անցկացվող զննության ժամանակ անարգել դատարանի շենք են մուտք գործել մարզական հագուստով և հողաթափերով անձինք:

Լինում են դեպքեր, երբ կարգադրիչների գործողությունները հասնում են աբսուրդի: Եվ այս դեպքերում ցավալին այն չէ, որ շարքային կարգադրիչը կատարում է օրենքով

արգելված և ոչինչով չհիմնավորված գործողություններ , ցավալին այն է, որ վերջիններիս վերադասները ոչ միայն չեն դադարեցնում նման գործողությունները, այլ ընդհակառակը փորձում են արդարացնել նրանց ապօրինի գործողությունները:

31.08.2010թ. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում նախորդ ներկայացրած դեպքից ընդամենը մի քանի բոպե անց, նույն դատական կարգադրիչները, պարզելով, որ "Խաչիկ Հովսեփյանի, Ավետիք Գևորգյանի, և այլոց թիվ 66100510 քրեական գործով" դատական նիստին մասնակցելու համար ներկայացել են դիտորդներ(Հելսինկյան ասոցիացիա), ճշտեցին վերջիններիս անուն ազգանունները և գրանցեցին դատակոչվածների ցուցակում:

Առանց որևէ բացատրության Վերաքննիչ դատարանի կարգադրիչները առգրավել են Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանի տան բանալիները: Ցանկացած փորձ՝ հասկանալու, թե որն է ժամանակավոր առգրավման պատճառը, հանդիպել է անորոշ և լղոզված պատասխանների:

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում((նստավայր Էջմիածին) դատավոր Խալաթյան, մեղադրյալներ Ա. Մշեցյան և Ս. Վարդանյան, մեղադրող Ա. Կարապետյան, պաշտպաններ Վ.Առաքելյան և Ա. Պապիկյան) դատական նիստերից մեկի ժամանակ նիստի քարտուղարը հայտարարեց դատաքննությանը ներկայացած մասնակիցների անունները և միևնույն ցանկով հայտնեց, որ նիստին ներկա են նաև Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Մ. Դանիելյանը և մոնիտոր Ա.Վեզիրյանը: Հավանաբար, ըստ դատարանի՝ Հելսինկյան Ասոցիացիայի նախագահ Մ. Դանիելյանը և մոնիտոր Ա.Վեզիրյանը ևս հանդիսանում էին դատաքննության մասնակիցներ:

Դատարանի դահլիճ մուտք գործելու ևս մեկ համատարած խախտումներից հարկ է նշել նաև այն, որ առանց որևէ բացատրության գրեթե միշտ ստուգվում են փաստաբանի անձը հաստատող փաստաթղթերը, սակայն նույնը երբեք չի իրականացվում քննիչների կամ դատախազների նկատմամբ:

Անբացատրելի խիստ խտրական վերաբերմունք է ձևավորված հատկապես ՀՀ Վերաքննիչ դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կարգադրիչների կողմից: ՀՀ Վերաքննիչ դատարանում ևս դատախազները անարգել(առանց անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու և առանց անձնական իրերի զննության ենթարկվելու) անցնում են դատարանի դահլիճ: Հարկ է նշել, որ դատախազները հիմնականում ՀՀ Վերաքննիչ դատարան են մուտք գործում ելքի համար նախատեսված դռնից և կարգադրիչներից որևէ մեկը չի փորձում կանգնեցնել նրանց: Առավել անընդունելի է այն հանգամանքը, որ անգամ անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելուց հետո հանդիպել են դեպքեր, երբ փաստաբանին պարտադրել են բացել պայուսակները և անց են կացրել զննություն: Վերջիններիցս, առանց որևէ հիմնավորման, ժամանակավորապես առգրավում են անձնական իրեր, համապատասխան գործարանային փաթեթավորմամբ դեղամիջոցներ, ամռան շոգ օրերին իրենց հետ բերված փակ շշերով ջուրը և այլն:

Նշվածը, անվտանգության ապահովման նկատառումներով, կարելի էր թերևս ողջունել, եթե նույն վերաբերմունքը ցուցաբերվեր նաև դատախազների և քննիչների նկատմամբ:

29.10. 2010թ. ՀՀ Վճռաբեկ դատարանի կարգադրիչները փաստաբաններ Արամազդ Կիվիրյանին և Դիանա Գրիգորյանին հայտնել են , որ պետք է խուզարկեն նրանց և վերջիններիս իրերը: Փաստաբանները հրաժարվել են, քանի որ կարգադրիչների մոտ բացակայել է խուզարկություն իրականացնելու համար անհրաժեշտ համապատասխան որոշումը: Կարգադրիչները, սակայն, շարունակել են պնդել իրենց ապօրինի պահանջը՝ այս անգամ հայտարարելով են, թե զննություն են իրականացնելու: Արամազդ Կիվիրյանը նշել է, որ զննություն անցկացնելու համար անհրաժեշտ են հիմնավոր կասկածեր, որ անձի մոտ կարող են լինել անթույլատրելի առարկաներ: Արամազդ Կիվիրյանը, մուտքի մոտ թողելով իր պայուսակը, փորձել է բարձրանալ նիստերի դահլիճ, սակայն նրան այս անգամ էլ արգելել են մտնել դահլիճ, անգամ սպառնացել են ուժ կիրառել, եթե նա հրաժարվի զննությունից: Կարգադրիչները նաև ստել են, թե իրենց գործողությունները համաձայնեցրել են դատավորի հետ, և վերջինս կսպասի մինչև իրենք կատարեն զննությունը: Սակայն դատավորը ավարտել է նիստն ու հեռացել:

Ինչպես NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում նշեց Արամազդ Կիվիրյանը, ինքը չի բացառում, որ կարգադրիչների գործողություններում կոնկրետ միտում է եղել խափանել իրենց մասնակցությունը դատական նիստին:[2]

Մեկ այլ՝ կրկին համատարած, խախտումներից չենք կարող չանդրադառնալ այն փաստին, որ գրեթե բոլոր դատարաններում դատական նիստը սկսվելուց առաջ դատախազները այցելում են դատավորների առանձնասենյակներ, որոնք, ի դեպ, գտնվում են սահմանափակված գոտում, ուր ***"մուտքը կողմնակի անձանց համար խստիվ արգելված է"***: Դրան հակառակ փաստաբանի ցանկացած փորձ՝ հանդիպել դատավորին, անմիջապես կանխվում է կարգադրիչների կողմից: Այսինքն՝ անգամ մինչև բուն դատական նիստի սկիզբն արդեն իսկ համատարած խախտվում է կողմերի հավասարության սկզբունքը:

31 .08. 2010թ. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում "Խաչիկ Հովսեփյանի, Ավետիք Գևորգյանի և այլոց թիվ 66100510 քրեական գործով" դատական նիստին ներկայացած փաստաբանից պահանջեցին ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, իսկ դատախազ Յու. Բաղյանը մուտք գործեց դատարանի շենք անարգել՝ առանց անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու: Հարկ է նշել, որ նախքան դատական նիստի սկիզբը դատախազ Յու. Բաղյանը նույնպես անարգել անցավ դատավոր Մակյանի առանձնասենյակ և գտնվում էր այնտեղ մինչև նիստի սկսվելը: Նույնը կրկնվում էր բոլոր հաջորդող նիստերից առաջ:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում "Խաչիկ Հովսեփյանի, Ավետիք Գևորգյանի, և այլոց թիվ 66100510 քրեական գործով" հերթական նիստից առաջ կարգադրիչները անձնական զննություն իրականացնելուց հետո առանց որևէ

[2] /http://news.am/arm/news/36321.html/

բացատրության ստիպում էին նիստի ներկայացած հարազատներին դատարանի առաջին հարկում սեղանի վրա թողնել պայուսակները, ապա բարձրանալ նիստերի դահլիճ: Միայն Հելսինկյան ասոցիացիայի աշխատակիցների միջամտությունից հետո հնարավոր եղավ հարթել խնդիրը, և մարդիկ բարձրացան դահիճ պայուսակներով:

Դատական նիստի սկիզբը

Մեր կողմից մոնիտորինգի ենթարկված գրեթե բոլոր նիստերը սկսել են միջինը 15-40 րոպե ուշացումով: Միայն բացառիկ դեպքում դատարանը բացատրություն է տվել, թե ինչն է եղել ուշացման պատճառը: Դատարանը անդրադառնում է դատական նիստի ուշացման պատճառին, եթե պատճառը եղել է պաշտպանական կողմը:
Հիմնականում, սակայն, դատարանները ընդհանրապես չեն անդրադառնում ուշացման պատճառներին:
20.01.2010թ.Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սուրիկ Կոստանյանի նախագահությամբ(ամբաստանյալ- Արման Բեսարյան, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածով, պաշտպան-Գիվի Հովհաննիսյան) նիստը սկսեց 45 րոպե ուշացումով, առանց նիստերի քարտուղարի ներկայության, առանց կողմերին ներկայացնելու: Նշված խախտումից բացի Ս. Կոստանյանը նիստը վարեց առանց պատմուճանի՝ կոստյումով, և այդ նիստը չէր արձանագրվում:
Նույն քրեական գործի հաջորդ 19.03.2010թ. նիստը սկսվեց 20 րոպե ուշացումով, առանց նիստերի քարտուղարի ներկայության, առանց կողմերի ներկայության մասին հայտարարելու, դատավորը նիստը վարեց առանց պատմուճանի, որը դիտորդի կողմից լուսանկարահանվել է:

20.01.2010թ. Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Կարինե Ղազարյանի նիստը սկսվեց նշանակված ժամից 30 րոպե շուտ(մեղադրող- Գրիգորյան Լիլիթ,մեղադրյալ-Ստեփանյան Գարեգին, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 3-րդ մասով և 244 հոդվածով): Նիստը չէր ձայնագրվում, ըստ դատավոր Կ. Ղազարյանի՝ տեխնիկական պատճառներով:

Հարկ է նշել, որ նույն դատավոր Կարինե Ղազարյանը 26.01.2010թ. մեկ այլ քրեական գործով նիստը(մեղադրյալներ-Արտակ Հովսեփյան, Գրիգոր Խաչատրյան, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 225 հոդվածով, մեղադրող- Շահգալդյան) ընդհատել և հետաձգել էր, քանի որ տարածքը հոսանքազրկվել էր և հնարավոր չէր եղել վարել նիստի արձանագրությունը: Ինչը անհայտ պատճառներով չէր արվել այս դեպքում:
20.01.2010թ. Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Կարինե Ղազարյանի նիստի ընթացքում կատարվում էր ազատ երկխոսություն, դահլիճից ձեռք բարձրացրեց մի տղամարդ դիմելով դատավորին հայտնեց, որ "նա մեղադրյալի եղբայրն է և խնդրեց այդ օրը մեղադրականը չկարդան, նիստը հետաձգել 3 օրով, որպեսզի ինքը տուժողի իրավահաջորդներին "բերի դատարան"": Դատախազ Գրիգորյան Լիլիթը ևս անմասն չմնաց և հայտնեց,- "քանի որ նիստը չի ձայնագրվում, ասեմ, եթե դուք չեք ցանկանում, որ ես կարդամ մեղադրականը, միջնորդեք, որ դատարանը սահմանի արագացված

դատաքննություն", նրան միացավ դատավորը և հարցրեց,-"հիմա միջնորդու՞մ եք, թե՞ ոչ": Եղբայրը, որը դատավարության մասնակից չէր, ասաց "այո", և միջնորդությունը բավարարվեց, նիստը հետաձգվեց: Նիստի ավարտից հետո մեղադրյալի եղբայրը մոտեցավ դատավորին և նրանք սկսեցին ջերմ զրուցել, որտեղ դատավորը ասում էր "ես ճանաչում եմ տուժողի իրավահաջորդներին", եղբայրը հայտնեց որ ինքն էլ է ճանաչում, ապա դատավորը պահանջեց "ազատել դահլիճը": Ներկաները դուրս հրավիրվեցին, սակայն ամբաստանյալի եղբայրը մնաց ներսում դատավոր Ղազարյանի հետ:

Կարգը դատարանի դահլիճում

Դատական նիստի ժամանակ դատարանի դահլիճում կարգը վերահսկում է դատավորը՝ կարգադրիչներին տալով համապատասխան կարգադրություններ: Բացառապես միայն դատավորն իրավունք ունի արգելելու կամ թույլատրելու իրականացնել ֆոտո և տեսաձայնագրություն, այն էլ միայն դատական նիստի ընթացքում: Նախքան դատական նիստի սկիզբը ցանկացած ֆոտո և տեսաձայնագրություն իրականացնելը արգելված չէ օրենքով:

Մոնիտորինգի ենթարկված գրեթե բոլոր դեպքերում նիստը սկսելուց առաջ կարգադրիչները իրենց վրա են վերցնում դատավորներին վերապահված իրավունքները և արգելում(հատկապես քրեական գործերով) զբաղեցնել դահլիճի նստարանների առաջին շարքերը, նկարահանում իրականացնել դատարանի դահլիճում:

Հարկ է նշել, որ որոշ դեպքերում կարգի հրավիրելու կարիք է առաջացել ոչ թե ներկաներին կամ դատավարության մասնակիցներին, այլ հենց դատավորին:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Արթուր Օհանյանի նախագահությամբ ընթացող դատական նիստի ժամանակ ամբաստանյալ Նագայցևի հասցեին թե՛ տուժողի, թե՛ դատախազի կողմից հնչած անձնական վիրավորանքներին, դատավորը որևէ կերպ չի արձագանքել, անգամ այն դեպքում, երբ ամբաստանյալը ուղղակի խնդրանքով դիմել է դատավորին՝ խնդրելով կարգի հրավիրել դատավարության մասնակիցներին: Դեռ ավելին, դատավոր Օհանյանը իր ամբաստանյալի նկատմամբ հեգնական և արհամարհական վերաբերմունքով խրախուսում էր դատախազի և տուժողի վարվելաձևը: Հարկ է նշել, որ մի քանի նիստ շարունակ դատախազի անմիջապես կողքին նստած էր դատավոր Օհանյանի օգնականը և Հելսինկյան ասոցիացիայի դիտորդի հարցին՝ ինչու՞ է նիստի ժամանակ դատավորի օգնականը գտնվում դատախազի կողքին, պատասխանել էր, որ դա իր իրավունքն է նստել, որտեղ որ ցանկանում է, իսկ դրան հակառակ, թե՛ այցելուներին, թե՛ դիտորդներին առանց որևէ բացատրության արգելվում է զբաղեցնել առաջին երկու շարքերը, կամ դատը նշանակված ժամից 10 րոպե ուշ մտնել դատարանի դահլիճ՝ չնայած այն բանի որ նիստը դեռ չի սկսվել:

Հարկ է նշել, որ նիստի ամբողջ ընթացքում դատավոր Օհանյանը աթոռին գտնվում է կիսապառկած վիճակում, եթե դա դահլիճում ներկա գտնվողների նկատմամբ վերաբերմունք է, ապա այս հարցով պետք է զբաղվի ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը, եթե դատավոր Օհանյանը ունի առողջական խնդիրներ, ապա նա կամ պետք է չզբաղվի այնպիսի աշխատանքով, որը պահանջում է երկարատև նստակյաց աշխատանք, կամ գոնե զգուշացնի դատարանի դահլիճում

գտնվողներին, որ իր վարքը ոչ թե արհամարհական վերաբերմունք է, այլ առողջական խնդիր:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արթուր Օհանյանի նիստերի ընթացքում , որոնք դռնբաց էին , դատավորի օգնականը պահանջում էր դիտորդից ամրացնել "բաջը" հակառակ դեպքում հայտարարում էր, որ "իրավունք չունենք գրառումներ կատարելու ":

Մալաթիա–Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Տիգրան Պետրոսյանի նիստի ժամանակ դատախազ Սեդա Սարգսյանը հարցրել է դիտորդին՝ " Եթե դիտորդ եք, ինչու՞ չեք ներկայանում դատավորին", սակայն դատավորը չի արձագանքել նրա հայտարարությանը:
Դատարանից դուրս գալիս՝ կարգադրիչները հայտարարել են դիտորդին, որ նա ամեն անգամ պետք է ներկայանա իրենց, նոր բարձրանա վերև, հակառակ դեպքում՝ "իրենց վրա խոսակցություն է գալիս":

Դատարանի դահլիճում ոստիկանները և դատական կարգադրիչներն են որոշում, թե որտեղ պետք է այս կամ այն անձը նստի: Չնայած, որ դա դատարանի, այլ ոչ թե կարգադրիչների ֆունկցիան է՝ թույլատրել կամ չթույլատրել նստել առաջին շարքում:
Մեծ հնչեղություն ունեցող գործերով, քաղաքացիների մուտքը դահլիճ սահմանափակելու նպատակով, քաղաքացիական հագուստով կարգադրիչները և ոստիկանության աշխատակիցները զբաղեցնում են դահլիճի նստարանները, իսկ քաղաքացիներին հայտարարվում է, որ դահլիճում ազատ տեղերի բացակայության պատճառով վերջիններս ներս չեն թողնվելու:
Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում դիտարկվել են ՀՀ քր. օր.-ի 34-177հ. 2դդ և 327հ. 1-ին մասերով գործեր՝ դատավորներ Բալայան Դավիթի և Ռշտունի Վազգենի նախագահությամբ: Ընթացող երկու դատավարությունների դիտարկման ժամանակ կարգադրիչները չեն թույլատրել նստել առաջին շարքում:

Նմանատիպ օրինակները բազմաթիվ են:

Դատական նիստի արձանագրություն
Համաձայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի.
"1. Դատավարական գործողությունների ընթացքը և արդյունքները արտացոլվում են արձանագրությունում, որը կազմվել է դատավարական գործողության ընթացքում կամ դրա ավարտից անմիջապես հետո:
2. Արձանագրությունը գրվում է ձեռքով կամ պատրաստվում տեխնիկական միջոցների օգնությամբ: Դատավարական գործողություններ իրականացնելիս կարող են կատարվել սղագրում, լուսանկարահանում, կինոնկարահանում, ձայնագրում և տեսագրում:"

Հայաստանի Հանրապետությունում պարբերաբար իրականացվել են բարեփոխումներ, ֆինանսավորվել են դատարանները, դրա արդյունքում

վերակառուցվել և վերազինվել են նոր համակարգերով Երևան քաղաքի բոլոր դատարանների շենքերը:

Հարկ է նշել, որ անգամ վերազինումից հետո, երբ Երևան քաղաքի բոլոր դատարանները արդեն հնարավորություն ունեն դատական նիստը արձանագրել ձայնագրության միջոցով, բազմաթիվ են դեպքեր, երբ դրանք միտումնավոր չեն ձայնագրվում:

Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ Կարինե Ղազարյանի և Սուրիկ Կոստանյանի նախագահությամբ տեղի ունեցած նիստերը այլ խախտումներից բացի նաև չեն ձայնագրվել:

Անհրաժեշտ է նշել, որ հաճախ կողմերին տրամադրվող նիստերի արձանագրության ձայնագրության որակը մեղմ ասաց պիտանի չէ լսելու համար: Չնայած այն հանգամանքի, որ դատավարության մասնակիցներից յուրաքանչուրի դիմաց տեղադրված են միկրոֆոններ, անհասկանալի պատճառներով, դատարանի կողմից տրամադրված լազերային կրիչներով ձայնագրությունը հետագայում գրեթե հնարավոր չէ լսել: Հատկապես վատ է լսվում դատավորների ձայնը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշվածը կրում է համատարած բնույթ, թույլ է տալիս ենթադրել, որ ձայնագրության ցածր որակը կատարվում է դիտավորությամբ, որպեսզի հետագայում կողմը հնարավորություն չունենա, օգտագործելով դատական նիստի արձանագրության ձայնագրությունը, բողոքարկել դատարանի անօրինական գործողությունները կամ դատավորի ոչ պատշաճ վարքը:

Մեր համոզմամբ ևս մեկ համատարած խնդիրներից է այն, որ մեղադրողին դատական նիստերի արձանագրությունների ձայնագրությունը տրամադրվում է դատարանների կողմից՝ առանց պետական տուրքի վճարման , իսկ պաշտպանական կողմը ստիպված է լինում յուրաքանչուր նիստի ձայնագրության համար վճարել օրենքով սահմանված պետական տուրք: Դիտորդական խմբի բարձրացրած հարցին ՀՀ Վերաքննիչ դատարանի դատավորները հայտնեցին, որ դատախազությունը դատական դեպարտամենտին գումար է փոխանցում դատական նիստերի արձանագրությունները կրիչներով տրամադրելու համար:

Սա այնքան ֆինանսական խնդիր չէ, որքան կողմերի հավասարության սկզբունքի խախտում, որը ևս ամրագրված է թե՛ ներպետական, թե՛ միջազգային օրենսդրությամբ:

Մարզերում գտնվող դատարանների վերազինումը կատարվել է մասամբ: Մեծամասամբ մարզերում գտնվող դատարանները գտնվում են ուղղակի անմխիթար վիճակում: Լավագույն դեպքում վերանորոգված են դատավորների առանձնասենյակները, բացակայում են բնականոն աշխատանքի համար նվազագույն պայմանները:

Մարզերում հիմնականում նիստերը արձանագրվում են ձեռագիր, ինչի արդյունքում այն, ինչ ցանկալի չէ, որ արձանագրված լինի, պարզապես չի անցկացվում արձանագրության մեջ և հետագայում որևէ կերպ հնարավոր չի լինում անդրադառնալ դատական նիստի ժամանակ դատավորների և դատախազների կողմից կատարված կոպիտ խախտումներին: Ցանկացած միջնորդություն՝ նիստը տեսաձայնագրելու կամ ձայնագրելու, մերժվում է, անգամ եթե պաշտպանական կողմը առաջարկում է տրամադրել բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցները իր հաշվին:

Դատավորի վարքագիծ

Հելսինկյան ասոցիացիայի կողմից իրականացվող մոնիտորինգի ընթացքում արձանագրվել է, որ բազմաթիվ դատավորներ բավարար մասնագիտացված չեն, չեն պահպանում դատավորի էթիկայի կանոնները և դա պայմանավորված է նաև նրանով, որ Արդարադատության խորհուրդը օբյեկտիվ մոտեցում չի ցուցաբերում քաղաքացիների՝ դատավորների ոչ վայել վարքագծի և անօրինականությունները կանխելու վերաբերյալ բողոքներին:

Արձանագրվել են դեպքեր, երբ դատավորը ուղղակի անձնական վիրավորանք է հասցնում ամբաստանյալին, փորձում նսեմացնել վերջինիս արժանապատվությունը:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Արթուր Օհանյանի նախագահությամբ ընթացող դատական նիստի ժամանակ ամբաստանյալ Նագայցևի հասցեին հնչած անձնական վիրավորանքներին թե՛ տուժողի, թե՛ դատախազի կողմից, դատավորը որևէ կերպ չի արձագանքել, անգամ այն դեպքում, երբ ամբաստանյալը ուղղակի խնդրանքով դիմել է դատավորին՝ խնդրելով կարգի հրավիրել դատավարության մասնակիցներին: Դեռ ավելին, դատավոր Օհանյանը խրախուսում էր ամբաստանյալի նկատմամբ դատախազի և տուժողի կողմից հեգնական և արհամարհական վերաբերմունքը: 14.12.2010թ. Նագայցևի պաշտպան Ինեսսա Պետրոսյանը միջնորդեց հարցաքննել ոստիկանության պետ Ավետիք Մկրտչյանին և նույն ոստիկանության մեկ այլ բարցրաստիճան ոստիկանի: Դատարանը առանց հիմնավորման մերժել է միջնորդությունը, որից հետո ամբաստանյալ Ա. Նագայցևը հայտարարեց,որ 15.12.2010թ.-ից նստում է անժամկետ հացադուլի, քանի որ թե՛ նախաքննությունը, թե՛ դատավարությունը իրականացվում են խիստ կողմնակալ:

24.12.2010թ. Ա. Նագայցևը դատարան բերվեց բերանը կարված, խիստ գունատ վիճակում, և հայտարարեց, որ շուրջ 10 օր է, գտնվում է հացադուլի մեջ: Հարկ է նշել, որ այդ ժամանակահատվածում թե՛ ադմինիստրացիայի, թե՛ բժիշների կողմից որևէ արձագանք չի եղել, առողջական վիճակի վերաբերյալ որևէ գնահատական չի տրվել, և ըստ ամբաստանյալի խոսքերի, երբ նա դիմել է բժիշներին, խնդրելով ճնշումը կարգավորող դեղամիջոց, հերթապահ բուժակի կողմից նրան տրամադրվել է ասկոֆեն, որը նա ներկայացրեց դատարանին:

Բերանը կարելու վերաբերյալ դատարանը հեգնանքով հայտարարեց, որ դա ամբաստանյալի իրավունքն է:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վոլոդյա Գրիգորյանի նախագահությամբ տեղի ունեցած դատական նիստերի ընթացքում դատավորը բազմիցս խախտել է անմեղության կանխավարկածը, որը արտահայտվում է հետևյալ կերպ. դատական նիստը սկսվելուն պես դատավոր Վ. Գրիգորյանը արդեն իսկ մեղադրում է ամբաստանյալին՝ ասելով հետևյալը՝ "Ինչի ես տենց բան անում, մեծ մարդ ես, ամոթա, քո պատճառով բոլորիս բերել հավաքել ես ստեղ":

Արձանագրվել են դեպքեր, երբ դատարանը բացահայտ խախտում է անմեղության կանխավարկածը:

02.07.2010 թ.Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի(նստավայր Էջմիածին) դատավոր Խալաֆյանի նախագահությամբ(մեղադրյալներ՝ Աշոտ Մշեցյան և Սերոբ Վարդանյան, մեղադրվում են ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, պաշտպաններ՝ Վալենտին Առաքելյան և Արայիկ

Պապյան, դատախազ՝ Արմեն Կարապետյան) ընթացող դատական նիստի ամբողջ ընթացքում նախագահողը անընդհատ կրկնում էր, որ մեղադրյալ Վարդանյանը խոստովանի տեղի ունեցածը, այլ ոչ թե իր համար ցանկալին ներկայացնի որպես իրականություն: Մեղադրյալներ Վարդանյանի և Մշեցյանի նախաքննության ընթացքում տրված ցուցմունքների վերաբերյալ վերջիններս բազմիցս հայտարարեցին, որ դրանք կորզվել են բռնության արդյունքում , սակայն դատավոր Խալաֆյանը ոչ միայն օրենքով սահմանված կարգով պատշաճ չարձագանքեց այս հայտարարությանը, այլ շարունակում էր այս ամենը վերագրել նրան, որ ամբաստանյալները փորձում են խուսափել պատժից:

Արձանագրվել են դեպքեր, երբ դատարանը անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել պաշտպանի նկատմամբ:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գագիկ Պողոսյանի վարույթում գտնվող Տիգրան և Լևոն Բալխաչյանների քրեական գործի ընթացքում, երբ հանրային պաշտպան Ռաֆայել Սաֆարյանը հանդես էր գալիս իր պաշտպանական ճառով, նշելով որ դատարանը անթույլատրելի վարքագիծ է ցուցաբերել թե՛ մեկ տարի երկու ամիս կալանքի տակ գտնվող ամբաստանյալների նկատմամբ, թե՛ նաև իր նկատմամբ դատավորը բազմիցս անգամ ընդհատում էր նրան, և երբ պաշտպանը դիմեց դատարանին, խնդրելով չխանգարել նրան և թույլ տալ կատարել իր պարտականությունները, դատավոր Գ.Պողոսյանը, դատախազներ Բունիաթյանի և Հարությունյանի հետ քմծիծաղ տալով, փորձել են ծաղրել պաշտպանին: Երբ Սաֆարյանը շրջվեց դեպի դահլիճում ներկա Հելսինկյան ասոցիացիայի դիտորդները, դատավորը հերթական անգամ ընդհատեց պաշտպանին և արհամարհանքով հայտնեց, որ ճառը ինձ համար եք կարդում ոչ թե "իրանց" համար:

Չնայած այն հանգամանքին, որ օրենքը դատարանի հայեցողությանն է թողնում գործի հետ կապված այս կամ այն հարցի լուծումը, հաճախ դատավորները չարաշահում են այդ իրավունքով և խիստ կողմնակալ վերաբերմունք են դրսևորում նույնանման խնդիրների վերաբերյալ:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մակյանի նախագահությամբ ընթացող դատական նիստերից մեկին առանց որևէ փաստաթուղթ ներկայացնելու չէր ներկայացել ամբաստանյալ Արտյոմիկ Սայադյանը, որի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել էր՝ ստորագրություն չհեռանալու մասին: Պրակտիկայից ելնելով՝ նման դեպքերում թե՛ մեղադրողը, թե՛ դատարանը անմիջապես արձագանքում են և փոփոխում խափանման միջոցը կալանքով: Սակայն այս դեպքում պաշտպանների միջնորդությունները՝ ընդմիջել դատական նիստը երկու ժամով և միջոցներ ձեռնարկել ամբաստանյալին բերման ենթարկելու, առաջացրեց դատարանի և մեղադրողի անբացատրելի ագրեսիվ վարքագիծ՝ ստեղծելով տպավորություն, թե դատաքննության մասնակիցների կազմում տեղի է ունեցել փոփոխություն և դատավորն ու դատախազը ստանձնել են Ա. Սայադյանի պաշտպանի դերը: Դատավորը սկսեց հարցուփորձ անել դահլիճում գտնվող ներկաներին, թե ինչ տեղեկություն ունեն ամբաստանյալի մասին, որից հետո ամբաստանյալ Գ. Բունիաթյանը տեղեկացրեց, որ մեկ օր առաջ և նիստի օրը շտապ օգնության մեքենա էր տեսել Սայադյանի տան բակում: Այդ ինֆորմացիայից հետո դատավորը հայտարարեց՝ իբր "Սայադյանը հեռախոսով հայտնել է, որ վատառողջ է և չի կարող ներկայանալ նիստի": Դատավորը, չնայած բազմաթիվ առարկումների,

որոնք արվեցին պաշտպանական կողմից, այդպես էլ չփորձեց պարզել՝ արդյոք Ա. Սայադյանը հիվանդ է, շտապօգնության մեքենան եկել էր իր, թե մեկ այլ անձի համար և, դատախազի ակտիվ մասնակցությամբ, ամեն միջոց ձեռնարկեց նիստը հետաձգելու համար: Նիստի ավարտին պաշտպանական կողմին մոտեցան Ա. Սայադյանի համագյուղացիները և հայտնեցին, որ նույն օրն առավոտյան տեսել են վերջինիս գյուղի խանութում առնտուր անելիս, որ հիվանդ լինելը ակնհայտ սուտ է:
2010թ.օգոստոսի 31-ին, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մակյանի նախագահությամբ ընթացող դատական նիստին գործով դատակոչված ամբաստանյալ Բունիաթյանը, որի նկատմամբ կալանքի փոխարեն անհայտ պատճառներով ընտրվել էր ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը, ներկայացել էր դատական նիստին հարբած վիճակում: Կարգադրիչները ոչ մի կերպ չեն արձագանքել իրավիճակին:
Նման իրավիճակում կարգադրիչները պարտավոր էին զեկուցել դատարանին ամբաստանյալի անթույլատրելի վարքագծի մասին, իսկ դատարանը պարտավոր էր արձագանքել: Ավելի ուշ հայտի դարձավ, որ ամբաստանյալ Բունիաթյանը խնամիական կապերի մեջ է գտնվում Կոտայքի մարզի դատախազի տեղակալ, սույն քրեական գործով մեղադրողներից մեկի՝ Յու. Բաղյանի հետ, ինչը հիմք չի տալիս վերջինիս օրենքով սահմանված կարգով բացարկ հայտնել, սակայն տալիս է բոլոր այն հարցերի պատասխանները, որոնք բաց էին մնացել պաշտպանական կողմի համար:

2010թ. Հայաստանում ակտիվացել է պայքարը թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ: Կտրուկ ավելացել են դատարան ուղարկվող քրեական գործերի քանակը, որոնք պատիժ են նախատեսում ՀՀ Քրեական օրենսգրքի 266 և 268 հոդվածներով: Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խմբի կողմից միայն Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դիտարկվել է ավելի քան 40 Քրեական օրենսգրքի 266 և 268 հոդվածներով հարուցված քրեական գործ: Դիտարկված գործերից միայն 5 դեպքում է դատարանը որոշում կայացրել մեղադրյալին հարկադիր բուժման ուղարկելու մասին: Նշվածը կարելի է դիտարկել թե՛ որպես անփութություն, թե՛ որպես դատավորների անբավարար մասնագիտացվածություն, թե որպես դիտավորություն: Ցանկացած պարագայում նշվածը պետք է որ հետաքրքրություն և համապատասխան վերաբերմունք առաջացներ գոնե համապատասխան դատարանի նախագահի մոտ:

Դատախազի վարքագիծ

Մոնիտորինգի արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ դատախազների դրսևորած վարքագիծը ոչ միայն անվայել է նման պաշտոն զբաղեցնող իշխանության ներկայացուցչի համար, այլ անթույլատրելի է և անընդունելի է :
Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատավոր Վոլոդյա Գրիգորյանի նախագահությամբ տեղի ունեցած ցանկացած դատական նիստում, որտեղ մեղադրող կողմը Նուբարաշեն ՔԿՀ-ի հսկող դատախազ Ալիկ Մուրադյանն էր, արձանագրվել են էթիկայի տարրական կանոնների խախտում, մասնավորապես՝ մեղադրողը ամբաստանյալներին հաճախակի դիմել է "Արա", "Այ տղա" փողոցային բառապաշարով, ձայնի տոնայնության ակնհայտ բարձրացմամբ:

Ամբաստանյալ Աշոտ Միքայելյանի գործով դատական նիստերի ժամանակ, ինչպես նաև դատական նիստերի ընդմիջումների ընթացքում և՛ դատավոր Վոլոդյա Գրիգորյանը, և՛ մեղադրող Ալիկ Մուրադյանը ամբաստանյալին և վերջինիս ծնողներին դիմել են ոչ պատշաճ բառերով, մասնավորապես, մեղադրող կողմը ամբաստանյալին հեգնանքով ասել է՝ "Թաշկինակ Գագոյի տղեն չե՞ս", ամբաստանյալին անվանել է բառիգ(թմրանյութ վաճառող), նույնը վերագրել է նաև նրա ընտանիքին:

26.12.2010թ. Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Ազարյանի նախագահությամբ ընթացող դատական նիստի ժամանակ(ամբաստանյալ- Հարություն Պետրոսյան, մեղադրվում է ՀՀ Քր. օր.-ի 132 հոդվածի 1-ին մասով, հանրային պաշտպան - Սերգեյ Մկրտչյան , տուժող-Պայծառ Դանաթյան, մեղադրող-Մարգարյան) տուժողը հրաժարվեց նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներից՝ հայտնելով, որ իրեն քննիչները ստիպել են տալ նման ցուցմունքներ և խնդրեց դատարանում տրված ցուցմունքերը հիմք ընդունել: Արված հայտարարությունը խիստ վրդովմունք առաջացրեց դատախազ Մարգարյանի մոտ և վերջինս անցավ տուժողի նկատմամբ հոգեբանական ճնշման և սպառնալիքների, ասելով որ նման արարքի և հայտարարության համար վերջինիս քրեական պատասխանատվության կենթարկեն:

Ընդմիջում հայտարարելուց հետո տուժողը դիմեց դատախազին՝ հարցնելով, թե կարող է արդյոք դուրս գալ դահլիճից, ինչին դատախազը պատասխանեց "ինչ ք... ուտում ես, կեր":

Միջնորդությունների քննարկման կարգի խախտում

Դատավարությունների ընթացքում մեծամասամբ խախտվում է կողմերի մրցակցության սկզբունքը, փաստաբանների միջնորդությունները հաճախ մերժվում են առանց հիմնավոր պատճառաբանությունների, որի հետևանքով դատավարության ընթացքում և դատավճիռ կայացնելիս դատավորները հիմնականում սահմանափակվում են այն ապացույցներով, որոնք տրամադրում է մեղադրող կողմը:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում Արթուր Օհանյանի և Վոլոդյա Գրիգորյանի վարույթում գտնվող գործերը(266-268 հոդվածներով) քննելիս դատավորները առանց հիմնավոր պատճառաբանության մերժել են փաստաբանների գրեթե բոլոր այն միջնորդությունները, որոնց դեմ առարկել է դատախազը:

Դատարանների կողմից խախտվում է նաև դատաքննության իրականացման ողջամիտ ժամկետները և՛ քրեական, և՛ քաղաքացիական գործերով: Կան բազմաթիվ գործեր, որոնց դատավարությունը ընթացել է մեկ տարուց ավել ժամանակով: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ դատարանների ծանրաբեռնվածությամբ, կողմերի կողմից դատական նիստերի անհիմն ձգձգելով, լինում են դեպքեր, որ դատաքննությունը ընդհատվում է դատավորի արձակուրդ մեկնելու պատճառով:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատարանի նախագահ Արթուր Օհանյանը վարույթում գտնվող քրեական գործն(ամբաստանյալ-Նագայցև) ի թիվս բազմաթիվ այլ խախտումների ընթանում է 2009 թ-ից և մինչ օրս չի ավարտվել:

Վկաների հարցաքննության կարգի խախտում

Բազմաթիվ են դատարաններում վկաների հարցաքննության կարգի խախտման դեպքեր:

Համաձայն ՀՀ Կառավարության 22. 12. 1999 թ. N 767 *որոշման "Հայաստանի Հանրապետությունում անձը(ինքնությունը) հաստատող փաստաթղթերն են՝ Հ Հ քաղաքացիների համար անձնագիրը, զինվորական գրքույկը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ նաև ծննդյան վկայականը...."*

Դիտարկված նիստերի ժամանակ մի դեպքում դատարանը անհասկանալի պատճառներով չի ընդունում, բացի անձնագրից անձը հաստատող այլ փաստաթղթեր, մյուս դեպքում բավարար է համարում օրինակ դատախազի անձամբ հարցաքննվող վկայի հետ ծանոթ լինելը՝ որպես "անձը հաստատող փաստաթուղթ":

Կենտրոն և նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Գագիկ Ավետիսյանի նախագահությամբ ընթացող դատական նիստի ժամանակ որպես վկա հրավիրված տուժողը՝ Քրիստափոր Էլազյանի եղբայրը, ներկայացել էր դատական նիստին առանց անձը հաստատող փաստաթղթի, ինչի առիթով դատավորը խիստ նկատողություն արեց գործով դատախազ Հակոբյանին՝ հայտնելով, որ նախաքննության մարմնից դատախազությունը ստանում է գործեր թերի, ինչ-որ հապավումներով(Քր. գործ, Քր. օր.) , որ տուժողին տեղեկացնում են իբր կարող է չմասնակցել դատական նիստերին, դատարանում կարող է ցուցմունք չտալ և կընդունվի նախաքննական ցուցմունքը, չի զգուշացվում վկաներին դատարան ներկայանալու կարգը և այլն: Եվ այդ թերությունների և բացթողումների վրա աչք փակելով դատախազության մեղքով ստանում ենք թերի գործեր:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Վոլոդյա Գրիգորյանի նախագահությամբ ընթացող դատական նիստի ժամանակ հարցաքննվել են վկաներ առանց անձը հաստատող փաստաթղթի (05.05.2010թ. վկա - Մակիչ Ղազարյան, Նուբարաշեն ՔԿՀ 2րդ կարգի տեսուչ և վկա -Արսեն Ավագյան, Նուբարաշեն ՔԿՀ աշխատակից):

Վերջիններիս անձը բանավոր հաստատել է Նուբարաշեն ՔԿՀ-ի հսկող դատախազ Ալիկ Մուրադյանը՝ հայտարարելով,- "այս դատարանում ո՞վ չի ճանաչում Մակիչին և Արսենին": Նշված հայտարարությունը դատավոր Գրիգորյանը հիմք է ընդունել, համարելով անձը հաստատված, անցել է վկաների հարցաքննությանը:

Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Ա.Ազարյանի նախագահությամբ ընթացող դատական նիստերի ժամանակ(ամբաստանյալ- Հարություն Պետրոսյան, մեղադրվում է ՀՀ Քր. օր.-ի 132 հոդվածի 1-ին մասով, հանրային պաշտպան - Սերգեյ Մկրտչյան, տուժող- Պայծառ Դանաթյան, մեղադրող- Մարգարյան) դատավորը հարցաքննվողներից որևէ մեկից չի պահանջել ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ:

Դատաքննության ժամանակ ամբաստանյալի կողմից արված բռնությունների մասին հայտարարություններ

Կրկին համատարած բնույթ կրող մի երևույթ, որի մասին բազմիցս բարձրաձայնվել է, սակայն որևէ շարժ մինչ օրս չի նկատվում:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածը նախատեսում է քրեական գործ հարուցելու առիթները:
Մասնավորապես, 176-րդ հոդվածի 3-րդ կետը ուղղակի մատնանշում է, որ քրեական գործ հարուցելու առիթ է. *"հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս":*

Սակայն մոնիտորինգի ենթարկված դատաքննություններից միայն մեկի ժամանակ դատավորը նպատակահարմար գտավ որոշում կայացնել և նիստի ընթացքում հնչած հայտարարությունների վերաբերյալ նյութերը ուղարկել Հատուկ քննչական ծառայություն՝ քննություն անցկացնելու համար: Մնացած բոլոր դեպքերում նմանատիպ հայտարարությունները մնում են անարձագանք:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում ընթացող դատաքննության ժամանակ այլ խախտումներից զատ մեղադրյալ Գևորգ Մարգարյանը(մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2 –րդ մասով) հայտարարեց, որ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ այդ ցուցմունքները նա տվել է ոստիկանների կողմից ճնշման արդյունքում: Սակայն դատարանը որևէ կերպ չարձագանքեց մեղադրյալ Գևորգ Մարգարյանի կողմից արված հայտարարությանը:

23.03.2010 թ. Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Մխիթար Պապոյանի նախագահությամբ (ամբաստանյալ - Աննա Ալբերտի Ղազարյան, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3 –րդ մասի 1-ին կետով, հանրային պաշտպան -Հենրիկ Մաղաքյան, դատախազ Վարդգես Գևորգյան) ամբաստանյալը հայտարարեց, որ իր՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ այդ ցուցմունքները նա տվել է ճնշման տակ և ոստիկանության Արաբկիրի բաժնի քննիչ Կարեն Հովհաննիսյանի թելադրանքով: Ամբաստանյալի խոսքերով քննիչ Հովհաննիսյանը հայհոյել և գոռգոռացել է իր վրա և ստիպել ստորագրել այդ ցուցմունքների տակ: Ամբաստանյալի արված հայտարարությանը դատարանը որևէ կերպ չարձագանքեց:
Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Արթուր Օհանյանի նախագահությամբ ընթացող դատական նիստի ժամանակ ամբաստանյալներ Նագայցևը, Արմեն Չոլոյանը և Գառնիկ Չոլոյանը բազմիցս հայտարարել են, որ իրենց նախաքննության ընթացքում ենթարկել են դաժան ծեծի և խոշտանգման: Այդ հայտարարություններին դատավորը և դատախազը պատասխանում էին քմծիծաղով և հեգնանքով:

Նույն գործով տուժող Հրայր Դանիելյանը իր ցուցմունքներում հայտնեց, որ նախաքննության ժամանակ դիմել է Էրեբունու ոստիկանության բաժանմունքի պետ Մկրտչյանին՝ խնդրելով վերադարձնել իրեն պատկանող գողուն հանդիսացող ոսկեղենը: Ոստիկանության պետ Մկրտչյանը, ցույց տալով վիրակապված ձեռքը, հայտարարել է "Էնքան եմ ծեծել , չէին կարողանում գետնից վել կենալ , տես ձեռքս ոնց եմ վնասել, ի՞նչ անենք, ծեծում ենք էլ տեղը չեն ասում": Այս անգամ ևս դատավորը և դատախազը իրար նայելով կրկին քմծիծաղ տալով շարունակեցին հարցաքննությունը:
Հերթական նիստի ընթացքում մեղադրյալ Գառնիկ Չոլոյանի պաշտպան Ինեսսա Պետրոսյանը խնդրեց փակ նիստ անց կացնել, քանի որ իր պաշտպանյալը ցանկանում էր հայտարարություն անել: Սակայն դատարանը միջնորդությանը չանդրադարձավ:
Նույն նիստին մեղադրյալ Գառնիկ Չոլոյանը հայտարարել է, որ նախաքննության ընթացքում ոստիկանության աշխատակիցները, բացի ծեծից և խոշտանգումներից, ասել են,-"արհեստական սեռական օրգանը կդնենք հորդ բերանը, կնկարենք և կուղարկենք Օշական "լավ տղերքին" թող բոլորը իմանան թե ով է նա":

Կալանքի միջնորդություններ

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի.

"1. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը:
2. Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննման՝ նախաքննության կատարման վայրի, դատարանում դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննմանը: Դատարանը պարտավոր է դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնորդություն ներկայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին, եթե նա մասնակցում է գործին:....."

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի.

Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական

վարույթում կամ դատարանում գործի քննությանը, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:
Կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները:
Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, կասկածյալի կամ մեղադրյալի անձը, տարիքը և առողջական վիճակը, սեռը, զբաղմունքի տեսակը, ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը, գույքային դրությունը, բնակության մշտական վայրի առկայությունը, այլ էական հանգամանքներ:”

Հելսինկյան Ասոցիացիայի հետ համագործակցող փաստաբաններից հայտնի դարձավ, որ դատարանները բացառիկ դեպքերում է, որ մերժում են քննիչների կողմից ներկայացված կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին և կալանքը երկարացնելու մասին միջնորդությունները:
Հիմնականում կալանք նշանակելիս հաշվի չեն առնում օրենքով ոչ ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը, ոչ առողջական վիճակը ոչ էլ օրենքով սահմանված այլ էական հանգամանքներ:

15.03.2010 թ-ին Անատոլի Տերյանը և Արտակ Զեյթունյանը բերման են ենթարկվել ոստիկանության Հրազդանի բաժին՝ թմրանյութ իրացնելու կասկածանքով: Վերջիններիս ապօրինի կերպով, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1 հոդվածի պահանջները, բերման ենթարկվելու պահից չորս օր ապօրինի պահել են ոստիկանության Հրազդանի բաժնում: 19.03.2010 թ-ին Ա.Տերյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, վերջինիս նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանք:
Սույն գործով մինչդատական վարույթում թույլ են տրվել էական դատավարական սխալներ, մասնավորապես, խափանման միջոցի՝ կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությունները քննարկելիս դատարանները պաշտպաններին չեն ծանուցում, թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի համաձայն դատարանները պարտավոր են պաշտպաններին պատշաճ ծանուցել, մինչդեռ նիստից ընդամենը հինգ րոպե առաջ հեռախոսազանգով տեղյակ են պահում, որի հիման վրա կազմվում է հեռախոսագիր պաշտպանին ծանուցելու մասին: Հարկ է նշել, որ Անատոլի Տերյանն ի ծնե ունի մեկ երիկամ և կալանքի տակ գտնվելու ժամանակ վերջինիս առողջական վիճակը կտրուկ վատացել է:
25.02.2010 թ-ին Խաչիկ Արամայիսի Հովսեփյանը Ավետիք Գևորգյանին թմրանյութ ապօրինի իրացնելու կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության Չարենցավանի բաժին: 01.03.2010 թ-ին վերջիններիս մեղադրանք է առաջադրվել:
01.03.2010 թ.-ին ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ Խաչիկ Հովսեփյանի և Ավետիք Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանք՝ երկու ամիս ժամկետով:

21.04.2010 թ-ին ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը ՀՀ Կոտայքի մարզի քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Ներսիսյանի միջնորդության հիման վրա որոշում է կայացրել՝ կալանավորման տակ պահելու ժամկետը երկարացնել ևս երկու ամսով: Այնուհետև՝ 2 ամիս անց, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Ն.Պողոսյանի նախագահությամբ, 25.06.2010 թ-ին քննարկելով քննիչի միջնորդությունը մեղադրյալներ Խ.Հովսեփյանի և Ա.Գևորգյանի խափանման միջոցի ժամկետը ևս երկու ամիս ժամկետով երկարացնելու մասին և պարզելով, որ տվյալ քննիչի դեմ մեղադրյալների պաշտպանները բացարկ են հայտնել, հետաձգել է միջնորդության քննությունը մինչև 28.06.2010թ.-ը՝ բացարկի պատասխանը պարզելու համար՝ այդ մասին հայտարարելով ինչպես դատական նիստին, այնպես էլ տրամադրելով ծանուցագիր: Սակայն 26.06.2010 թ-ին ՀՀ ԱՆ "Նուբարաշեն" ՔԿՀ-ում, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները, առանց պաշտպաններին տեղեկացնելու և մեղադրյալներին զրկելով պաշտպան ունենալու իրավունքից, արտագնա նիստ է իրականացրել և բավարարել քննիչի միջնորդությունը ու խափանման միջոցի ժամկետը երկարացրել ևս երկու ամսով:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Այժմ Ազգային Ժողովում քննարկման է ներկայացվել "Փաստաբանության մասին" օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը, որով փորձ է կատարվում էական փոփոխություններ մտցնել այս ոլորտում:

Մասնավորապես, եթե նախկինում միայն քրեական գործերով էր պահանջվում բացառապես արտոնագրված փաստաբանի մասնակցություն, իսկ քաղաքացիական գործերով կարող էին մասնակցել նաև քաղաքացու կողմից լիազորված ցանկացած գործունակ անձ(թե՛ իրավաբան, թե՛ ուղակի շարքային քաղաքացի), ապա այժմ փորձ է կատարվում նաև քաղաքացիական գործերով թույլ տալ մասնակցել միայն լիցենզավորված փաստաբաններին:

Մի կողմից նշված փոփոխությունը կարելի է դիտել մարդու իրավունքների պաշտպանության որակի բարձրացում՝ դատական կարգով խնդիրները լուծելիս, սակայն դրանք ոչ միայն ուղակի հակասում են ՀՀ սահմանադրությանը(Հոդված 18),այլ իրականում ներկայիս ծանր սոցիալական վիճակում գտնվող բնակչության համար նման փոփոխությունները հանգեցնելու են նրան, որ շարքային քաղաքացին, զուտ անվճարունակ լինելու պատճառով, հնարավորություն չի ունենալու դիմել դատարան: Այսինքն՝ խախտվելու է դատարան դիմելու մատչելիության սկզբունքը:

Համաձայն "Փաստաբանության" մասին ՀՀ օրենքի՝ ՀՀ-ում փաստաբանական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է լինել ՀՀ փաստաբաների պալատի անդամ, որի համար անհրաժեշտ է անցնել համապատասխան որակավորման քննություններ և ստանալ արտոնագիր:

Արտոնագիր տրվում է քաղաքական, կրոնական և այլ համոզմունքներից անկախ:

Հայաստանում գործում է միայն մեկ փաստաբանների պալատ, ինչը հնարավորություն չի տալիս զարգացնել այս ոլորտը:

Լինելով մոնոպոլիստ այս բնագավառում՝ միությունը չի ձգտում կատարել առավել խիստ ընտրություն փաստաբանին արտոնագիր տրամադրելիս: Դրա արդյունքում

բազմաթիվ են այն լիցենզավորված փաստաբանները, որոնց թե՛ գիտելիքները, թե՛ հմտությունները, թե՛ անձնական մարդկային հատկանիշները չեն բավարարում մասնագիտական գործունեություն իրականացնելու համար:
Նշվածի արդյունքում թե՛ նախաքննության հետաքննության մարմինները, թե՛ դատարանները լրացուցիչ հնարավորություններ են ստանում անպատիժ կատարել իրենց ապօրինությունները:

Կենտրոն և նորք-մարաշ վարչական շրջանների Մ. Մարտիրոսյանի վարույթում գտնվող "10-ի գործով" պաշտպանը՝ Անահիտ Ավետիսյանը, նույնիսկ չկարողացավ ձևակերպել իր մտքերը և ներկայացնել միջնորդություն, վերջինիս այդ հարցում օգնեց գործով մեկ այլ փաստաբան՝ Վաղինակ Գևորգյանը, որը դիմելով դատարանին հայտնեց,- "քանի որ իմ կոլեգան չի կարողանում, թույլ տվեք ես միտքը ձևակերպեմ":
Այդ նույն դատավարության ընթացքում դատավոր Մ. Մարտիրոսյանը բազմիցս անգամ դադարեցրել է նիստը՝ բացատրելով պաշտպանին քրեական դատավարությամբ սահմանված կանոնները և փուլերը:
Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Պապոյանի նախագահությամբ ընթացող նիստի ժամանակ(ամբաստանյալներ Գ. Գևորգյան և Ս. Սարգսյան) փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Նիկոլայ Բաղդասարյանը, չիմանալով փորձաքննության անվանումը, խնդրեց հետաձգել նիստը և ընդմիջման ժամանակ, նստելով ավագ դատախազ Լիլիթ Մանուկյանի կողքին, նրա թելադրանքով ձևակերպեց միջնորդությունը, որը նիստը վերսկսվելուց հետո, դատավորի օգնությամբ ձևակերպելով մտքերը, կարողացավ ներկայացնել և անել պահանջվող միջնորդությունը:

Թե՛ "Մարտի 1"-ի գործով մեղադրյալներ Արմեն Խուրշուդյանը և Ֆելիքս Գևորգյանը, թե՛ այլ քրեական գործերով մեղադրյալները մեկ երկու նիստից հետո հրաժարվել են պաշտպան Արամ Հովհաննիսյանի ծառայություններից՝ մեկնաբանելով, որ վերջինս պատշաճ և բարեխիղճ չի կատարում իր պաշտպան լինելու պարտականությունները:
Փաստաբանների գործունեությունը խոչընդոտվում է թե՛ ոստիկանությունում, թե՛ դատախազություններում և թե՛ դատարաններում: Հիմնականում նշված մարմինները իրենց անօրինականությունները իրականացնելու համար, քաղաքացիներին փորձում են համոզել, որ փաստաբանի ծառայությանը պետք չէ դիմել:
Լինում են դեպքեր, երբ փաստաբան են առաջարկում նախաքննության մարմինները, և հիմնականում դրանք լինում են նախաքննության մարմինների հետ համագործակցող անբարեխիղճ փաստաբաններ, որոնց օգնությամբ քննիչները ստանում են իրենց համար ցանկալի ցուցմունքները:
Վերը նշվածի վառ ապացույց են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի մի շարք Որոշումներ:
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 09 փետրվարի 2010թ. 3-րդ նիստի թիվ 3/4-Ա որոշումից(փաստաբան Արմեն Մարտիրոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին).

Նուբարաշենի ՔԿՀ-ում գտնվող կալանավոր Մարատ Վոլոդյայի Լևոնյանը (այսուհետ՝ Դիմող) 17.12.2009թ. դիմում է ներկայացրել Պալատին համաձայն որի, իր վերաբերյալ քննվող թիվ 12132509 քրեական գործի նյութերին ծանոթանալիս, հայտնաբերել է փաստաբան Արմեն Մարտիրոսյանի(այսուհետ՝ Պատասխանող) արտոնագիրը: Ըստ Դիմողի՝ ո՛չ ինքը, ո՛չ էլ իր ազգականները պատասխանողի հետ պայմանագիր չեն կնքել, նա քննչական գործողությունների չի մասնակցել, Դիմողը նրան չի տեսել և նրա ծառայություններից չի օգտվել: Նախաքննության մարմնի աշխատակիցները հայտարարել են, որ այլ փաստաբանի թույլ չեն տա գործին մասնակցել, այդ իսկ պատճառով Դիմողը հրաժարվել է քննիչի կողմից հրավիրված փաստաբանների ծառայությունից, քանի որ չի վստահել և ստիպված է եղել իրեն պաշտպանել անձամբ, որով խախտվել է նրա պաշտպանության իրավունքը:

Պալատի խորհուրդը 2009 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 32/10-Ա որոշմամբ պալատի անդամ, փաստաբան Արմեն Մարտիրոսյանի(արտոնագիր թիվ 310) նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ:

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող ապացույցներն ու քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող իրավական հիմքերը՝ խորհուրդը գտել է, որ փաստաբան Արմեն Մարտիրոսյանի գործողություններում առկա են Կանոնագրքի 5-րդ հոդվածի, 8-րդ հոդվածի 2-րդ մասի և 13-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգապահական խախտումներ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով “Փաստաբանության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 10, 39 և 40 հոդվածների, ինչպես նաև Պալատի կանոնադրության 10.4 կետի 19 ենթակետի և Կանոնակարգի 23, 28-30 հոդվածների պահանջներով՝ Պալատի խորհուրդը որոշել է “փաստաբան Արմեն Մարտիրոսյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության, Արմեն Մարտիրոսյանի նկատմամբ նշանակել կարգապահական տույժ՝ խիստ նկատողության ձևով՝ վեց ամիս ժամկետով”:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 20 հունվարի 2010թ. թիվ 1-ին նիստի թիվ 1/3-Ա Որոշում(փաստաբան Էդիկ Մայսուրյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին).

Պալատի խորհրդի 26.11.2009թ. թիվ 30/7-Ա. որոշմամբ փաստաբան Էդիկ Մայսուրյանի(արտոնագիր 176) նկատմամբ՝ Կանոնագրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ՝ հիմք ընդունելով հանրային պաշտպան Աննա Ջուվանովայի դիմումը:

Հանձնաժողովը գտել է, որ փաստաբան Էդիկ Մայսուրյանը խախտել է Կանոնագրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի և 13-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, այն է՝ կատարել է փաստաբանի կոչումն ու հեղինակությունը անվանարկող գործողություններ՝ առանց վստահորդի կամ նրա հարազատի հետ նախապես ունեցած նախնական համաձայնության, և պատշաճ ձևով կնքված պայմանագրի՝ քննիչի հրավերով մասնակցել է Նոր Նորքի քննչական բաժնի քննիչ Ա.Ավետիսյանի վարույթում քննվող քննչական գործողության կատարման ժամանակ և ինքնակամ ներգրավվել է նրա վարույթում քննվող քր.գործով որպես մեղադրյալ անչափահաս՝ Ռուբեն Փանոսյանի պաշտպան:

Սակայն կարգապահական խախտման պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետները անցած լինելու պատճառով, նա չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության և այս հիմքով նրա նկատմամբ կարգապահական վարույթը պետք է կարճել հետևյալ պատճառաբանությամբ՝ կարգապահական խախտման պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետները անցած լինելու պատճառով:

Պալատի խորհուրդի որոշմամբ փաստաբան Է.Մայսուրյանի նկատմամբ "Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի և 13-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների խախտման հանգամանքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:"

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 20 հունվարի 2010թ. թիվ 1-ին նիստի թիվ 1/2-Ա Որոշում(Փաստաբան Էդիկ Մայսուրյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին).

Պալատի խորհուրդի 26.11.2009թ. թիվ 30/6-Ա որոշմամբ փաստաբան Էդիկ Մայսուրյանի (արտոնագիր 176) նկատմամբ Կանոնագրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ՝ հիմք ընդունելով ամբաստանյալ Մարիամ Ղարիբյանի դիմում-բողոքը:

Կարգապահական հանձնաժողովը գտել է, որ փաստաբան Էդիկ Մայսուրյանը խախտել է Կանոնագրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի և 13-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, այն է՝ կատարել է փաստաբանի կոչումն ու հեղինակությունը անվանարկող գործողություններ. առանց վստահորդի կամ նրա հարազատի հետ նախապես ունեցած նախնական համաձայնության և պատշաճ ձևով կնքված պայմանագրի, քննիչի հրավերով մասնակցել է Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնի քննիչ Ա.Վանյանի վարույթում քննվող քննչական գործողությունների կատարման ժամանակ: Ստորագրել է Մարիամ Ղարիբյանին՝ որպես մեղադրյալ ներգրավելու, մեղադրյալին իր իրավունքները բացատրելու մասին քննիչի կազմած արձանագրությունները, ինչպես նաև մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ծանուցման մասին արձանագրությունը:

"Փաստաբանության մասին" ՀՀ օրենքի 10-րդ, 39-րդ և 40-րդ հոդվածների, Պալատի կանոնադրության 10.4 կետի 19 ենթակետի և 12.12 կետի պահանջներով.

Պալատի խորհուրդը որոշել է,-"փաստաբան Էդիկ Մայսուրյանին ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի և 13-րդ հոդվածի 4-րդ մասի խախտումների կատարման համար և նշանակել տույժ՝ նկատողություն երեք ամիս ժամկետով և որոշման մասին իրազեկել փաստաբան Էդիկ Մայսուրյանին և դիմողին":

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 09 փետրվարի 2010թ. 3-րդ նիստի թիվ 3/3-Ա Որոշում(Վաղինակ Աթոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին).

Նուբարաշենի ՔԿՀ-ում գտնվող կալանավոր Մարատ Վոլոդյայի Լևոնյանը (այսուհետ՝Դիմող) 17.12.2009թ. դիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատ, համաձայն որի իր վերաբերյալ քննվող թիվ 12132509 քրեական գործի նյութերին ծանոթանալիս հայտնաբերել է փաստաբան Վաղինակ Աթոյանի (այսուհետ՝ Պատասխանող) արտոնագիրը: Ըստ Դիմողի՝ ոչ ինքը, ոչ էլ իր ազգականները

պատասխանողի հետ պայմանագիր չեն կնքել. Վ. Լևոնյանը քննչական գործողությունների չի մասնակցել, իսկ Դիմողը նրա ծառայություններից չի օգտվել: Նախաքննության մարմնի աշխատակիցները հայտարարել են, որ այլ փաստաբանի թույլ չեն տա գործին մասնակցել, այդ իսկ պատճառով Դիմողը հրաժարվել է քննիչի կողմից հրավիրված փաստաբանների ծառայությունից, քանի որ չի վստահել և ստիպված է եղել իրեն պաշտպանել անձամբ, որով խախտվել է նրա պաշտպանության իրավունքը:

Պալատի խորհուրդը 2009 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 32/11-Ա որոշմամբ պալատի անդամ՝ փաստաբան Վաղինակ Աթոյանի (արտոնագիր թիվ 492) նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ:

Պալատի կարգապահական հանձնաժողովի 27.01.2010 թվականի թիվ ԿԳ-09030 եզրակացությամբ առաջարկվել է փաստաբան Վաղինակ Աթոյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող ապացույցներն ու քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող իրավական հիմքերը՝ խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վաղինակ Աթոյանի գործողություններում առկա են Կանոնագրքի 5-րդ հոդվածի, 8-րդ հոդվածի 2-րդ մասի, և 13-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգապահական խախտումներ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով “Փաստաբանության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 10, 39 և 40 հոդվածների, ինչպես նաև Պալատի կանոնադրության 10.4 կետի 19 ենթակետի և Կանոնակարգի 23, 28-30 հոդվածների պահանջներով, Պալատի խորհուրդը որոշել է փաստաբան Վաղինակ Աթոյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության, նշանակել կարգապահական տույժ նկատողության ձևով, երեք ամիս ժամկետով:”

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 18 փետրվարի 2010թ. թիվ 4-րդ նիստի թիվ 4/1-Ա որոշում (Փաստաբան Սուսաննա Մարգարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին).

08.02.2010թ. Պալատում ստացվել է Կոտայքի մարզի Գառնի գյուղի բնակիչ Բորիս Ստեփանյանի դիմումը՝ փաստաբան Ս.Մարգարյանի (արտոնագիր թիվ 447) կողմից դատարան ներկայացրած “Պատասխան-միջնորդություն” անվանված իր կազմած փաստաթղթում թույլ է տվել վիրավորական արտահայտություններ իր, իր կնոջ և իր որդու հասցեին:

Տրված դիմումով մատնանշված փաստական հանգամանքները, խորհրդի գնահատմամբ, առերևույթ վկայում են փաստաբան Ս.Մարգարյանի կողմից Կանոնագրքի 5-րդ հոդվածի, 8-րդ հոդվածի 2-րդ մասի, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետի և 3-րդ մասի 3.1 կետի պահանջների խախտման մասին: Ս.Մարգարյանը, իր կազմած և դատարան ներկայացրած փաստաթղթում, օգտագործել է դատավարության մյուս մասնակցի պատիվն ու արժանապատվությունը վիրավորող արտահայտություններ, ինչով արատավորել է նաև փաստաբանի հեղինակությունն ու բարի համբավը:

Պալատի խորհուրդը գտել է, որ դիմումատուի հաղորդմամբ նշված խախտումների առկայությունը ստուգելու նպատակով, պետք է հարուցել կարգապահական վարույթ:

Ղեկավարվելով Օրենքի 10-րդ և 39-րդ հոդվածների, կանոնադրության 7.2 կետի և 10.4 կետի 19 ենթակետի պահանջներով, Պալատի խորհուրդը որոշել է ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Սուսաննա Մարգարյանի նկատմամբ՝ Կանոնագրքի 5-րդ հոդվածի, 8-րդ հոդվածի 2-րդ մասի, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետի և 3-րդ մասի 3.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցել կարգապահական վարույթ:
ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Հայաստանում գործում է Արդարադատության խորհրդ: Արդարադատության խորհուրդի լիազորությունների մեջ է մտնում նաև դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելը:
2010թ.-ի ընթացքում Արդարադատության խորհրդի կողմից կայացվել են դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին 15 որոշումներ:
Արդարադատության խորհրդի որոշումները օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:
Առավել ուշագրավ է Արդարադատության խորհուրդի կողմից կայացված Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Խանդանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը:
19.02.2010 թվականին Խորհրդի կարգապահական հանձնաժողովը, քննության առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի 18.02.2010 թվականի թիվ Ե-1400 գրությունը, դատավոր Գ. Խանդանյանին հայտարարել նկատողություն՝ զուգորդված վեց ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով:

Դատավոր Գ. Խանդանյանը, քննության առնելով ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննիչի միջնորդությունը թիվ 69100910 քրեական գործով մեղադրյալ Հ. Դավթյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին, 11.02.2010թ.-ի որոշմամբ այն մերժել է, քանի որ ըստ դատավորի առկա չէին հիմնավոր կասկածներ, որ մեղադրյալ Հ. Դավթյանը կատարել է իրեն մեղսագրված հանցանքը:
Վերաքննիչ քրեական դատարանը, բեկանելով ընդհանուր իրավասության դատարանի որոշումը, իր որոշման հիմքում դրել է այն հանգամանքները, որ Հ. Դավթյանն անցնում է Ինտերպոլ ԱԲԿ-ի հաշվառումներով, ավտոմեքենայի զննության արդյունքում հայտնաբերվել է համապատասխան թմրամիջոցը, թեև Հ. Դավթյանը չի ընդունել իրեն առաջադրված մեղադրանքը:
Քրեական գործի նախաքննությամբ հիմնավորվել է, որ Հ.Դավթյանի արարքում բացակայում է հանցակազմը, և այդ պատճառաբանությամբ նրան առաջադրված մեղադրանքը 21.05.2010թ.-ի կայացված որոշմամբ վերացվել է:

Դատավոր Գ. Խանդանյանը Խորհրդին ներկայացրել է միջնորդություն՝ Խորհրդի 26.03.2010 թվականի թիվ ԱԽ-5-Ո-04 որոշումը ճանաչել ուժը կորցրած, կայացնել նոր որոշում և վարույթը կարճել:

Ելնելով վերոգրյալից՝ Արդարադատության խորհրդը որոշել է՝ ուժը կորցրած ճանաչել 26.03.2010թ.-ի թիվ ԱԽ-5-Ո-04 որոշումը և դատավոր Գ. Խանդանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը կարճել:

Ի տարբերություն վերը նշված դեպքի՝ զեկույցում ներկայացվել է նաև “Խաչիկ Հովսեփյանի, Ավետիք Գևորգյանի և այլոց” քրեական գործը, որը նախաքննության ժամանակ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ն. Պողոսյանի կողմից կալանքը երկարացնելու մասին միջնորդությունը քննարկելիս թույլ է տրվել Քրեական դատավարության օրենսգրքի բազմաթիվ հոդվածների կոպիտ խախտումներ: Խախտումների վերաբերյալ Արդարադատության խորհրդին բողոք է ուղղվել, որը մնացել է անհետևանք:
Դատավորների վախը հայտնվել դատախազության “սև ցուցակում” և արդարադատության խորհրդի կողմից նման ոչ հիմնավոր որոշման զոհ դառնալը հանգեցնում նրան որ ներկայացված չհիմնավորված կալանքի միջնորդությունների զգալի մասը անհապաղ բավարարվում է:

Այսպիսով, վերլուծելով կատարված մոնիտորինգի արդյունքները կարելի է հանգել այն եզրակացության որ Հայաստանում դատական համակարգը անկախ չէ: Բացակայում է հավասարության սկզբունքը մեղադրող և պաշտպանական կողմերի միջև, քննիչներն ու դատախազը գերիշխում են դատարաններում: Մեծամասամբ դատարանները դատավճռի կամ որոշման տեսքով կրկնում են դատախազների և քննիչների կայացրած որոշումները: Դատարանների անկախության բացակայության, ինչպես նաև վախի ու անորոշության արդյունք է այն, որ ո՛չ բարեփոխումները, ո՛չ ներդրումները, ո՛չ կոռուպցիայի դեմ ակտիվ պայքարը չեն հանգեցնում ցանկալի գոնե նվազագույն արդյունքների: